

ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՅՈՒ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հ. ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒ



ՀՆԶՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՈՒՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երկրորդ՝ լրացված և մշակված
հրատարակություն



ԵՐԵՎԱՆ 2008

ՀՏԴ 809.198.1
ԳՄԴ 81.2Հ
Ա 791

Խմբագիր՝ Սերգեյ Գալստյան

Ավետիսյան Յու. և Ջաջարյան Հ.
Ա 791 Հայոց լեզու: Հնչյունաբանություն, ուղղախոսություն,
ուղղագրություն: Երկրորդ՝ լրացված և մշակված
հրատարակություն: Եր., – Ձանգակ–97, 2008. – 232 էջ:

*Գիրքը պարունակում է տեսական բացատրություններ,
գործնական առաջադրանքներ և ստուգողական վարժու-
թյուններ հայոց լեզվի հնչյունաբանությունից, ուղղախոսու-
թյունից, ուղղագրությունից:*

*Հասցեագրվում է դպրոցի բարձր դասարանների աշա-
կաններին:*

ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-99941-1-300-2

© «Ձանգակ–97» հրատ., 2008 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Դպրոցի ավարտական նոր քննակարգով մեր կրթական համակարգում արմատավորվում է ստուգման հարցարանային (թեստային) եղանակը: Մինչդեռ մեր մանկավարժների զինանոցում, գործող դասագրքերում և ձեռնարկներում գերիշխում են ավանդական ոճով կազմված վարժություններն ու առաջադրանքները, որոնք ավելի շատ ուսուցողական, քան ստուգողական բնույթ ունեն: Բացի այդ, 4-րդ դասարանում հնչյունաբանություն և ուղղագրություն անցած աշակերտը դպրոցի ավարտական քննության պատրաստվելու գրեթե այլ հնարավորություն չունի, քան ինքնուրույն պարապմունքները, քանի որ տասնամյա կրթության առայժմ գործող ծրագրերով՝ «Հայոց լեզու» առարկայի այդ բաժիններին հաջորդ դասարաններում բավարար անդրադարձ այլևս չի նախատեսվում:

Նոր՝ հարցարանային եղանակի ներդրմանը նպաստելու, «Հայոց լեզու» առարկայից գործնական պարապմունքներ անցկացնող ուսուցչին և ինքնուրույն պարապող աշակերտին այդ եղանակով մշակված լրացուցիչ նյութեր տրամադրելու նպատակ ունի սույն ձեռնարկ-ժողովածուն:

Գրքույկի առանցքային բաժինը ստուգողական վարժություններն են: Դրանց նախորդում է տեսական նյութի համառոտ շարադրանքը՝ գործնական բնույթի բացատրություններով, ցուցումներով, հրահանգներով: Ամեն ենթաբաժին ավարտվում է ուսուցողական վարժություններով, որոնք նույնպես մեծ մասամբ հարցարանային եղանակով են կազմված:

Ձեռնարկին կցված է ուղղագրական առավել դժվարություն ներկայացնող բառերի ցանկ, որն ընդգրկում է նաև մեծատառերի

գրության հետ կապված և միասին, միության գծիկով կամ անջատ բաղադրիչներով գրվող մոտ 1000-ական բառ կամ բառակապակցություն:

Բառացանկի ընդհանուր ծավալն է գրեթե 3400 բառ կամ բառակապակցություն:

Մեկ տարվա կիրառությունն ու փորձարկումները հեղինակներին հնարավորություն տվեցին վերամշակելու ծեռնարկը, հարստացնելու ստուգողական առաջադրանքների տեսականին և մեծացնելու դրանց քանակը, ընդլայնելու ուղղագրական բառացանկը՝ ներառելով նաև մեծատառերի և միության գծիկի գրությանն առնչվող բառեր ու բառակապակցություններ:

Չեռնարկը կիրառողների արձագանքները կազմողներին կօգնեն կատարելագործելու այն:

Դիտողությունների, առաջարկությունների, ինչպես նաև խորհրդատվության համար դիմել «Տաթև գիտակրթական համալիր»՝ հետևյալ հասցեներով.

Երևան, Կոմիտասի 49/2

info@zangak.am

ՀԼՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեզուն միջոց է, որով մարդիկ միմյանց հետ խոսում են, իրար փոխանցում իրենց մտքերը, զգացմունքները, հույզերը, ցանկությունները: Դա կոչվում է հաղորդակցություն:

Լեզվի կիրառությունը խոսքն է:

Խոսքը կազմված է նախադասություններից, նախադասությունը՝ բառերից, բառը՝ հնչյուններից: Դրանք խոսքի՝ լեզվի միավորներն են:

Լեզվի հնչյունների, ինչպես նաև վանկի, շեշտի, հնչյունափոխության ուսումնասիրությամբ զբաղվում է **հնչյունաբանությունը**, որը լեզվաբանության բաժիններից մեկն է:

Հնչյունաբանությունը կապված է նաև ուղղագրության և ուղղախոսության հետ:

Հնչյուն և տառ

Հնչյունները լեզվի նյութական նվազագույն միավորներն են: Դրանք ինքնին նշանակություն չունեն, սակայն ծառայում են որպես միջոց իմաստակիր միավորներ, օրինակ՝ բառեր կազմելու համար: Այսպես՝ Հայաստան բառն արտաբերվում է ութ հնչյունների միջոցով՝ Հ, ա, յ, ա, ս, տ, ա, ն: Այս հնչյունները չենք կարող բաժանել ծայնային ավելի փոքր միավորների:

Տառերը հնչյունների սլայմանական նշաններն են գրավոր խոսքում:

Հայերեն այբուբենի յուրաքանչյուր տառ նշանակում է մեկ հնչյուն, և յուրաքանչյուր հնչյուն արտահայտվում է մեկ տառով: Սակայն մի քանի հնչյունների և տառերի դեպքում այդ համապատասխանությունը խախտվում է:

Օրինակ՝ ժամանակակից հայերենում **օ** հնչյունի համար ունենք **օ** և **ո** տառերը, է հնչյունի համար՝ **է** և **ե** տառերը: Մյուս կողմից՝ բառասկզբում **ո** և **ե** տառերը կարող են արտահայտել երկուական հնչյուն՝ **վօ** և **յե**, ինչպես՝ **ոգի-վօգի**, **երածիշտ-յերածիշտ**: Իսկ և տառը մեկ առանձին հնչյունի չի համապատասխանում և արտահայտում է կամ երեք՝ **յեվ** (**նաև-նայել**), կամ երկու՝ **ել** (**կարևոր-կարելոր**), հնչյուններ:

Երբեմն էլ տառը գրվում է. սակայն չի արտասանվում (աշխարհ, շնորհեյ), հաճախ էլ հնչյունը չի գրվում, բայց արտասանվում է (**Մըկըրտիչ**, **կըկու**):

Այդ պատճառով արդի հայերենում տառերը և հնչյունները բառի մեջ կարող են քանակով իրար չհամապատասխանել: Օրինակ՝ **Ձվարթնոց** բառի մեջ ունենք 8 տառ, բայց 9 հնչյուն (արտասանվում է **Ձ ը վ ա թ ն օ ց**), **նաև** բառի մեջ՝ 3 տառ, 5 հնչյուն (արտասանվում է **ն ա յ է վ**), **երգիչ** բառի մեջ՝ 5 տառ, 6 հնչյուն (արտասանվում է **յ է թ գ ի չ**), **կայսր**՝ 5 տառ, 6 հնչյուն (արտասանվում է **կ ա յ ս ը ր**), **աշխարհ**՝ 6 տառ, 5 հնչյուն (արտասանվում է **ա շ խ ա ր**) և այլն:

Մի շարք բաղաձայն հնչյուններ տարբեր դեպքերում գրվում են տարբեր տառերով (**լա/ստ** և **բողկ**, տու**ֆ** և հարա**վ**, գրի**չ** և վեր**ջ**, կա**թ** և վար**դ**), հետևաբար բաղաձայն նշանակող որոշ տառեր մի քանի դեպքերում տարբեր հնչյունների գրային նշաններ են դառնում (**վարդ** և **դուռ**, **օծ** և **ծև**, դարթին և լթի, կարգին և գին, արջուկ և քուր):

Վարժություններ

1. Արտագրեք տրված բառերը՝ բաց թողաձները լրացնելով այնպիսի տառերով, որ յուրաքանչյուր դեպքում ստացվի ոչ պակաս, քան երկու նոր բառ:

ա. Վա...ք, բար... ..երան, հա...ել, եր..., հար..., ա...ատ, բա...ակ, կար..., հա...ուստ, արդարել, երե..., պա...ել, ...յուղակ, ...ատակ:

բ. Հան... շարժու... հ...ում, երգա...ան, անգի... հու...ական, քեր...ել, ան...ավ, ...երել, վա...ել, ծա...կել, մածու..., հա...ակ:

Օրինակ՝ գիր... - գիրք, գիրկ, գիրգ:

2. Նշեք, թե քանի հնչյուն և քանի տառ կա տրված բառերում:

ա. Դուստր, գնալ, բարև, երագ, նվեր, տզգալ, հարևան, հյուղակ, շախարհ, կտկտալ:

բ. Արև, նայել, հրաշք, կարևոր, նկատել, կտրտել, մանրել, Հովհաննես, դուստրեր:

Օրինակ՝ նայել – 5 տառ, 5 հնչյուն, դուստր – 5 տառ, 6 հնչյուն:

Հնչյունների տեսակները. հայերենի ծայնավոր և բաղաձայն հնչյունները

Հաղորդակցման գործընթացում մարդու արտաբերած հնչյունները արտաշնչվող օդի պարբերական և ոչ պարբերական տատանողական շարժման արդյունք են: Ըստ որում, պարբերական տատանումները (պիրկ ձգված ծայնավորները թրթռում են) ընկալվում են որպես ծայն, ոչ պարբերականները (բերանի խռոչում առաջանում են փակվածքներ կամ նեղվածքներ)՝ աղմուկ:

Անցնելով բերանային արձագանքարանով՝ ծայնի և աղմուկի տատանողական հաժախականությունների մի մասն ուժեղանում է, մյուս մասը՝ թուլանում: Որպես արդյունք՝ ըստ ծայնի և աղմուկի հարաբերության՝ ստացվում են **չորս կարգի** հնչյուններ.

ա. մաքուր ծայնային հնչյուններ (մարդկային բնականոն լսողությունը սրանց աննշան աղմուկը չի ընկալում).

բ. հնչյուններ, որոնց մեջ ծայնը գերակշռում է աղմուկին.

գ. հնչյուններ, որոնց մեջ աղմուկն է գերակշռում ծայնի նկատմամբ.

դ. մաքուր աղմկային կամ անծայն հնչյուններ:

Առաջին խմբի հնչյունները **ծայնավորներն** են, մյուս երեք խմբերինը՝ **բաղաձայնները**: Հայերենի ծայնավոր հնչյունները վեցն են՝ ա, է (ե), ը, ի, օ (ո), ու, բաղաձայն հնչյունները՝ երեսունը՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ու, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ:

Ըստ ծայնի և աղմուկի պարունակության՝ ժամանակակից հայերենում բաղաձայնները լինում են **ծայնորդ** (բ խումբ), **ծայնեղ** (գ խումբ), **խուլ** (դ խումբ):

Վ խոսքի ունեցողներն իրենց հերթին բաժանվում են երկու ենթախոսքի՝ պարզ խոսքեր և շնչեղ (իրենց մեջ շունչ՝ հազագ, ունեցող) խոսքեր:

Չափնորդ բաղաձայններ՝ **լ, մ, ն, ր, ռ, յ:**

Չափնել բաղաձայններ՝ **բ, գ, դ, ձ, ջ, վ, դ, զ, ժ:**

Խոսք բաղաձայններ՝ **պ, կ, տ, ծ, ճ, փ, ք, թ, ց, չ, ֆ, խ, ս, շ, հ.**

Շնչեղ խոսքեր՝ **փ, ք, թ, ց, չ,**

պարզ խոսքեր՝ **պ, կ, տ, ծ, ճ, ֆ, խ, ս, շ, հ:**

Վարժություններ

3. Նշված բառաշարքերից ընտրե՞ք երեքական բառ, որոնք՝

ա. սկսվում են ձայնորդ բաղաձայնով՝ *բարև, նամակ, կերպար, դասընկեր, ծյուն, տանիք, ծաղիկներ, բարակ, լուսավոր, բույս.*

բ. սկսվում են ձայնեղ բաղաձայնով և ավարտվում ձայնորդով՝ *բերել, դասասենյակ, բարկ, լուր, ծայն, ջուր, հույս, ելնել, վախ, սանձ.*

գ. սկսվում են ձայնեղ բաղաձայնով և ավարտվում խուլով՝ *հրավառություն, իննսուն, բանակ, հասցե, վախ, ծն, դպրոց, ունուցիչ, ծոծուլ, գնդասել.*

դ. սկսվում և ավարտվում են խուլ բաղաձայնով՝ *հնարել, սեղան, ծաղկաման, գնդակ, խաղաղ, շունչ, կերոն, խաղ, պարկ, տառելի.*

ե. սկսվում են պարզ խուլ բաղաձայնով, ավարտվում շնչեղ խուլով՝ *կառք, խաչ, ծանոթ, հանդիպում, կատակ, պնակ, վարիչ, հոսել, գեղմ, խաղալ:*

4. Արտագրե՞ք և տրված բառերում ընդգծե՞ք հինգական տառեր, որոնք նշանակում են՝

ա. պարզ խուլ բաղաձայն՝ *նվաճում, գեղեցիկ, լուսամուտ, արջ, պարզ.*

բ. ձայնորդ բաղաձայն՝ *հազվադեպ, առհավետ, այգի, համալիր, վիպակ.*

գ. շնչեղ խուլ բաղաձայն՝ *ժամանց, քաղհան, աչագեղ, սափոր, արթուն.*

դ. ձայնեղ բաղաձայն՝ *համբերել, ազահ, ազնիվ, անջրանցիկ, հանդեր:*

ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գրության և արտասանության վերոհիշյալ մասնակի անհամապատասխանության հետևանքով առաջ են գալիս ճիշտ գրելու և գրվածը ճիշտ կարդալու որոշ դժվարություններ: Դրանք հաղթահարելու համար սահմանված են գրության և արտասանության կանոններ:

Տարբեր մարդիկ բառերը կարող են արտասանել տարբեր կերպ: Բայց կան արտասանական ընդհանուր կանոններ, որ պարտադիր են բոլորի համար: Դրանք ուղղախոսական կանոններն են:

Ուղղախոսությունը ուղիղ կամ ճիշտ խոսելու, ինչպես նաև գրվածը ճիշտ կարդալու կանոնների ամբողջությունն է:

Հայերենի ուղղախոսությունը որպես ընդհանուր միտում ձգտում է նվազեցնելու գրության և արտասանության տարբերությունները հոգուտ գրության:

Ուղղագրությունը ճիշտ գրելու կանոնների ամբողջությունն է:

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ը-ի արտասանությունը և ուղղագրությունը

1. Բառասկզբում արտասանվող ը հնչյունը գրվում է միայն **ղ, մ, ն** բաղաձայններից առաջ, ինչպես՝ ընկել, ըղձալի, ըմպանով, ընտանիք, ընդունակ, ինչպես նաև լուս թառում:

2. Սկ, ստ, տպ, շտ, գգ, գբ, սփ և նման հնչյունակապակցություններից առաջ թույլ կամ ուժեղ հնչվող **ը-ն** չի գրվում, ինչպես՝ *սկսել, *ստեղծել, *սպասել, *շտապել, *գգուշանալ, *գբաղվել, *սփոփել:

Ծանոթություն: Եթե շտ, գտ, սպ, սկ և նման կապակցությունները տառադրվել են նրանց միջև եղած ի կամ ու ծայնավորների հնչյունափոխությունից, ապա ը հնչյունը արտասանվում է ս, գ, շ հնչյուններից հետո: Արխնակ՝ սուտ-սըտեկ, շիտակ-շշտկեկ, գուտ- գըտեկ:

3. Գրվող ը-ով սկսվող բառերի ուղղագրությունը նույնությամբ պահպանվում է բաղադրյալ կազմությունների մեջ՝ անլրնությունով պարբերակներ, գործընկեր, ինքնըստիմյան, արագընթաց:

4. Բառամիջում ը հնչում է նաև երկու և ավելի բաղաձայնների որոշ կուտակումների միջև՝ դյուրացնելով դրանց արտասանությունը, օրինակ՝ **գըտնըվել, մընալ, վըկա, վըճարել, ջըրհոս, նըստել, կըռիվ, կայսըր, դուստըր, արկըղ, անգըղ, ճըռճըռալ:**

Այդ ը-ն գրվում է միայն այն դեպքում, եթե բառի մեջ ուրիշ գրվող ծայնավոր չկա՝ Մուլը // Մըսը, շըխկ, թըխկ, թըրխկ, դըրխկ:

5. Բառավերջում ը հնչյունը գրվում է, երբ արտասանվում է՝ **Հակոբը, գիրքը, ինը, տասը, սատը, դատը, ինքը, ոչ մեկը, ամենքը, ընդհակառակը, ընդամենը և այլն:**

Ծանոթություն 1: Ճիշտ չէ որոշ քանակական թվականների՝ ավելորդ ը-ով արտասանությունը, այսպես՝ ոչ թե **հինգը, վեցը, յոթը, ութը**, կամ՝ **տասնըերեք, քսանըերկու, հիսունըհինգ, քառասունըչորս**, այլ **հինգ, վեց, յոթ, ութ**, կամ՝ **տասներեք, քսաներկու, հիսունհինգ, քառասունչորս** և այլն:

Ծանոթություն 2: Հնչվող, բայց չգրվող ը-ն կարող է գրվել բառի վանկատման և տողադարձի ժամանակ: Օրինակ՝ **Մը-կըղ- տիչ, մա-նըր, ըս-կը-սել:**

Ծանոթություն 3: Չափածո գրվածքներում երբեմն ը-ն գրվում է տաղաչափական նպատակներով.

Ո՛հ, ինչ անուշ և ինչպես գով
Առավոտուց փռչես, հովիկ,
Ծաղկանց վըրա գուրգուրալով
Եվ մազերուն կուսին փափկիկ:
Բայց չես հովիկ իմ Հայրենյաց,
Գընա, անցիր սըրտես ի րաց:

(Ս. Պեշիկթաշյան)

Մի հավք զարկի ես մի օր
Թըռավ, գընաց վիրավոր:
Թըռչում է միշտ իմ մըտքում
Թնը արնոտ ու մոլոր:

(Հ. Թումանյան)

Ծանոթություն 4: Գաղտնավանկի ը-ն երբեմն գրվում է ավանդական հայկական կամ օտար արտասանությունը ապահովելու նպատակով, օրինակ՝ Այտընյան, Հաճըն, Բրայըն:

Ծանոթություն 5: Չգրվող ը-ն որոշ բառերում կարող է ոչ ճիշտ տեղում հնչվել: Օրինակ՝ գըտընվել՝ փոխանակ գըտնըվել: Այդպիսի սխալի տեղիք տվող բառերից են նաև՝ հագնըվել, խըռնըվել, խառնըվածք, բըզկըտվել, կըծմըթել, օրհնըվել, գըծղըմնել, ընկըծվել, պըտըտվել, ծըխըլվել, դըռընբաց, ձեռընտու, ձեռընբաց, ձեռընհաս և այլն:

Վարժություններ

5. Տրված բառաշարքից դուրս գրեք այն հինգ բառերը, որոնցում արտասանվում է չգրվող ը ձայնավորը:

Համրանալ, դեղնավուն, բարձրանալ, տասներկու, մտածել, քառասունվեց, հյուսն, թպրտալ, աննկատ, կայսրուհի, միջնաբերդ, Շեքսպիր, կայսր:

6. Ո՛ր օրինակներում է գաղտնավանկի ը-ն ճիշտ տեղադրված: Արտագրեք բառաշարքերը և համապատասխան տեղում դրեք + կամ – նշանը:

խըմբըվել	խըմբվել	ձեռնըտու	ձեռընտու
տըրտմել	տըրտըմել	հայտընվել	հայտնըվել
գըտնըվել	գըտընվել	գըրկըվել	գըրկվել
փըրկըվել	փըրկվել	ընկըծվել	ընկծըվել
բըզկըտել	բըզըկտել	խընդըրել	խընդրել
կըծմըթել	կըծմթել	ծըռծռալ	ծըռծըռալ
հագնըվել	հագընվել	դըռընբաց	դըռնըբաց
ձեռնըբաց	ձեռընբաց	ծըխըլվել	ծըխըլվել

Օրինակ՝ խըմբըվել – խըմբվել +:

7. Արտագրեք տրված բառերը և բառաձևերը՝ անհրաժեշտ տեղերում լրացնելով ը տառը:

ա. Ակ...նբախ, ամենա...նդունակ, այլ...նտրանք, ան...նդիատ, առ...նթեր, գահ...նկեց, գիրկ...նդիառն, գործ...նկեր, գույն...զգույն,

երկ...նչել, զուգ...նթաց, թ...ր...խկ, լուս...նկա, հյուր...նկալ, ձեռ...նտու, ձեպ...նթաց, չ...նդունել:

բ. Ակ...նդետ, ամենա...նդունելի, ան...նդմեջ, գործ...նթաց, դաս...նկեր, դյուր...մբռնելի, երկ...նտրանք, թ...խկ, խոչ...նդոտ, կոր...նթարդ, համ...նթաց, հատ...նտիր, մերթ...նդմերթ, չ...նկծվել, չ...րխկոց, վեր...նծյուղվել:

գ. Ակ...նթարթ, ամենա...նտիր, ան...մբռնելի, ան...նդունակ, դաս...նթաց, ինքն...ստինքյան, համ...նկնել, ձ...կնկիթ, մեջ...նդմեջ, մթ...նկա, մթ...նշաղ, նախ...նտրել, որոտ...նդուտ, չ...ր...խկ, չ...մբռնել, սր...նթաց, օր...ստօրե:

դ. Անակ...նկալ, ան...նդունելի, արագ...նթաց, ան...նտել, առ...նչվել, դյուր...նթեռնելի, խաղ...նկեր, խոյ...նթաց, հետ...զհետե, մակ...նթացություն, շ...ր...խկալ, չ...նդդիմանալ, չ...նկնել, վեր...նթաց, քար...նկեց, օր...նդմեջ:

8. Ո՛ր շարքի բոլոր բառերում է գրվում ք:

ա. Ակ...նբախ, ան...նդունակ, չ...նթերցել, չառ...նչվել, կ...նկծեն, վ...շոց, թ...խկ, նախ...նթաց:

բ. Չ...նդունել, լուս...նկա, վայր...նթաց, գործ...նկեր, շր...խկոց, մակ...նթացություն, հատ...նտիր, ինքն...ստինքյան:

գ. Խոչ...նդոտ, ան...մբռնելի, օր...ստօրե, շր...խկ, նոր...նտիր, հյուր...նկալ, ան...նդդիմադրելի, տաս...:

դ. Սր...նթաց, մերթ...նդմերթ, առ...նթեր, չ...նտրել, խաղ...նկեր, ան...նդունելի, երկ...նտրանք, ակ...նթարթ:

9. Քանի տառ և քանի հնչյուն են պարունակում հետևյալ բառերը:

ա. Բզկտել, շշնջալ, կտկտոց, ծանր, բարձր, գրգռել, կիիշեն, մտմտալ:

բ. Ննջել, տրտնջալ, վկա, թթվել, կկարդա, մնալ, հուրհրալ, նվագ:

գ. Խռնվել, ձեռնբաց, մանր, որսորդ, երեխա, մտածել, կկոցել, Մկրտիչ:

դ. Կորնթարդ, լուսնկա, անակնկալ, ննջել, սրամիտ, անվնաս, անգղ:

ե. Շնկշնկոց, փշրվել, շտկվել, ծոռված, անվստահ, ակնթարթ, մթնկա:

Օ-ի և ո-ի արտասանությունը և ուղղագրությունը

1. Բառասկզբում **օ** հնչյունը գրվում է **օ** տառով, օրինակ՝ օդուհույ՝ օդուտ, օրումն, Օշական, օլար՝ օտար, օրինակ, Օհան, օձ:

Բացառություն են ով և դրանից կազմված ուրբեր ուլի՝ ուլկիցն, բառերը, որոնց սկզբում արտասանվում է **օ**, բայց գրվում է **ո** տառը:

2. Օ-ով սկսվող բառերի ուղղագրությունը նույնությամբ պահպանվում է բաղադրյալ կազմությունների մեջ, ինչպես՝ համրօգտու, անօգտավար տպօրինի, կեսօր, բնօրսան, ոսկեօձ, անօրինակ, անօթման, չօգնեկ, կօզման:

3. Մյուս բոլոր դեպքերում բառամիջում և բառավերջում **օ** արտասանվելիս գրվում է **ո** տառը՝ բոլոր, հոսանք, կողմնորոշվել, պահածո, երեկո, գողոն:

4. Բառասկզբում **վօ** արտասանվելիս գրվում է **ո**, օրինակ՝ որունք, Ոգովան՝ ու, որակ, որոշիչ:

Բացառություն են օտար լեզուներից վերցված մի շարք նոր բառեր, որոնց սկզբում **վօ** արտասանվելիս գրվում է **վո**, օրինակ՝ վարկերով վաճառ, վարչա, վարկով, վարձեր, վարպետ:

Այս բացառությունը չի տարածվում հնում փոխառված բառերի վրա, օրինակ՝ Ողբական, օղբասեր, Որմիշիկ:

5. Եթե բաղադրյալ բառերում **ո**-ով սկսվող բաղադրիչին նախորդում է ծայնավոր, ապա **ո**-ն արտասանվում է **վօ**՝ արջաորս (արջավորս), ամենաորակյալ (ամենավորակյալ), ամենաորոշակի (ամենավորոշակի), բարձրաոձ (բարձրավոձ), իսկ եթե նախորդում է բաղաձայն, ապա **ո**-ն արտասանվում է **օ**՝ արջօրս (արջօրս), բարձրօրակ (բարձրօրակ), բազմօտանի (բազմօ-

տանի), կողմնորոշում (կողմնորոշում), անորոշ (անօրոշ), անորակ (անօրակ):

Ծանոթություն: Բառասկզբի կ և չ մասնիկներից հետո ո-ն այսօր հաճախ արտասանվում է ոչ թե օ, որը գրական լեզվի կանոնն է, այլ վօ, քանի որ հաջորդում է ձայնավորի. հանդես է գալիս կը և չը հնչվող մասնիկներից հետո, ինչպես՝ կ(ը)վօրոշի, կ(ը)վօզևորի, կ(ը)վօրոտա, կ(ը)վօրակի, կ(ը)վօրոնի, կ(ը)վօրսա, կ(ը)վօստնի, կ(ը)վօրոճա, չ(ը)վօրոշի, չ(ը)վօրոտա, կ(ը)վօրակի, չ(ը)վօրոնի, չ(ը)վօրսա, չ(ը)վօստնի, չ(ը)վօրոճա: Վօ արտասանվելիս չի աղավաղվում հիմք բառի արտասանական պատկերը: Հիշենք նաև, որ հին ուղղագրությամբ կը և չը մասնիկները գրվել են դերբայական ձևերից առանձին՝ կը որոշեմ, չը ողջունեն, կը ողջունեն և այլն:

Ներկայումս ո-ն գրական լեզվի խոսակցական տարբերակում հաճախ վօ է արտասանվում նաև ան- նախածանցով մի շարք բառերում, ինչպես՝ անողնաշար // անվօղնաշար, անորոնելի // անվօրոնելի, անողջամիտ // անվօջամիտ, անոխակալ // անվօխակալ, անոտնահարելի // անվօտնահարելի, անորոգայթ // անվօրոգայթ:

Վարժություններ

10. Արտագրեք տրված բառերը՝ նշելով, թե ինչպես է արտասանվում ընդգծված ո տառը՝ վօ, թե օ:

Բախտորոշ, ամենաոթակյալ, տարորոշել, ովքեր, Ոդիսևս, աներորդի, կողմնորոշել, հատորյակ, ոտք, հմտորեն, վատորակ, արջաոթս, կետորսանավ, ենթաոճ, վերաորակավորում, լեզվաոճական:

Օրինակ՝ բախտորոշ – օ:

11. Տրված բառերից արտագրելով առանձնացրեք այն վեց բառերը, որոնցում ընդգծված ո-ն արտասանվում է օ:

Սարդոստայն, նրբաոճ, քեռորդի, բարձրորակ, բազմոտանի, հնաոճ, ամենաոթակյալ, բարորակ, արջորս, ամենաողորկ, վերաոգեկոչել:

12. Տրված բառերից արտագրելով առանձնացրե՛ք այն վեց բառերը, որոնցում ընդգծված *ո*-ն արտասանվում է *փ*օ:

Տարորոշել, բնորոշ, անողորմ, ընդոստ, Ողական, անորակ, ծակատուսկր, հմտորեն, աներորդի, ենթաորովայնային, ձկնորս, արջաորս, բարձրառձ, հոգեորդի, բարձրորակ, ուվքեր, որ:

13. Արտագրե՛ք տրված բառերը և բառաձևերը՝ բաց թողած տեղերում լրացնելով *օ* կամ *ո* տառը:

ա. Ականջ...դ, ամեն...րյա, այդ...րինակ, այս...ր, անդ...րություն, ան...թ, ան...ղնաշար, ան...ղոք, ան...րակ, ան...գտակար, ապ...րինի, բարձր...րակ, բար...րություն, գիշերուզ...ր, դեղնազ...ծ, երկար...րյա, եղբոր...րդի, հն...րյա, քնքշ...րեն, ...թոց, օրըստ...րե, օր...ցք:

բ. Աման...ր, ամենա...րակյալ, ան...դ տարածություն, ան...րսալի, ան...թևան, առ...րեական, արագ...տն, արծաթազ...ծ, արջա...րս, բն...րրան, գանգ...սկր, գիշեր...թիկ, երկվ...րյակ, ընդ...րինակել, թիկն...թոց, թռչն...րս, լացուկ...ծ, յուր...րինակ, վատ...րակ:

գ. Ան...րինակ, արևազ...ծ, բար...րակ, եռ...րյա, հնա...ծ, հնգ...րյակ, հ...տնկայս, հրան...թ, ծռվ...լյուն, մեղմ...րեն, մեղմ...րոր, միջ...րե, նման...րինակ, նորա...ծ, շոր...րալ, ...ղորկ, ոսկեզ...ծ, ...վ, ...րբանոց, չ...զնել, պնդ...ղակ, սև...րակ:

դ. Աման...րյա, ան...գուտ, խաղաղ...վկիանոսյան, կես...ր, հակա...ղային, հատ...րյակ, հ...գուտ մեզ, հողմակ...ծ, հ...դս ցնդել, նախ...րոք, ոսկե...դ, ...տանավոր, չար...րակ, չ...գտվել, պարզ...րոշ, վաղ...րոյան, քեռ...րդի, ...դապարիկ, ...թյակ:

ե. Ան...րեն, առ...րյա, բաց...թյա, զ...րուգիշեր, կիրակն...րյա, կրկն...րինակ, հանապազ...րյա, հանր...գուտ, հ...գս, միջ...րեական, մի...րինակ, նախ...րե, չ...գտագործել, ջր...րինեք, սառն...րակ, վառ...դ, տար...րիոշել, տն...րեն, փղ...սկր, ...դանավ, ...րրան:

զ. Արփիազ...ծ, հակա...րինական, հայ...րդի, նոր...րյա, նրբ...րեն, շաբաթ...րյակ, ...վքեր, չ...գևորել, վաղ...րդայն, վաղ...րոք, տ...թ, տար...րինակ, տափ...ղակ, ցածր...րակ, փ...դ, փորձան...թ, փոխ...զնություն, ...թևան, ...վկիանոս, օրեց...ր, օր...րոց:

Է-ի և ե-ի արտասանությունը և ուղղագրությունը

1. Բառասկզբում է հնչյունը գրվում է տառով, օրինակ՝ էջ, էջմիածին, էրեբունի, էակ, է, էյ, էյր, էր, էինք, էյք էյն, էջանիք, էութամ:

Այս ընդհանուր կանոնից շեղվում են օժանդակ բայի եմ ես ենք, եք, են ձևերը, որոնցում արտասանվող է-ն գրվում է ե տառով:

2. Է-ով սկսվող բառերի ուղղագրությունը նույնությամբ պահպանվում է բաղադրյալ կազմությունների մեջ, ինչպես՝ ամենամեկուն, ամենամեկ կենց, վայելք, մանրեւթուն, ինչնէ, որուն, նէկ, չէինք, կէտեմ:

3. Մյուս բոլոր դեպքերում բառամիջում և բառավերջում է արտասանվելիս գրվում է **ե՝ հենակետ, քրիստոնեական, սենյակ, մեկնել, գրկել, սեղան, հեղինակ, ուտել, նախօրե, միջօրե, որկիցե, թե, եթե, գրեթե, փայտե:**

4. Բառասկզբում յէ արտասանվելիս գրվում է **ե, օրինակ՝ ելք, եկամուտ, եկեղեցի, ենթակա, եռյակ, երեխա, երթ, երևան, եվրոպա:**

5. Եթե բաղադրյալ բառի մեջ ե-ով սկսվող բաղադրիչին նախորդում է ծայնավոր, ապա ե-ն արտասանվում է **յէ՝ ամենաերկար (ամենայերկար), կիսաեզրափակիչ (կիսայէզրափակիչ), ինքնաեռ (ինքնայէռ), համաեվրոպական (համայէվրոպական), իսկ եթե նախորդում է բաղաձայն, ապա ե-ն արտասանվում է է՝ տասներեք (տասներեք), աներես (անէրես), իններորդ (իննէրորդ), արևելք (արևէք) և այլն:**

Ծանոթություն: Բառասկզբի կ և չ մասնիկներից հետո ե-ն այսօր հաճախ արտասանվում է ոչ թե է, որը գրական լեզվի կանոնն է, այլ յէ, քանի որ, ինչպես ո-ի արտասանության հետ կապված նշվել է, ե-ն հաջորդում է ծայնավորի. հանդես է գալիս կը և չը հնչվող մասնիկներից հետո, ինչպես՝ կ(ը)ենթադրի, կ(ը)երագի, կ(ը)երգի, կ(ը)երկարացնի, կ(ը)ենթարկվի, կ(ը)ելնի, կ(ը)երեբան, կ(ը)եռա:

Ներկայումս ան– նախաձանցով առանձին բառերում ե–ն ունի երկակի արտասանություն՝ է և յէ, ինչպես՝ անյէկամտաբեր // անէկամտաբեր, անյէրևակայելի // անէրևակայելի, անյէնթաղրելի // անէնթաղրելի, քսանյէրեք // քսանէրեք, երեսունյէրեք // երեսունէրեք, հիսունյէրկու // հիսունէրկու:

Վարժություններ

14. Արտագրեք տրված բառերը՝ նշելով, թե ինչպես է արտասանվում ընդգծված ե տառը՝ է, թե յէ:

Հորեղբայր, անեզր, անելանելի, աներկյուղ, ինքնաեռ, անեփ, տասներկու, արևմտաեվրոպական, ամենաերկար, մենեքզ, տարերային, քսաներեք:

Օրինակ՝ հորեղբայր – է:

15. Տրված բառաշարքից ընդգծելով առանձնացրեք հինգ բառ, որոնցում թավ նշված ե տառը արտասանվում է է:

Համերկրացի, աներևութանալ, համաերևանյան, տասներեք, աներես, համաեվրոպական, ամենաեկամտաբեր, խաչեղբայր:

16. Լրացրեք բաց թողած տառերը: Ստացված բառերը կարդացեք բարձրաձայն. ինչպես պետք է արտասանել՝ է, թե ե:

Վեր...լք, գետ...զր, ան...րևակայելի, բազմ...րանգ, զարկ...րակ, ուղ...րթ, համ...րգ, ան...լանելի, մոր...ղբայր, ան...կամտաբեր, քսան...րկու, ծով...զերք, ան...րես:

17. Արտաձրեք տրված բառերը՝ բաց թողած տեղերում լրացնելով է կամ ե:

ա. Այժմ...ական, ամենա...ական, ան...րկյուղ, առ...րևույթ, առ...ջ, բազկ...րակ, գետ...զր, գոմ...շ, դող...րոցք, ել...ջ, եղ...րերգ, երբև... էլեկտրա...ռակցել, ինչևից..., հն...աբան, մանր... նախօր... որև... չ...ն, չ...իր, չ...ինք, ստոր...րկրյա, Բանաճշտի...ի:

բ. Ան...րևույթ, ...ական, էլեկտրա...ներգիա, ...ջմիածին, ինչև...
լայն...զր, խուռն...րամ, ծով...զր, կիսա...փ, հր...շ, մանր...աբան, մ...ջք,
միջօր..., նոր...կ, նրբ...րանգ, ողբ...րգակ, որևից... չ...ի, պատն...շ,
ջ...կ, վեր...լակ, տի...գերք, ցայգ...րգ:

գ. Ան...րևակայելի, ան...ական, աշտ..., առ...րես, առօր...ական,
բազմ...րանգ, գրեթե... երբևից..., երփն...րանգ, ...ակ, լայն...կրան,
նրբ ըշիկ, չ...ր, պաշտոն...ական, Սևանհ...կ, վայր...ջք, Վարդգ...ս,
վեր...լք, վեր...րկրյա, ց...րեկ:

**18. Վերը տրված բառաշարքերից առանձին խմբերով
դուրս գրեք բոլոր այն բառերը, որոնք՝**

ա. վերջանում են է տառով.

բ. սկսվում են է տառով.

գ. բառամիջում ունեն է տառ:

Ու-ի ուղղագրությունը

Ու հնչյունը հայերենում միակն է, որ գրվում է միաժամանակ
երկու տառով՝ ո +ւ։ Այդ երկու տառերից ծայնավոր նշանակող
տառը ո-ն է։ Հետևաբար առողանական նշանները գրվում են դրա
վրա՝ ինչու, ուր, ում, վույ, վուշ-վուշ, թու, եղում, տուր, հարցրու
և այլն:

Երբ բառի միայն առաջին տառն է գրվում մեծատառով, բա-
ռասկզբի ու-ն ունենում է Ու տեսքը՝ Ու+ւ՝ Ուրուգլայ, Ուկրոինա,
Ուրմիա լիճ, Ուտիք Ուղատառ, «Ուրբաթագիրք», Ուրան մոլորակ
և այլն:

Երբ ամբողջ շարադրանքն է գրվում մեծատառերով (գլխատա-
ռերով), բոլոր ու-երը ունենում են ՈՒ տեսքը՝ Ու+Ւ՝ ՈՒՄՈՒԳՎԱՅԻ
ՆՈՒՐՈՒՆՏՈՒԹՅՈՒՆ, ԱՌԱՆ ԲԱԿՈՒՆԵ, ԱՆԴՐԱԿԱՆ ՍԱՆՈՒՆԱԿ «ՏԵՐ
ՄԻՋՈՐՈՒԿԱՆ ԵՎ ՈՒՂԱՊՈՒՄԱՆ ՏԵԼԵԿԱՏՈՒ», ՀԵՂՅՈՒՆ ԱՔԱՎՈՒ-
ԹՅՈՒՆ և այլն:

Չեռագիր գրելիս նման խնդիրներ չեն առաջանում, քանի որ
հարկ չի լինում գրելու միայն մեծատառերով:

Վարժություններ

19. Համակարգիչով միայն մեծատառերով մուտքագրեք հետևյալ շարադրանքը:

Գարուն էր: Բնությունը ապաքինվող հիվանդի պես նայում էր թախծախառն ժպիտով: Գարունը նոր էր լցվում նրա երակների մեջ, և նա անրջում էր՝ աչքերը տամկությամբ լի: Հևում էր անհուն տենչանքով: Ծառերը լցվել էին թացությամբ, բողբոջները՝ ուռել: Հողը անհաճ շնչում էր: Վարդագույն վանքը ձորափին լռել էր ինքնամփոփ:

20. Համակարգիչով սովորական ձևով (ըստ անհրաժեշտության՝ մեծատառերով և փոքրատառերով) մուտքագրեք հետևյալ գրվածքը:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԳՐԶՈՎ ԵՆ ՍՏԵՂԾՎԵԼ «ՈՒ ՏՐՏՈՒՄ ԷՐՆ ՔՈ ԱԶԲԵՐԸ ԹԱՅ», «ՈՒՄ ԵՄ ԵՐԳՈՒՄ», «ՈՒՂԵՐԶ ՄԵՐ ՀԱՆՃԱՐԵՂ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՉԱՐԵՆՑԸ ՆԱԵՎ ԹԱՐԳՄԱՆԵԼ Է ՈՒՈՏ ՈՒՒՏՄԵՆԻ «ՄԵՐ ՕՐԵՐԸ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ:

և-ի արտասանությունը և ուղղագրությունը

Մաշտոցյան այբուբենում և տառը չի եղել: Այն ստեղծվել է հետագայում ե-ի և լ-ի միացությունից՝ ե + լ = և: Այն չունի իր թվային արժեքը և մեծատառը: Վերջինիս փոխարեն գործածվում է եվ (եՎ) տառակապակցությունը:

Այս տառը գործածվում է բառասկզբի յեվ և բառամիջի եվ հնչյունակապակցությունները նշանակելու համար: Օրինակ՝ և, ևեթ, Սևան, տեքև, հարևան, արև և այլն:

Եթե բառի մեջ և բաղադրիչին նախորդում է բաղաձայն, ապա և-ը արտասանվում է եվ՝ առևտուր (առեվտուր), որևիցե (որեվիցե), այլև (այլեվ), իսկ եթե նախորդում է ձայնավոր, ապա և-ը արտասանվում է յեվ՝ նաև (նայեվ):

Եվ (յեվ) հնչյունակապակցությունը և-ով չի գրվում հետևյալ դեպքերում.

1. Եթե ե-ից հետո լսվող վ-ն մի ուրիշ բառի սկզբնատառն է: Օրինակ՝ տարեկերջ = տարի + ա + վերջ, ուղեվճար = ուղի + ա + վճար, հոգեկարք = հոգի + ա + վարք:

Ծանոթություն: Վերջածանցների վ սկզբնահնչյունը այս կանոնին չի ենթարկվում, հետևաբար վ հնչյունով սկսվող վերջածանցներով բառերում առաջացող էվ հնչյունակապակցությունը գրվում է **և-ով՝ հոգևոր** (հոգի + ա + վոր), **կարևոր** (կարի + ա + վոր), **ոսկևորել** (ոսկի + ա + վոր + ել), **ուղևոր** (ուղի + ա + վոր):

Նմանապես **և-ով** պիտի գրվեին **գինևետ**, **այգևետ**, **ալևետ**, **բարևետ** բառերը, քանի որ սրանք նույնպես ածանցավոր են. կազմված են **-ավետ** (գրք.՝ **աւետ**//**աւետ** = մի բանով օժտված, շատ) ածանցով և ոչ թե **վետ** (ալիք – վետվետալ) արմատով, ինչպես հաճախ թյուրիմացաբար գիտակցվում է: Սակայն 1940 թ. ուղղագրական բարեփոխումից հետո առաջացավ այս բառերի սխալ գրության ավանդույթ, որն անհրաժեշտ է փոխել հատուկ ուրոշմամբ: Քանի որ նոր ուղղագրությամբ գրեթե բոլոր բառարաններն այս բառերը տալիս են **եվ-ով**, սույն ձեռնարկի հավելված բառացանկում նույնպես առայժմ թողնում ենք այդպես (**գինեվետ**, **այգեվետ**, **ալեվետ**, **բարեվետ**):

2. Վանկատման և տողադարձի ժամանակ, երբ մյուս տողն անցնող վանկը սկսվում է **վ-ով**: Օրինակ՝ **հարե-վան**, **բարե-վել**, **արե-վելք**, **ոսկե-վորել**, **գինե-վետ**:

3. Մեծատառով գրելիս.

ա. հատուկ անունների սկզբում, ինչպես՝ **Եվա**, **Եվդոկիա**, **Եվդիմ**, **Եվրամուրեհաց**, **Եվրամիություն**, **Եվրասիա**, **Եվրոպա**:

բ. նախադասության կամ բանաստեղծական տողի սկզբում և ամբողջ տեքստը մեծատառով գրելիս, օրինակ.

Արևն էր նայում աչքով հայրական.

...քաղցր էր աշխարհն ու հասկանալի... (Նաիրի Չարյան)

«ԿԱՐԱՊԸ, ԽԵՅԳԵՏԻՆԸ ... ԳԱՅԼԱՉՈՒԿԸ»:

4. Մեծատառ **եվ-ով** սկսվող հատուկ անուններից կազմված բառերում: Օրինակ՝ **եվրոպական**, **արևմտաեվրոպական**, **եվրոպացի**, **համաեվրոպական**, **եվրասիական**, **եվդոկացի**:

Վարժություններ

21. Արտագրե՞ք տրված բառերը՝ բաց թողած տառերի տեղերում լրացնելով և կամ եւ:

ա. Ագ...ազ, ալ...ետ, ալ...որ, ար...ազալ, բ...եռ, Գ...որգ, գեր...արել, գին...աճառ, գին...ետ, գոտ...որել, դափն...արդ, երբ...է, եր...ույթ, եր...ան, թեթ...ոտն, թեր...ս, կար...եր, հար...ան, հոգ...իճակ, ծ...ել, ոսկ...արս, ...րոպացի:

բ. Կար...որ, համա...րոպական, հետ...ակ, հոգ...որ, հ...ասպառ, ոսկ...աճառ, ոսկ...որված, պարզ...ել, սեթ...եթել, սերկ...իլ, ս...ակնած, վազ...ազ, ուղ...ճար, ուղ...որվել, ուն...որ, իսկույն ...եթ, ...րոպա, ...րոպական, օթ...ան:

գ. Այգ...ետ, ար...ելք, արևմտա...րոպական, բար...ագիր, ...գինե, ...րախորհուրդ, ...րամիություն, երթ...եկել, թեթ...ություն, Լ...ոնյան, հ...իհ..., հոգ...արք, ոգ...որություն, պարզ..., ոսկ...ազ, Ս...ան, ս...եռուն, տար...երջ:

22. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում եւ:

ա. Ոսկ...ազ, հոգ...իճակ, գոտ...որել, այց...ճար, ոսկ...որել, գեր...արել, կար...որ, հ...ասպառ:

բ. Գին...աճառ, գին...ետ, համաբեր...անյան, հետ...ակ, ուն...որ, ալ...ետել, ալ...որ, եղր...անի

գ. Հոգ...իճակ, կար...եր, ուղ...ճար, ոսկ...արս, տար...երջ, ալ...արս, վազ...ազ, դափն...արդ:

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենում բաղաձայնների արտասանությունը հիմնականում համապատասխանում է գրությանը: Բաղաձայնները սովորաբար գրվում են այնպես, ինչպես արտասանվում են: Բայց երբեմն այս համապատասխանությունը խախտվում է: Օրինակ՝ **բ, գ, դ, ձ, ջ** ձայնեղ բաղաձայններ նշանակող տառերը մի շարք բառերում՝ բառամիջի և բառավերջի դիրքերում՝ հատկապես **դ, մ, ն, ր** բաղաձայննե-

րից և ծայնավորներից հետո, արտասանվում են **փ, ք, թ, ց, չ**: Օրինակ՝ **երք** (երփ), **համքերել** (համփերել), **կարգ** (կարք), **վարդ** (վարթ), **օծ** (օց), **առաջ** (առաչ), **դաղձ** (դախց), **ամբողջ** (ամբոխչ), **համքերել** (համփերել), **հագուստ** (հաքուստ):

Բաղաձայնների ուղղախոսությունը և ուղղագրությունը սովորելու համար պետք է հիշել հետևյալ կանոնները և բառաշարքերը:

Բ - Պ - Փ

1. Մի շարք արմատներում և դրանցից կազմված որոշ բառերում **բ-ից, մ-ից** և ծայնավորից հետո **փ** հնչյունը լսվելիս գրվում է **բ** տառը.

աբխազ, Գաբրիել, դարբին, երբ, իբր (իբրև), լիբր, խաբել (խաբեբա), խրբուկ, Հակոբ (հակոբենի), հակոբուկ), համբերել, համբույր, հարբել, նուրբ, շաբաթ, որբ, Սերոբ, սուրբ (սրբել), ուրբաթ, Զերոբ:

2. Մի քանի բառերում **դ-ով** գրվող **խ** հնչյունից հետո լսվող **պ-ն** գրվում է **բ** տառով՝ **աղբ** (ախպ), **աղբյուր** (ախպյուր), **եղբայր** (եխպայր), **ողբ** (վօխպ):

3. Մյուս բոլոր դեպքերում **բ-ի, պ-ի** և **փ-ի** գրությունն ու արտասանությունը համապատասխանում են իրար, օրինակ՝

- **Աբգար, Աբրահամ, ամբողջ, այբբենարան, արաբ, արբանյակ, արբել (արբունք, արբշիռ, ջրարբի), բամբ, բամբակ, բարբառ, բարբեր, բիբ, բորբ, բորբոս, գրաբար, դմբդմբացնել, լրաբեր, խումբ, ծերբակալել, ներբող, շեղբ, պատշգամբ, ռումբ, սկիզբ,**

- **ամպամած, ամպրոպ, ապակի, ապառաժ, ապշել, սուպրել, դարպաս, թաքտալ, ծոպավոր, կիպ, կոպ, հապշտապ, հուպ տալ, ճամպրուկ, ոսկեծոպ, վիրապ, րոպե,**

- **ամփոփել, արփի, Արփիար, ափսե, ափսոս, դմփել (տուրուդմփոց), երփն (երփներանգ), թարփ, թփուտ, լողափ, խափշիկ, կոփել, հափշտակել, հղփանալ, սթափ, սփոփել, տարափ, փրփուր և այլն:**

Վարժություններ

23. Տրված բառաշարքերից դուրս գրեք վեցական բառ, որոնցում բ տառն արտասանվում է բ:

ա. երբեմն, լրաբեր, Համբարձումյան, ողբերգություն, եղբայր, իբրև, շաբաթ, հերոսաբար, համբերել, նուրբ, աղբաման, բողբոջ, շեղբ, Ռուբեն, դարբին:

բ. Աբրահամ, ամբողջ, որբ, սրբել, աշխարհաբար, հոբելյան, խաբել, Սերոբ, Գաբրիելյան, Աբգար, համբույր, հորեղբայր, այբբենարան, նրբանկատ:

24. Արտագրեք տրված բառերը՝ կետերի փոխարեն գրելով բ, պ կամ փ:

ա. Ա...խազ, ալեծու..., աղ...ակույտ, աղ...յուր, ամ...արիշտ, ամ...արծիշ, ամենասուր..., ամ...հովանի, ամրակո..., անխա..., անխա...ան, ա...շել, ա...ստամբել, ար...ենալ, Ար...իար, ա...սե, ա...սոսալ, բամ..., բամ...ասել, բամ...ել, բոր...:

բ. Գա...րիել, գամ...ռ, գինար...ուք, գի...ս, գոմաղ..., գռ...ել, գրա...ար, դար...ին, Ա...խազիա, աղ...անոց, ար...շիռ, Ար...ինե, դար...աս, դա...նեպսակ, եղ...այր, եր..., եր...եմն, եր...ևիցե, երեսսր...իշ, երկնահու..., եր...նագույն, զամ...իկ:

գ. Ըմ...շամարտ, ըմ...ոշխնել, ընդիու..., թար..., թա...առաշրջիկ, թա...ք, թմ...լիկ, թմ...կաթաղանթ, թ...րտալ, թրմ...ալ, թ...թ...ացնել, թ...ուտ, ժայռակո... ի...րև, լե...լեցուն, լիր..., խա...ե...ա, խա...կանք, խարխա...ել, խծ...ծանք, նր...անցք:

դ. Նր...իրան, ող...երգություն, սր...ապատկեր, աղ...արկղ, դա...նեվարդ, եր...եմնի, եր...ևէ, խո...ան, եր...ներանգ, թա...թ...ել, խա...ել, խո..., ծո...ավոր, Ծո...ք, ծ...տուն, ծ...ծ...ալ, կառա...նարան, կա...կանաչ-կա...կա...ել, կո...:

ե. Կո...վել, Հակո..., համ...ակ, Համ...արծումյան, համ...երություն, համ...ույր, հա...ծե..., հար...եցող, հար...ուխ, հա...շտակել, հենացու..., հ...անցիկ, Հռի...սիմե, հուսախա..., ձեր...ազատվել, ծամ...որդ, ձե...ընթաց, ճողո...րել, ներ...ողել:

զ. Նր...աճաշակ, շերե...ուկ, ող...անվագ, որ...նայրի, հա...շտապ, ծեր...ակալել ճամ...րուկ, ձե...ծերմակ, ճող...յուն, ներամ...ո...

նր...ակազմ, ող...աճայն, նր...անկատ, շեղ..., շամ...ուտ, շամ...ուր, շե...որահար, սի...եխ, ող...երգակ:

է. Աղ...ահան, ոսկեծու..., ոսկեծու... որ...անոց, պատշգամ... պար...ակվել, ջրար...ի, սե...տեմբեր, սեր...ական, սե...ականություն, սե...-սև, սթա...վել, նր...ին, ս...րդել, սր...ագրել, սր...ազան, սր...ատեղի, սրտատրո..., ս...րթնել, վիրա...:

ը. Աղ...ահավաք, դա...նի, դե...-դեղին, թա...անցիկ, ծ...տուն, կա...կ...ել, ներ...ան, հղ...անալ, հ...վել, նր...երշիկ, պա...ակ, Սերո... սր...ավայր, տար...ողել, տրո...յուն, ուր...աթ, ...ա...ագ, ...ր...րադեզ, քարակո..., Քերո...յան:

25. Կետերի փոխարենն լրացնելով բ, պ կամ փ տառը՝ «ա»-«ե» կետերի բառաշարքերից դուրս գրեք տասը բառ, որոնցում բ տառն արտասանվում է փ:

Գ - Կ - Ք

1. Մի շարք արմատներում և դրանցից կազմված որոշ բառերում **ր-ից, ն-ից և ծայնավորից հետո ք հնչյունը լսվելիս գրվում է գ տառը.**

ամշտմ, ավագ, Գրիգոր, Դեորգ, երգ (երգել, երգիչ, երգա-
րան, երգեցողություն), զագո, զուգել (զուգվել), էգ (իզակյան),
էզուգ, թագավոր, թարգման, ծագել, ծեգ, Լյարագ, կարգ (կար-
գին), հագնել, հոգ (հոգս, հոգատար, հոգուց), հոգնել, հոգի, հոգ-
նակի, ձագ, ձիգ (ձյգել, ձգտել), ճիգ (ճգնել), ճրագ (ճրագոտ), մա-
րագ, Մարգար, մարգարե, մարգարիտ, մոգ, խորոգ, շոգ (շոգի),
սգի (սգեորել), սրտաքրագ, սրարգև, Սարգիս, տոգ, տեղր, ու-
րագ, օգնել (օգտոտ), Օգոնն

2. Շաղգամ բառում դ-ով գրվող խ հնչյունից հետո լսվող կ-ն գրվում է գ տառով:

3. Մյուս բոլոր դեպքերում **գ-ի, կ-ի և ք-ի գրությունն ու արտա-
սանությունը համապատասխանում են իրար, օրինակ՝**

– ագահ, ագարակ, ազգ (համազգային), անարգ, արագ,
արգելք (արգելակ), արեգ, Բագարան, բագին, Բագրատ, բուրգ,

գագաթ, գիրգ, գոգ (գոգնոց), գորգ, գովերգել, դագանակ, երկրպագու, զարգանակ, զիգզագ, զույգ (զուգերգ, զուգահեռ, զուգադիպել, զուգորդել), թագ (թագուհի, թագադրել), Թորգոմ, ժամերգություն, հագուրդ, համերգ, հարգ (հարգի, հարգել, հարգանք), հեգ, ծագար, ծագար, մարգ (մարգագետին), մեգ, մեներգ, միրգ (մրգաշատ), մոգ, նվագ, ողբերգակ, ոռոգել, սագ, վագր, վարագույր, տեգ, փափագ, փոքրոգի, քնարերգու,

- անհարկի, գինարբուկ, թանկագին, հարկ, հսկել, սկսել, վարակ, վարակիչ, վարկաբեկել, փսփսուկ, քաշքշուկ,

- արտաքնոց, արքա, աքցան, բարք, գինարբուք, դիցուք, երաշխիք, ընչացք, ծեծկռտուք, հաստիք, հետք, չոքել, սայթաքել, վարտիք, վարք, տաքդեղ, փսփսուք, քղանցք, քսուք, օծիք և այլն:

Վարժություններ

26. Տրված բառաշարքերից դնիրս գրեք վեցական բառ, որոնցում գ տառն արտասանվում է գ:

ա. Ագահություն, հագնել, ողբերգություն, թագուհի, համերգ, երգարան, էգուց, հոգնակի, կարգ, նորոգում, շոգել, ձգան, հարգանք, պարգևատրել, ահագին, Սարգիս:

բ. Կարգադրել, զարգացում, անհագ, փափագ, ազգ, անօգուտ, նորոգել, ձգնաժամ, սգավոր, մարագ, օգոստոս, թարգմանել, մարգագետին:

գ. Տիգրան, զագս, ծագուկ, տեգր, սեգ, զուգակցել, հոգեբանություն, երկրպագու, ձգան, ավագ, զուգադիպել, հանգել, ծրագու, ուրագ, կարագ, շոգիանակ:

դ. Ձուգել, շոգ, հոգի, երգիծանք, դեգերել, հոգս, հոգատար, նվագ, ձգտել, Գարեգին, էգ, օգնություն, բագին, Բագրատ, սուգ, անգամ, մգանակ:

27. Արտագրեք տրված բառերը՝ կետերի փոխարեն գրելով գ, Կ կամ ք:

ա. Ամո...իչ, այ...եկուրթ, անար...անք, անդրավարտի... աներծա... անթար...մանելի, անկար... անհա...ուրդ, անողի... ապա...ինվել,

առած...ական, առին...նել, ավելցու..., ար...ահատանք, ար...անակ, զու...ափայտ, թափթփու..., խշրտու... հո...եհմա, քաշքշու...:

բ. Անո...ուտ, ար...ելք, արմուն..., արտասու... ար...այական, ա...սորավայր, արևայրու..., Բա...րատ, բազմահո... բարա... (քերծե), բար...ավաճել, բարեհո...ի, բարեկար..., բեր...ատու, գո...ավոր, դիր...որոշում, եր...ահան, ծե..., թա...ուհի, կար...ուկանոն, հեղ...:

գ. Անհո...ի, ավա...անի, բար... (թեժ, այրող), բարվո...ել, բացա...անչություն, բերան...սիվայր, բեր...րալից, գիր... (փափուկ), գիր... (գոգ), գլխահա..., գլուխկոտրու... գո...նոց, զու...եր..., զու...ս, կար...ապահ, հա...նել, հե...իաթ, հո...եպարար, Սու...իաս, քու...:

դ. Անհար...ի, արևել..., Գրի...որ, դասալի..., դասակար..., դարա..., դե...երել, դիր... դիցու..., դողերոց..., դրասան..., եզեր... եղերեր... երախայրի..., երաշխի... երկնա...եր, եր...նել, երկրպա...ել, զի...զա..., զ...եռ, զորահավա..., զու...ահեռ, զու...արան, հո...եբան:

ե. Անօր...անական, արջու..., ա...ցան, եր...ել, երկարածի... զու...որդել, ընդեր..., թա...ակիր, թաղի... թան...արան, թան...ագին, թար...մանիչ, թմբու... թնջու... ժանի... ի...ական, լե...ետն, լ...տի, խլրտու..., ծա...ել (առաջանալ, բխել), կար...ազանց, հո...եորդի:

զ. Անհո..., թա...ավոր, ծեծկռտու..., ծուն..., կանոնակար..., կառ... կատվածա..., կարա..., կար..., կար...ին (գծագրական գործիք), կիր... կմախ..., կոշտու..., կրուն..., հա...ուկապ, հանքո...ուտ, հասարակար..., հաստի..., հավա...ել, հե... հեռածի..., հերյուրան... տրտմաշու...:

է. Գինարբու... (խրախճանք), կար...ադրություն, կար...ավիճակ, հավա...ույթ, հո...աբարծու, հո...եհանգիստ, հո...եվարք, հո...ատար, հո...եհարազատ, հո...նակի, հո...նատանջ, հո...ոց, հոն..., հրած...արան, հրծի..., հրմշտու..., հո...ուտ, շո...եկաթսա, ո...եղեն, փնտրտու...:

ը. Չա...ար, ծա...ուկ, ծայնա...ցել, ծ...ան, ծ...տում, ծիր..., ծան...ել, ծանկռտու... ծա...ել, ծ...նակյաց, ծ...նաժամ, ծի...ուջանք, ծ...ուն, ծտ...ավոր, ծրա...ալույց, ծրա...արան, ծրա...ու, մածու... մակույ... մանրու..., մարա..., մար...արեություն, մար...արիտ, վար...ագիծ:

թ. Հմայ..., հո...ալ, հրածի..., ծան...ռտել, ծա...ծ...ել, ծ...նավոր, ծ...վել, մա...րակենցաղ, ծրա...ակալ, Մար...արյան, մար...արտաշող, հո...եվիճակ, մետա...սյա, մր...ատու, շո...ենավ, ո...եկոչել, Սար...իս, ս...ավոր, վարա...ազերծել, վար...ուբար..., փոքրո...ի, քաշկռտու...:

ժ. Հովվեր...ություն, մար...արտափայլ, մա...րասեր, մեծահո...ի, մեղ... (հանցանք), մեղ... (թուլամորթ), սու... Մետա...սյա, մի...ամած, մո...ական, մտահո...ություն, մտմտու..., մր...ահյութ, շո...ել, նախ...ին, նախ...ան, նետաձի..., նորո...ել, շա...անակագույն, շն...շն...ան:

ժա. Մի...ապատ, մր...աշատ, շո...եքարշ, շո...ի, շրջա...այել, շրջա...այք, շուտասելու..., շ...երթ, ո...ելից, ո...եշունչ, սրտխառնու... վարա...իչ, վար...անիշ, տ...նաջան, տն...արան, ցայ...երգ, ուղղաձի... փա...ցնել, փափա...ել, փղծու..., փող..., փափսու..., օրակար...:

ժք. Շո...եխաշել, ո...ևորություն, ողբեր...ակ, չո...նել, պապա...ել, պատարա... պատշ...ամբ, պատրույ..., պար...ևատրել, պա...սիմատ, պնա...ալեզ, Սար...սյան, ս...ազգեստ, սեր...ևիլ, սյու..., ստու...արք, վաղանցու..., վարա..., վար... (ծիու համաչափ վագք), Վարդ...ես:

ժգ. Չմուշ... չո...ել, սրն...ակալ, սար...ավորում, սուտմեռու... վարա...ույր, վար... (պատիվ, հեղինակություն), վար...աբեկել, վար... (պահվածք, կենսագրություն), վերանորո...ել, վեր..., տա...նապալի, տա...դեղ, տա...ուկ, տ...արամիտ, ուրա... փեղ..., օրիներ...:

28. Կետերի փոխարեն լրացնելով գ, կ կամ ք տառը՝ «ժ»–«ժգ» կետերի բառաշարքերից դուրս գրեք տասը բառ, որոնցում գ տառն արտասանվում է գ:

Դ – Տ – Թ

1. Մի շարք արմատներում և դրանցից կազմված որոշ բառերում **ր**-ից, **ն**-ից և ձայնավորից հետո **թ** հնչյունը լավելիս գրվում է **դ** տառը. անոյամ, արդար, արդեն. արդյոք, արդյունք (արդյունաբերել), բարդ, բերդ, բրդել (բրդուժ, բրդոշ), բուրդ, դադար, դստերել, դդում, դրդել (դրդապատճառ), երդ (երդիկ), երդում, զարդ, Ջարդար, զերդ, ընդամենը, ընդունել (ընդունակ), լերդ (լերդանալ), լյարդ, խնդիր, խորդուբորդ, կարդալ, կենդանի, կոկորդ, հաղորդ, մարդ, նյարդ, Նվարդ, որդ (որդնել), որդի, ջարդ, վարդորդյան (վաղորդայն), վարդ (Սիրվարդ, Վարդուհի, Վարդուշ, Վարդևան, Վարդգես), Վարդան, վարդապետ, վարդավառ, վրդովել, օդ, օրիորդ, ինչպես նաև –որդ, –ուրդ, –րորդ, –երորդ

ածանցներով կազմված մի շարք բառեր (տրծավորող, երկրորդ, մոլորվորող, ելինգերորդ, նավտոր և այլն):

2. Մյուս բոլոր դեպքերում **դ**-ի և **թ**-ի գրությունն ու արտասանությունը համապատասխանում են իրար, օրինակ՝

- Ադամ, ադամանդ, աճուրդ, անջրդի, ապարդյուն, ավանդ, արդիական, արդուկ, բադ, բարդի, գեղարդ, դահուկ, դղիրդ, երիտասարդ, Թադևոս, թակարդ, խարդախ, խարդավանք, խլուրդ, խորանարդ, խորդենի, ծղրիդ, կախարդ, կորնթարդ, հագուրդ, հարդ, Հարդագողի ծանապարհ, հարդաշաղախ, հարդարել, հորդ, հորդորել, մակարդակ, Նավասարդ, շոկոլադ, սարդ, Սեդրակ, սպրդել, վառող, Տրդատ,

- աղոթք, անթառամ, անհեթեթ, արթուն, բրթբրթել, գաղթ, երթ (շքերթ, ուղերթ, երթուղի), զարթնել, թերթ, խենթ, խորթ, խրթին, կանթեղ, հակինթ, շանթ, շուրթ, որթ, որթատունկ, վատթար, փարթամ, օթևան և այլն:

3. Տ-ի գրությունն ու արտասանությունը սովորաբար համապատասխանում են իրար, օրինակ՝

աղոտ, գաղտնի, խրտնեղ, կոնատ, հավատք, վարտիք, քրտնած և այլն:

Ծանոթություն 1: Խեղդել բառի դդ կապակցությունը հնչում է խտ՝ խեխտել:

Ծանոթություն 2: Այդ արմատից կազմված մի քանի բառերում յ ձայնորդից հետո դ-ն որոշ չափով խլանում և հնչում է տ-ին մոտ արտասանությամբ. օրինակ՝ **այդպես** – **այտպես**, **այդքան** – **այտքան**, **այդպիսի** – **այտպիսի**: Այդպես է հնչում նաև բառավերջի դ հոդը՝ **մայրդ** (**մայրտ**), **քույրդ** (**քույրտ**), **գիրքդ** (**գիրքտ**):

Վարժություններ

29. Տրված բառաշարքերից դուրս գրեք վեցական բառ, որոնցում **դ** տառն արտասանվում է **դ**:

ա. Հարդարել, վարդաստան, նյարդ, խնդրանք, խարդախություն, ըստ այդմ, երիտասարդական, ջարդել, հաջորդ, Բաղդադ, օդանավ, ընդունել, թակարդ, բարդ, ժողովուրդ:

բ. Արդար, ընդ որում, կախարդ, մարդասեր, շոկոլադ, հողված, մակարդակ, ծղրիդ, ընդամենը, զարդարել, բրդատու, որդիական, արդյունք, լողորդ, այդպես:

30. Արտագրե՞ք տրված բառերը՝ կետերի փոխարեն գրելով *դ*, տ կամ *թ*:

ա. Ադամոր...ի, Ավար..., ականակի..., ակնթար... ակու..., աղո..., աճուր..., այգեկու... այ... (դա), այ...ամորուս, ար...յոք, ար...ուզար..., ար...մնի, արտահեր..., ար...առոց, ար...ասուք, ար...ւանունք, բր...ոտ, բր...ել (հրել), գաղ... գաղ...նապահ, հար...ուկ:

բ. Աղո...ք, ար...յունահանել, գաղ...նիք, գ...ալ (սեղանի սպասքի առարկա), կար...ալ, կար..., կարմրախայ..., կոկոր...իլոս, կորնթար... հաղոր...ում, հայ...այ...ել, հանդար...որեն, հաշման...ամ, հաջոր...ել, փու...կոտ, քաջոր...ի, քող...իկ, քր...մնջյուն, օ...անցք:

գ. Այ...տեղ, այ...ոսկր, ան...ա...ար, ան...ամագրվել, ան...ացուպ, անհաղոր... անհող...ող... անձեռակեր... բազման...ամ, Բաղդա... բաղդա...ել, բան...արկել, բար...ություն, բիր..., գաղ...նախորհուրդ, Դեբե..., կնձի..., կր...սեր, միլիար...ավոր, Վար...իթեր:

դ. Ան...ամ, ար...ուկ, գաղ...օջախ, գ...ալ (խղճալ), գեղար... գիր... (կտրուկ), գր...նակել, գունազար... դիմահար...ար, դր...ապատճառ, դրվագազար... եր...ուղի, եր...իկ, եր...մնազանց, զար...ասենյակ, թպր...ալ, թր...ուր, Նվար..., շողոթոր..., շոր...ել, շվայ...:

ե. Ան...ամահատել, այ...օրինակ, բեր...աքաղաք, գաղ...ական, գաղ...նածածուկ, եղբորոր...ի, երիզոր..., զար...ասեղան, ժան...աքիս, ճկույ..., մ...նուլորտ, շփեր..., շփու...վել, շքեր... որ... (ճիճու), սփր...նել, վար...աստան, փ...ել (նեխել), օ...ոց, օրիոր..., օ...ապարիկ:

զ. Ար...յունաբերություն, Ձվար...նոց, ըն...արմանալ, ըն...հանուր, ըն...անալ, ըն...երակա, թախ..., թակար..., թաղան... թա...երական, թեպե..., թղ...ակից, ժան...աղեմ, ժողովուր..., լաջվար..., լյար..., որ...ի, սպր...ել, սրըն...աց, վա...սուն, վաղոր...յան, օ...ւան:

է. Ար...նանալ, եր...վյալ, լողոր... լուր..., խա...արել, խաղաթուղ..., խայ...ել, խայ...ալ, խայ...աբղետ, խախտ... խառնաշփո... խար...յաշ.

խեղան...ամ, խեղ...ամահ, խեն...անալ, խլուր..., խորանար..., խր...նել, խր...վիլակ, ծաղկազար... կա...ողիկոս, հար...ավայր:

ը. Ան...ամավճար, անու..., անօ...ևան, ապա...արց, առաջնոր... առհավա...յա, առվույ..., բր...ել (մանրել), բր...եղեն, եր...լենկություն, զար...անախշ, զար...ուցիչ, զար...ուղի, զինա...ա...ար, թփու..., լախ... խեղ...ուկ, պայ...յուն, պայ...ար, պա...արագ, վ...ար:

թ. Ան...ամալույծ, զվար... ըն...ամենը, խոր...ենի, խոր...ուբոր..., խոր...ություն, խորհուր..., խր...ին, կան...եղ, հավկի..., Հար...ագողի ճանապարհ, հար...արել, հեր...ագրում, հար...ություն, ձ...քավոր, մաթեմա...իկա, մանրակրկի... մերթըն...մերթ, ո...ել:

ժ. Այ...ուցվել, անգայ..., անգու..., ան...ամատոմս, անծրևոր..., անո... (խողովակ), անջր...ի, ար...արացի, ար...արև, ար...են, ար...իական, զար...ատուփ, խար...իշահեր, խոր...կարան, խրճի..., հար...աքանդակ, հեծանվոր... հեր...ապահ, հնո...ի, հոր...ահոս, հոր...ուկ:

ժա. Անօ..., հրացայ..., հուռ...ի, հօ...ս ցնդել, ձկնկի..., ճամփոր... ճառագայ... ճարման..., ճանապարհոր..., միջնոր...ագիր, մշտար...ուն, մոր...ել, ներգաղ... նյար...այնանալ, նշ...արենի, նշ...ար, որ...նել, որ... (խաղողի վազ), որոգայ..., որսոր..., չվեր..., պա...ծեն:

ժբ. Այ...ժամ, այ... (թուշ), ար...ուն, արծակուր... արտագաղ... մար...ախույս, միջնոր..., չորրորդ... պարապուր... պար...և, պոռ...կալ, պոր...աբույծ, ջա...ագովել, ջար...ուխուր..., սաղավար..., սաղար... սարահար... Սե... սե...ևե...ել, սնո...ի, վաղոր...այն, վառո...:

ժգ. Այժմ ևե..., ան...ամակցել, ան...րա...առնալ, անհե...ե...ություն, անվ...ար, բեր...ակալ, զար..., ծմռ...ել, մոր...ի, վա...թար, վար...աբույր, Վար...ան, վարսահար...ար, վարոր... վի..., վի...խարի, վտարան...ի, վր...ովել, տո..., ցա...կ, ուղեր..., փար...ամ, փ...ել (ծաղկել):

ժդ. Ա...րուշան, բնոր...ուհի, գաղ...նի, գ...ակ, եր...վել, զար...ոնք, կա...սա, կեն...անի, հաշվեհար...ար, մար...կային, շան...արգել, որ...ան կարմիր, որ...ատունկ, պա...գարակ, Սե...րակ, վար...ապետ, Վար...ավառ, փ...ախտ, քր...նաջան:

31. Կետերի փոխարեն լրացնելով դ, տ կամ թ տառը՝ «ժ»–«ժդ» կետերի բառաշարքերից դճրս գրեք տասը բառ, որոնցում դ տառն արտասանվում է դ:

2 - Ծ - Ց

1. Մի շարք արմատներում և դրանցից կազմված որոշ բառերում **ր**-ից, ծայնավորից և **դ**-ով գրվող **խ**-ից հետո **ց** հնչյունը լավելիս գրվում է **ծ** տառը.

արծակ (արծակել, արծակուրդ, բացարծակ, ընդարծակ, համարծակ), բարծ, բարծել, բարծիթողի, բարծր, դաղծ, դարծ (դարծյա), դեղծ, դեղծան, դեղծանիկ, դերծակ, դերծան, խործ, համբարծվել (համբարծում), հանդերծ (հանդերծյալ), հարծակվել, ործ (ործակ), ործա, վարծ (վարծատրել), վարծակ, փործ (փործանք, փործություն), օծ (օծանման)

2. Մյուս բոլոր դեպքերում **ծ**-ի և **ց**-ի գրությունն ու արտասանությունը համապատասխանում են իրար, օրինակ՝

– անծավ, ատաղծ, արծագանք, արծան, արվարծան, արծանագրություն, բաղծանք, բրինծ, գանծ, գեղծ, գողծ, ըղծական, իղծ, հեղծուցիչ, հործանք, հունծ, մաղծ, մերծ, մղծավանջ, մելամաղծոտ, շնչահեղծ, սանծ, վրծին, ուղերծ, փղծկալ, քործ, օծիք,

– աղցան, ընթերցել, լաց, լվացք, խցկվել, կցկտուր, հարց, հյացք, մտացածին, մրցակից, պախուրց, սառցակալել, փոցխ, քաղց և այլն:

3. Ծ-ի գրությունն ու արտասանությունը միշտ համապատասխանում են իրար, օրինակ՝

եղծել, թախծել, թխվածք, սրտնեղած, կայծքար, կծիկ, կծկվել, կոծկել, կրծոսկր, մտացածին, ործկալ, տխեղծ և այլն:

Վարժություններ ~

32. Տրված բառաշարքերից դուրս գրեք տասական բառ, որոնցում ծ տառն արտասանվում է ծ:

ա. Վարծ, արծակ, օծագալար, դերծակ, դարծ, ործ, Համբարծում, դարծվածք, փործագետ, արծան, իղծ, օծիք, սանծ, հերծել, իրադարձություն, արծանագործ, վարծատրել, մերծավոր, դեղծանիկ, դեղծենի, ըղծական, հեղծուցիչ, քործ:

բ. Չորձ, հորձանք, արվարձան, դարձյալ, բնակվարձ, մղձա-
վանջ, մերձակա, արձագանք, տնամերձ, հանդերձանք, հարձա-
կում, բարձր, վարձակ, փորձանք, վերադարձ, հերարձակ, ման-
կաբարձ, խուրձ, հորձանուտ, բաղձանք, բացարձակ, բարձել, ան-
փորձ:

33. Արտագրեք տրված բառերը՝ կետերի փոխարեն գրելով ձ, ծ կամ ց:

ա. Ալեկո...ություն, ա...խագործ, ակաղ...ուն, ամբար...իչ, այ-
տու...վել, ան...ավ (քարայր), անձեռո...իկ, առա...գական, առան...ք,
առեղ...վա առկայ...ել, ար...անագործ, արվար...ան, արտառո...
ար...ունք, բազմափոր..., բարյա...ական, բար...ել, բար...րախոս:

բ. Բար...րահասակ, գան...արան, գարեհա..., գեղ..., գլուխգոր...ոց,
գլուխկոն...ի, գ...ու..., դար...յալ, դար...նել, դար...վածք, դեղ...ան,
դեղ...ենի, դեր...ակ, դյու...ազն, խե...եղեն, ծա...կանուն, կաթնահուն...
կաթվա...ահար, կառուցվա...ք, կր...ոսկր, հանդեր...արան, մր...ավար:

գ. Ա...խահանք, ա...խաթթու, ասացվա...ք, ատաղ...ագործ,
ար...ագանք, ար...ակագիր, ար...ակուրդ, բար...իթողի, բար...րադիր,
դեղ...անիկ, դողերո...ք, եղ...ել, երկնաբեր..., զեղ...արար, ընդար...ակ,
ընթա...ք, ընթեր...ել, թախան...ել, թախ...ադեմ, թյուրիմա...ություն:

դ. Թռ...նել, թր...ել, ժողովա...ու, լայնար...ակ, լացակումա..., լա-
ցուկո..., լի...ք, լ...կան, լռակյա..., լվա...ք, լու...կի, խավարամա..., խա-
վար...իլ, խավի..., խե...գետին, խոտհուն... կազմվա...ք, կայ...կլտալ,
կայ...քար, կառամատույ..., կառու...ել, կատարա...ու, փոր...ություն:

ե. Ա...խահոր, ան...կալի, անմր...ելի, ապաթար..., բար...րանիստ,
բար...րուղեշ, դեր...ան, թախ...ել, խե...եգործ, ծա...կել, կեղ...ամ,
կեր...նել, կե...վա...ք, կոր...նել, կր...ել, կ...կտուր, կ...մցել, կուր...ք, հա-
յա...ք, հանգու...յալ, հանդեր...անք, հանդեր...յալ, հանդիպակա...:

զ. Հանկար..., հասարակա...ային, հո..., հողմակո..., հոր...անուտ,
հուն...ել, ...ագար, ձեռնա...ու, ծյունածա...կ, ձվա...եղ, ձվա...և, ճրա-
գալույ..., մազապուր..., մա...ուկ, մա...ու...իկ, մանկաբար...ուհի, մթա-
մա..., մր...ունակ, վար...ավճար, ցն...ուղ, ուղնու...ու..., փոր...առու:

է. Անբի..., անդամալույ..., անե...ք, անեղ..., բար...ունք, բացար...ակ,
բռուն...ք, բռ...կլտալ, թախ...աժպիտ, թափան...իկ, թխվա...ք, խ...անա-

ուսն, խ...կել, խուր... ծա...կագիր, ծա...կոց, ծո...րակ, կեղ...ել, հաս...
տու աշինական, հար...ակում, հարսնա...ու, հե...կլտալ, հարցուփոր...:

ը. Հանդեր...ապահ, հեռար...ակել, միգամա..., մղ...ավանջային,
մտա...մունք, մտա...ածին (հնարովի, կեղծ), մր...ակից, մր...ել, մու...ել,
նայվա...ք, նվագա...ություն, շին...ու, ոսկեզօ... ողբասա...ություն,
որ կալ, որ...աքար, վար...ահատույց, փղ...ուկ, փոր...անոթ:

թ. Ակնա...անք, աղան..., աղ...ան, լուսար...ակ, հերար...ակ,
կիա...ք, հինավուր... հն...ել, հնո հոգա...ություն, մր...ասպարեզ,
պախուր..., պր...նել, ջրահեղ..., սան...ար...ակ, սերու...ք, սիգապան...,
սլա...իկ, սրդողա... վաղան...իկ, վար...ակ, վար...ակալ, վար...կան:

ժ. Հեղ...ուցիչ, վար...ել, վեհապան... վերամբար..., վեր...անել,
վեր...նել, տաղասա... տարա...վել, տողադար..., տր...ակ, ցն...ալ,
ցն ոտի, ուր..., փախ...նել, փայ...աղ, փղ...կալ, փոր...անք, փո...խ,
քաղ..., քաղ...կեղ, քաղ...րահնչյուն, քարածա...կ, օ...իք, օրավար...:

34. Կետերի փոխարեն ձ, ծ կամ ց տառը լրացնելուց հետո «ա»-«ե» կետերի բառաշարքերից դուրս գրեք տասը բառ, որոնցում ձ տառն արտասանվում է ց:

Զ - Ճ - Չ

1. Մի շարք արմատներում և դրանցից կազմված որոշ բառերում ր-ից, ծայնավորից և դ-ով գրվող խ-ից հետո չ հնչյունը լսվելիս գրվում է ջ տառը.

ուղջիկ, ոջ (ուջակողով, ոտուջ, ոտուջարկ, բնդոտուջ
ուջու, ոտուջին, ոտուջնորդ), առէջք, սրջ, թրջել, մնջ (մնջք)
ուջ (սովբուջ, առուջ), ոջիկ (փայտուջիկ), վարլեջք, վիրջ, քաջք

2. Մյուս բոլոր դեպքերում ջ-ի և չ-ի գրությունն ու արտասանությունը համապատասխանում են իրար, օրինակ՝

– աղջամուղջ, անընդմեջ, անուրջ, աջակցել, բաղարջ, գաղջ, գաջ, գեղջուկ, դաջել, եղջերու, եղջյուր, երջանիկ, գիջել, զղջալ, էջ (առէջ), էջմիածին, ընդմիջում, ընկերոջ, իջնել, լուրջ, խառնիճաղանջ, խնջույք, խոխոջ, խուրջին, կամուրջ, կնոջ, հաղարջ, հաջող, հաջորդ, հորջորջել, մարջան, միջակ, մի-

ջանք, միջատ, միջին, միջնեկ, միջնորդ, միջոց, միջուկ, միջև, մունջ, մրմունջ, մրջյուն, շեղջ, շեջ (հրշեջ, անշեջ), շուրջ (շրջան, շրջել, շրջմոլիկ), ողջախոհ, որջ, չղջիկ, Ջենովա, ստերջ, տիրոջ, քաջ, քրոջ, քրքիջ, քուրջ,

- աչք, դարչին, զեղչել, կառչել, կտրիչ, նկարչական, ոչխար, չանչ, Սոչի, վարչապետ, փախչել, փարչ, փուչ և այլն:

3. Ճ-ի գրությունն ու արտասանությունը միշտ համապատասխանում են իրար, օրինակ՝

ալոճենի, ակնակապիճ, աղճատել, աճել, աճպարար, աճուրդ, այծենակաճ, գաճաճ, գոճի, երկարաճիտ, խոճկոր, կաճառ, կապարճ, կարիճ, կոճկել, կոճիկ, կտրիճ, հարճ, ճանճ, ճղճիմ, ճոճք, մահճակալ, մաճկալ, մխրճվել, մուրճ, նախճիր, շիճուկ, պարկուճ, պճնանք, սոճի, ուոճանալ, ուտիճ, քարճիկ և այլն:

Վարժություններ

35. Տրված բառաշարքերից դուրս գրեք տասական բառ, որոնցում ջ տառն արտասանվում է ջ:

ա. խոխոջյուն, հորջորջել, մարմաջ, մրջյուն, աջ, աջակողմյան, միջանցք, լուրջ, քաղաքամեջ, հրշեջ, ոջիլ, ընդմիջում, վերջին, ստերջ, հաջորդ, վայրեջք, առաջարկություն, առաջիկա:

բ. Հաջողություն, անշեջ, արջ, աջհամբույր, առաջնորդ, արջամուկ, ամբողջ, առաջին, մունջ, մղձավանջ, քրքիջ, դաջվածք, առաջ, աջակից, մեջ, կամուրջ, միջոց, առջև, վերջին, Իջևան:

36. Արտագրեք տրված բառերը՝ կետերի փոխարեն գրելով ջ, ճ կամ չ:

ա. Ալո...ենի, ակնակապի..., աղ...ատել, աղ...ամուղ..., ա...պարար, այծեղ...յուր, անա...առ, անգի...ում, անմի...ապես, ան...րդի, անտե-րուն..., անր...ել, ամ...ալուր..., ա...քաքաց, ա...ակողմյան, ա...ափնյակ, ա...լիկ, առա...արկություն, մի...ատ, մի...ոց, շուր...պար, վեր...ակետ:

բ. Առա...ին, առն...ություն, առող...ություն, ար...աբույն, բաղար...
րա...կոն, բվե..., գաղթո...ախ, գաղ..., գա...ա..., գա... գեղ...ուկ,
թո...ուն, թր...ոց, հախ...ապակի, հաղար...ենի, հա...ել, հա...ողություն,
հոր...որ...ել, մե...տեղ, մի...ակ, մի...օրեական, ող...ույն, վեր...ին:

գ. Առա...նորդարան, ար...ուկ, գերա..., գո...ի, գր...ատուփ, դա...ել,
եղ...երու, երկարա...իտ, եր...անկություն, զեղ...ել, զի...ել, զղ...ալ, զո-
քան..., է...միածին, ըն...ացք, ըն...աքաղց, թարթի... թռ...ել, թր...ել, ի
հե...ուկս, ի...նել, լայնալի..., լա...վարդ, կտրի... (կտրող), հառա...անք:

դ. Ամբող..., այծենակա..., առա...նորդ, առէ... առ...և, բարեհա...
դար...նագույն, խառնի...աղան..., խո...կոր, խո...ընդոտ, խռ...ակ,
խր...իթ, ծխամոր... կապար..., կառ...ել, կարի..., կար...ել, կ...ղակ,
կ...մթել, կն...իթ, կո...կել, կոր...ել, կռ...իկ, կտրի... (քաջ), հար...:

ե. Հռ...ակավոր, ծան... ծղ...իմ, ...ո...ք, ...ռնչուն, մահ...ակալ,
մա...կալ, մար...ան, մե...քերում, մե...ք, մին...և, մի...ադեպ, մի...ամ-
տություն, մի...ավայր, մի...և, մի...օրե, մխր...վել, մռն...յուն, մր...յուն,
նախ...իր, նկար...ական, շեղ... շի...ուկ, շուր...կալ, ող...ագուրվել:

զ. Աղ...իկ, ո...խար, ո...իլ, որ..., չղ...իկ, պարկու... պ...նանք,
պ...րանք, ...ախ...ախել, սկեսրո..., սո...ի, Սո...ի, ստեր..., վայրէ...ք,
վար...ական, վեր...աբան, վեր...իվեր...ո, տարեվեր..., ուռ...անալ,
ուռ...ել, ուտի..., փախ...ել, փար..., քար...իկ, քրո..., քրքի..., քուր...:

**37. Կետերի փոխարեն ջ, ճ կամ չ տառը լրացնելուց հետո
«ա»-«փ» կետերի բառաշարքերից դուրս գրեք տասը բառ,
որոնցում ջ տառն արտասանվում է ջ:**

Ղ – Խ

1. Ղ հնչյունը լսվելիս միշտ գրվում է ղ տառը, օրինակ՝ աղան-
դեր, աղմուկ, աղյուս, աղոթք, աղջամուղջ, ատաղծ, բաղձանք,
բղջախոհ, բողբոջ, գաղջ, գեղծ, գեղմ, գեղջուկ, գուղծ, եղնիկ,
եղջերու, եղջյուր, գեղում, զղջալ, թաղանթ, իղծ (ըղծալի), մա-
ռախուղ, խաղող, խեղաթյուրել, կթղա, կուղբ, հեղգ, հեղծուկ,
մախաղ, մակաղել, մաղծ, մեղմ, մղծավանջ, մղծուկ, շեղբ,
շեղջ, չղջիկ, սաղավարտ, սաղմ, սեղմ, վեղար, ցնցուղ, փայ-
ծաղ, փղձկալ և այլն:

2. Ղ-ով են գրվում նաև հետևյալ բառերը, որոնցում ղ հնչյունը հաջորդող խուլ բաղաձայնի ազդեցությամբ երբեմն վերածվում է խ-ի:

Աղձատել, աղտոտ, աղցան, առեղծված, բաղկանալ, գաղտնի, գողտրիկ, եղծել, եղկելի, զեղծել, խեղկատակ, խեղձ, խիղձ, խողխողել, ծաղկել, կեղծ, հղկել, հղփանալ, ծաղկել, ճղճիմ, ճողփյուն, մեղկ, մեղսագործ, մղկտալ, նողկալի, շաղփաղփել, պաղպաղակ, պաղպաջուն, պիղծ, պղպեղ, պղպջակ, պղտոր, պողպատ, սողք, տաղտուկ, տեղկոմ, տուղտ, ուղտ (ընծուղտ, ուղտապան, ուղտաբեռ), փողկապ, փողիար, փողպատ, փողք, քաղքենի, քողտիկ:

3. Բաղաձայնից առաջ խ հնչյունը լավելիս գրվում է խ տառը հետևյալ բառերում:

Ախտ (ախտորոշում), ապուխտ, բախտ, բախտուկ, գխտոր, դժուխք, դրախտ, էրախտիք, զմրուխտ, թախտ, թխկի, թուխալ, թուխս, ժխտել, լախտ, խախտել, խրոխձանք, խրոխտ, ծախս, ծախք, կխտար, կմախք, հախճապուկի, նախկին, նախճիր, նոսխշ, նախքան, պանդուխտ, քախջախել, Զալախք, սխտոր, Վախթանգ, վախճան, վախկոտ, վխտալ, տախտուկ, ուխտ (ուխտագնաց), փախչել, ինչպես նաև -ղուխտ-ով կազմված անունները (Լուսարովիղուխտ, Շահանդուխտ, Որմիզդուխտ, Սանդուխտ և այլն):

4. Բաղաձայնից առաջ լավող խ հնչյունը մնացած դեպքերում գրվում է ղ տառով, օրինակ՝

աղբ, աղբյուս, աղբյուր, Աղթամար, աղջիկ, աղքատ, բողկ, գաղթել, դաղձ, դեղձ (դեղձան, դեղձանիկ), եղբայր, զեղչ, թուղթ, խեղդել, կաղկանձել, կեղտ, կողպ (կողպեք), կողք, հաղթել, ճեղք, մաղթել, մեղք, շաղգամ, շաղկապ, շղթա, ողբ (ողբերգակ), ողկույզ, ողջ (ամբողջ, ողջույն), սանդուղք, փեղկ, քաղց, քաղցր և այլն:

5. Մյուս բոլոր դեպքերում խ-ի գրությունն ու արտասանությունը համապատասխանում են իրար, օրինակ՝

բխել, երաշխիք, զելս, խախուտ, խիզախ, կախել, հարբուխ, հոխորտալ, մախաղ, մառախուղ, նշխար, շաղախ, վախենալ և այլն:

Վարժություններ

38. Արտագրեք տրված բառերը՝ կետերի փոխարեն գրելով դ կամ խ:

ա. Ա...տ (հիվանդություն), ա...տածին, ակնբա..., ա...ախին, աղե...արշ, Ա...թամար կ...զի, ա...յուսակ, ա...ճատել, ա...տե...ություն, ա...ցան, ա...քատ, ամբո...ջովին, անհո...դո...դ, անմե...սունակ, աշ...ետ, աշ...ուժորեն, ապաբա...տ, ապերա...տ, ապու...տ, բա...ծալի:

բ. Առո...ջություն, ատա...ծ, արնաշա...ա..., արտագա...թ, արտասնդու...ք, բաբա...յուն, բա...ել, բա...տ, բա...կացուցիչ, բաշ...ել, բարեբա...տ, Բարսե... բե..., բոցամու..., գա...տնիք, գե...ջուկ, Գո...թան երգեր, գո...տրիկ, գրատա...տակ, դա...ծ, դե...ծ, խարիս..., փ...ծուկ:

գ. Ա...տազերծել, ա...տոտ, բա...տակից, բքա...ե...դ, գա...թական, գա...թօջա..., գա...ջ, գա...տագո...ի, գա...տնապահ, գա...տնի, դե...ծանիկ, դժբա...տ, դժ...եմ, դժո...ք, դշ...ոյական, դրա...տային, ե...բայր, ե...երերգ, ե...ծել, ե...կելի, ե...յամ, ե...ջուր, երա...այրիք, ժ...որ:

դ. Երաշ...ավորել, երկնամու..., զե...ություն, զե...չել, զ...ջալ, զմրու...տյա, ըմբոշ...նել, ընծու...տ, թա...անծել, թա...իծ, թա...ծաժպիտ, թա...տ, թ...ահեր, թ...կենի, թ...վածք, թ...թատար, թու...պ, թու...ս, թու...թ, ժ...տել, լա...տ, լ...պոր, ...ա...տել, ծա...կանա...շ, ծա...կանկար, ու...տավոր (սրբատեղի այցելող):

ե. Ա...տահանել, բա...տավոր, դշ...ուհի, թա...ծաղեմ, խե...ղուկ, խե...կատակ, խի...ծ, խլափե...կ, խոզապու...տ, խրա...ճանք, խրո...տ, ծա...սել, ծա...կազարդ, ծա...կահյուս, ծա...կեպսակ, կա...ա...ան, կա...կանծել, կարմրա...տ, կե...ծավոր, կե...տակորոյս, կթ...ա, կ...տար:

զ. Ժանտա...տ, լեռնաշ...թա, կմա...ք, կո...պեք, կո...ք, կո...կոտել, հա...ճապակի, հա...թանակ, Հայկանդու...տ, հարբու... հե...հե...ուկ, հե...ծուցիչ, հ...կել, հորդաբու... ծա...կել, ճե...քվածք, ճո...ոպրել, ճո...փյուն, մա...թանք, մանանե..., մառա...ու..., մ...կտալ, նա...շուն:

է. Հե...գ, ծա...կանոց, կե...տոտ, հա...թահարել, մե...կ, մե...ք, միապա...ա..., մթնշա..., նա...ատինք, նա...կին, նա...ծիր, նա...շազարդել,

նա...շքար, նա...քան, նա...օրե, ներգա...թ, նշ...ար, նո...կալի, Շահան-
դու...տ, շա...ա...ել, շա...գամ, շա...կապ, ո...ջույն, ու...տ (կենդանի):

Ը. Շարժասանդու...ք, շե...բ, շե...ջ, շե...ջակույտ, շ...թայակապ,
ո...բերգակ, ո...կույզ, ո...ջ, ոսկրա...տ, չ...ջիկ, պա...պաջուն, պան-
դու...տ, պ...պե... պ...պջակ, պ...տոր, պո...պատ, ջա...ջա...ել, Ջա-
վա...ք, ջրա...ե...դ, սանդ...ակ, Սանդու...տ, սե...միրան, փո...հար:

Թ. Ծա...կատար, հա...թանդամ, շո...ք, ո...ջագուրվել, սանդու...ք,
սե...մել, սիբե..., ս...տոր, սպանա..., սրախո...խո..., Վա...թանգ,
վա...կոտ, վա...ձան, վաշ...առու, վ...տալ, տա...տակամած, տա...եր-
գու, տա...տուկ, տառե..., ցո...թաթաթ..., ու...տ (դաշինք, երդում):

Ժ. Բո...կ, ծ...փալ, ու...տադրուժ, ու...տատեղի, ու...տապան,
ու...տափուշ, փայծա..., փարսա... փե...կ, փ...ծկալ, փո...անորդ,
փո...կապ, փո...փո...ալ, փո...ք, փոց..., փտա...տ, քա...հան, քա...ց,
քա...ցկե..., քա...ցր, քա...քենի, ք...անցք, քո...տիկ:

39. Կետերի փոխարեն *դ* կամ *խ* տառը լրացնելուց հետո «ա»-«գ» կետերի բառաշարքերից դուրս գրեք վեցական բառ, որոնցում՝ ա) *դ* տառն արտասանվում է *դ*, բ) *դ* տառն արտասանվում է *խ*:

40. Օգտվելով հոմանիշների բառարանից՝ գրեք տրված բառերին իմաստով մոտ մեկական բառ, որոնցում լինի՝

ա. *խ* տառը.

դաշինք – ..., հիվանդություն – եղնիկ – մտրակ – ..., լա-
վություն – ոգևորել – թափառական – ամպ – ..., հանդի-
մանել–... գանահարել–..., տիրել–... երկյուղել–..., մոլեգին–...
վիհ–..., պատրանք–..., շաղակրատ–...:

բ. *դ* տառը.

լաց – ..., չունևոր – ցանկալ – երազանք – ծույլ –
բողոքօջել – ..., վտիտ – աղավաղել – պարթև–..., կնգուղ–...
խլեզ–..., հարթեցնել – ..., խարտյաշ –..., թուլամորթ–..., փորձանք–...,
խյուս–..., ամուսին–..., սրտաճմլիկ–..., ծգմել–...:

Օրինակ՝ **դաշինք – ուխտ:**

Բ – Ռ

1. Որպես կանոն՝ հայերենում **բ**-ի և **ռ**-ի գրությունն ու արտասանությունը համապատասխանում են իրար, օրինակ՝

– ապառաժ, առավոտ, առյուծ, առնական, առվույտ, բառարան, բառնալ, եռյակ, թռչել, խռպոտ, ծեծկռտուք, կառչել, կառք, կոխկռտել, կռթնել, կռժիկ, կռճոն, հառնել, համառոտ, ծեռնարկ, մառան, պառկել, վառարան, քաշկռտել, քառակուսի, քառորդ,

– ապար, արժանի, արժեք, արծաթ, արծիվ, արհամարհել, արտ, Արտակ, արտույտ, երեսուն, ընթերցել, թրջել, լրիվ, խանգարել, խրճիթ, կարգ, կարծիք, կրծել, կրճատել, կրճտացնել, հարժ, հերթ, մորթել, վագր, վերնագիր, Տիգրան, քարժիկ և այլն:

2. Ռ-ով վերջացող միավանկ արմատի կրկնությամբ կազմված բառերի մեջ սովորաբար առաջին արմատի **ռ**-ն փոխվում է **ր**-ի, օրինակ՝

բարբառ, գրգիռ, թրթիռ, կարկառ (քարակույտ), կարկառել, մրմուռ, սարսուռ և այլն:

Բացառություն են եռուզեռ, թռվուլ, ծոմռել, ծուռումուռ, կեռումեռ, շուռումուռ, վառվռուն, ֆռֆռալ և մի քանի այլ բառեր:

3. Բ-ով վերջացող արմատի կրկնությամբ կազմված բառերում **ր**-ն **ռ**-ի չի փոխվում, օրինակ՝

թրթուր, խորխորատ, ծործոր, երերալ, հուրհրալ, մարմրել, չարչարել, սրթսրթալ, վերվերի, տերտեր, փորփրել, փրփուր, քլքրել, կերկերուն և այլն:

4. Նմանաձայնությամբ կազմված բառերը գրվում են **ռ**-ով՝ արմատի կրկնությամբ կամ **ռ**-ի կրկնությամբ, օրինակ՝

գռգգռալ, գռմռալ, դռդռալ, զռզռալ, խռխռալ, խռռալ, կռլռալ, կռռալ, հռհռալ, ծռծռալ, ծռռալ, մռթմռթալ, մռմռալ, մռռալ, փռփռալ և այլն:

5. Ն հնչյունից առաջ, որպես կանոն, **ր** չի հնչվում և չի գրվում: Բացառություն են վերնազիր, զարնամալյին, ցորնուկ. արնաշաղսխ և այլ բառեր, որոնցում **ր**-ն ն-ից առաջ է հայտնվել բառակազմության կամ հնչյունափոխության հետևանքով և արտասանվում է **ր**:

Ծանոթություն: Ըստ հայերենի արտասանական կանոնի՝ ինտերնետ (համացանց), ինտերնացիոնալ, կոմինտերն բառերում ն-ից առաջ գրվող **ր**-ն արտասանվում է **ռ**:

Վարժություն

41. Արտագրեք տրված բառերը՝ կետերի փոխարեն գրելով *n* կամ *ր*:

ա. Ախո...ապետ, ախո...ժաբե..., ականջալու..., աղեխա...շ, ամպագո...գո..., անա...ժան, անկի...թ, անձե...ոցիկ, անշա...ժ, աշխա...հահ...չակ, ապա...աժ, ապա...ոշ, ա...ազաստ, ա...յուծ, ա...նետ, ատ...ճանակ, ատ...ուշան, ա...ագիլ, արյուն...ուշտ, գանգու...:

բ. Ագ...ավ, ապա... ա...բշի..., ա...ծաթյա, ա...ծիվ, ա...համա...հել, արևա..., բա...նալ, բա...բա... բա...բա...ոս, բա...դի, Բո...ժոմ, բ...թել, բ...ոնգյա, բու...վա..., գզվ...տոց, գոլո...շի, գո...գո...ալ, գո...շ, գո...տ, գ...գ...ել, գ...տնակ, Ե...օրյա, դա...չնագույն, եղե...ն, զմ...սել, կտ...իծ:

գ. Ախո...ժակ, դատա...կ, սպո...տ, դ...նապան, դ...ացի, դ...ժել, եղե...ական, Ե...աժանի, Ե...եսուն, երկպա...ակություն, զա...իվեր, զա...թնել, զա...նվել, զեփյու..., ըմբ...նել, ընձե...ել, թա...անչ, թպ...տալ, թ...չել, թ...վ...ալ, խա...կել, խ...խ...ալ, կա...ամատույց:

դ. Թ...թ...ալ, թ...թու...ավոր, թ...ջել, Ժխ..., իրարամե...ժ, լ...տես, լու...ումունջ, խա...նուրդ, խա...խափել, խա...ույկ, խելագա...վել, խոժո..., խոշո..., խո...շակ, խ...չակ, խ...թին, խ...ծիթ, խու...ներամ, կա...կա...ուն, կա...ապան, կ...ունկ (գարշապար), կա...թ, կա...ծիթ:

ե. Դ...կից, ծեծկ...տուք, ծխամո...ծ, կայտա..., կա...չել, կա...ք, կա...գ, կա...կա...ել, կա...ծել, կենսաթ...թի..., կենտոն, կե...կե...ուն, կե...ոն, կիտ...ոն, կի...ծ, կոխկ...տել, կո...ծանվել, կո...նթարդ, կ ապաշտ, կ...թնել, կ...կ...ալ, կ...պակ, Հ...իփսիմե, ծա...պ, ո...կո...:

զ. Կ ձիկ, կ...ունկ (թռչունը), կտ...վածք, կ...թել, կ...ծել, կ...ծատել, կ ճուտցնել, կ...նկակոխ, հանդու...ծել, հա...աչանք, հե...արծակ

(մազերը չկապած), հ...չակել, հրավա...ություն, հրթի..., հ...ծվանք, հու...թի, ծե...ք, ձե...բակալել, մո...թել, պայտա..., փա...ապանծ:

Է Ձե...բազատվել, ծիա...շավ, ծիաքա...շ, ծախ...անք, ծամպ...ուկ, ծանկ...ել, ծա...ագայթ, ծա...ախոս, ծա...ճատյուն, ծմ...թել, ծո...տատեր, ծ...ծ...ալ, ծ...վողյուն, մամ...ակալած, մա...ախուղ, մատ...վակ, մա...մա..., մե...ծելի, միահամու..., միա...ժամանակ, մկ...ատ, սաղա...թախիտ:

Ը Մո...թի, մ...մ...ալ (ծայնը), մ...մ...ալ (վերքը), մ...թմ...թալ, մ...սել, շահագ...գ...ել, շա...ացյուն, շատ...վան, շա...ժա...իր, շղա...շային, շ...շյուն, շու...ումու..., ոսկ...ախտ, ոստ...ե, որմնախո...շ, պա...կել, պատսպա...վել, պատ...վակ, պատ...ույգ, պա...կ, տա...ասխալ, փա...ասեր, քու...ջ:

Թ Հե...արծակել, հ...հ...ալ, պո...թկալ, պո...ոտախոս, քե...ուցում, սահմ...կել, սաղավա...տ, սա...նադոնդոդ, սա...ցակալել, սավա...նել, սա...սու..., սպա...վել, ս...թս...թալ, ս...նքակալ, սրտաշա...ժ, սփ...թնել, սևե...ուն, վագ..., վա...վ...ուն, վե...նագիր, ու...ց, քա...որդ:

ժ Տապա..., տա...եխ, տա...ե...ք, ուղղափա..., ու...կան, ու...ճանալ, ու...չել, փա...ամոլ, փա...ավոր, փա...թամ, փնտ...ել, փ...թկացնել, փ...շտալ, փ...փ...ալ (քամուց՝ վարագույրը, ձիու բաշը), փ...փ...ել, քաշկ...տել, քա...ասմբակ, քա...ասուն, ք...թմնջյուն, ք...տնաջան:

Վ – Ֆ

Հարավ, սովորո, նստվթ և դրանցից կազմված բառերում (հա...րավային, հարավցի, ավտոմատ, ավտոմոբիլ, նավթավառ և այլն) լսվող **Ֆ** հնչյունը գրվում է **վ** տառով:

Մյուս թուր դեպքերում **վ**-ի և **Ֆ**-ի գրությունն ու արտասանությունը համապատասխանում են իրար՝

– Աղվանք, առվակ, Եթովպիա, զավթել, թանգիվ, թավշյա, թափվել, թոթոճ, լրիվ, խոնավ, խստիվ, Խոսրով, խռովք, հագիվ, հավկիթ, հարկավ, հովտաշուշան, նավավար, նզովք, շնորհիվ, որովհետև, սակավ, սելավ, տավղահար, փլավ, օվկիանոս,

– ասֆալտ, Աֆղանստան, եֆրեյտոր, Թիֆլիս, կարտոֆիլ, հաֆ-հաֆ, սֆինքս, տիֆ, տուֆ, ուֆ:

Աղտոս և սերկևիլ բառերում **Ֆ** չի հնչվում և չի գրվում:

Վարժություն

42. Արտագրեք տրված բառերը՝ կետերի փոխարեն գրելով / կամ \$:

ա. Աս...ալտ, հարա..., ա...տոմբքենա, նզո...ք, կտա..., Հա...իզ, Օ...սաննա, փլա..., հազի..., թա...շապատ, ա...տոտնակ, զա...թել, բո..., նա...թամուղ:

բ. Ս...ինքս, տա...ղահար, հո...տաշուշան, հո...ասուն, հոսրո... աղ...անական, ա...ղանական, խռո...ք, թանզի... բո...ել, Օքս...որդ, թի...լիսեցի, հա...ք:

Մ - Ն

Բ, պ, փ բաղաձայններին նախորդող դիրքում ն սովորաբար չի հնչում, քանի որ դրանց ազդեցությամբ վերածվում է մ հնչյունի: Ուստի արմատական բառերում այդ դիրքում միայն մ է գրվում, օրինակ՝ ակումբ, ամբաստանել, ամբար, ամբարտալիան, ամբիոն, ամբողջ, ամպ, ամփոփել, բամբակ, բամբել, բմբուլ, գամբու, գմբեթ, գամբյուղ, ըմբռնել, ըմբռնել, ըմպանակ, թամբ, թմբուկ, թումբ, խումբ, կաղամբ, համբալ, ճամբար, ճամպրուկ, ճամփա, շամբուտ, շամպայն, շամփուր, սմբուկ, սոսամբար, ումպ, փամփուշտ: Մ-ով է գրվում նաև -ամբ վերջավորությունը, օրինակ՝ անվամբ, արյամբ, էություն, մասամբ, արամբել:

Այդ դիրքում ն գրվում է այն դեպքում միայն, երբ բառակազմության ժամանակ ն-ով վերջացող բաղադրիչին միանում է **բ, պ, փ** բաղաձայններով սկսվող բաղադրիչ, օրինակ՝

անբախտ, անբան, անբասիր, անբավ, անբարբառ, անբարո, անբերրի, անբիծ, անպաճույճ, անպատեհ, անպատիվ, անպատկառ, անպատժառ, անպարկեշտ, անպարփակ, անպետք, անփայլ, անփասունակ, անփոփոխ, անփորձ, անփույթ, հանպատրաստից, բանբեր, դռնփակ, ձեռնբաց:

Մյուս բոլոր դեպքերում մ-ի և ն-ի գրությունն ու արտասանությունը համապատասխանում են իրար, օրինակ՝

– բամբասել, համբույր, համբերել, համբարձում, Սամվել, սիմֆոնիա, ամֆիթատրոն, կամք, հիմնել, նման,

– անվարան, բանտ, հանդես, հանկարծ:

Վարժություն

43. Արտագրեք տրված բառերը՝ կետերի փոխարեն գրելով մ կամ ն:

ա. Սեպտե...բեր, ա...բարո, ակու...բ, ա...պրոպ, ա...պաճույժ, ա...բարեխիղժ, արա...բի, ա...բարտակ, ա...փարատելի, ա...պիովանի, ը...պել, ա...բուժելի, ս...բուլ, սուսա...բար, բա...բ, բա...բեր:

բ. Դա...բարան, ա...բովանդակ, ս...բակ, ռու...բ, ա...պարտ, շա...փուր, ա...բարիշտ, հա...բակ, դիտմա...բ, ա...փոխարինելի, դռ...բաց, ապստա...բ, ա...բրոս, թ...բուկ, ա...փորձ, ծծու...բ, ա...պատասխան, լա...պ:

<

Հետևյալ բառերում **ր-ից** հետո գրվող **հ-ն** չի արտասանվում («համր» տառ է)։

աշխարհ, խոնարհ, խորհուրդ, ճանապարհ, շնորհ

Չի արտասանվում նաև **արհամարհել** բառի երկրորդ **հ-ն**։

Սովորաբար չի արտասանվում **Հովհաննես** անվան բառամիջի **հ-ն**։

Թույլատրվում է չարտասանել **օրհնել** բառի **հ-ն**։

Մյուս բոլոր բառերում **ր-ից** հետո և այլ դիրքերում գրվող **հ-ն** կարդացվում է, օրինակ՝

– **աշխարհայացք, արհավիրք, արհեստ, ժպիրի, խորհել, հուրհրատել, միրհավ, ներհակ, նիրհել, քարհատ, օրհաս,**

– **ագահ, անհատ, բահ, բուհ, գահ, գոհ, գռռիկ, գրոհ, դժգոհ, Ջարեհ, զոհ, զրահ, ընդհակառակը, ընդհանուր, ընդհատակ, ընդհատել, ընդհարում, ընդհուպ, Թեհրան, թոհուրոհ, լեհ, խոհ, կահկարասի, հայիոյել, հեղհեղուկ, հերթապահ, հրահրել, հրդեհ, մահ, նախագահ, նժդեհ, շահ, պահ, պատեհ, ջահ, սահման, սեպուհ, սկիհ (արծաթյա անոթ), սրահ, վեհ, վիհ, վստահ, քաղհան և այլն:**

< չի հնչվում և չի գրվում **նշխար, ապաշխարել, ընդամենը, ընդառաջ, ընդարձակ, ընթանալ** բառերում: Երկրորդ **հ** չի հնչվում և չի գրվում **անհեթեթ, անհողողող, հայթայթել, հեկեկալ, հեղեղատ, հեղեղել** բառերում:

Վարժություն

44. Արտագրե՞ք տրված բառերը՝ ըստ անհրաժեշտության գրելով հ տառը:

ա. Ապաշխար...ել, նշխար..., աշխար...այացք, ջրհեղ...եղ, դժգո... ապաշնոր..., խոր...ել, ար...ամար...ել, հայթ...այթել, խոնար...աբար, հայ...ոյել, թոհուբո..., ընդ...արծակ, ան...եթ...եթ, նախագա..., նժդե...:

բ. Հեղ...եղուկ, խոր...ին, ընդ...առաջ, չնաշխար...իկ, ընդ...ամենը, հով...ար (գլխարկի), հեղ...եղել, հեկ...եկալ, համ...արզ, ընդ...ակա-
ռակը, ժպիր..., անհողդ...ողդ, մտախո..., հեղ...եղատ, միր...ավ:

Կրկնակ բաղաձայններ

Եթե բառի մեջ այս կամ այն բաղաձայն հնչյունը ունենում է տևական արտասանություն, գրվում է կրկնատառ, օրինակ՝

ալբերենարան, հովվական, Վիեննա, խնկերոտ, մրրիկ, ուղղակի, Բաֆֆլ:

Հայերենում կրկնակ բաղաձայն ունեցող բառերը կարելի է բաժանել մի քանի խմբերի.

1. Նմանաձայնություններ և դրանցից կազմված բառեր, օրինակ՝

բվիոց, գվիսպ, դզզոց, դռռալ, թշշալ, խշշոց կլլոռ, ճրճոռ, ճրթալ, ճոռոց, շիլիոց, վշշոմ, տծծալ, ուզզալ:

2. Հնչյունափոխության հետևանքով առաջացած բառեր ու բառաձևեր, օրինակ՝ գննել – գնին+ել (ի–ն սղվել է), հովվական – հովվ+ական (ի–ն սղվել է), մրրիկ – մրուր+իկ (ու–ն սղվել է), տարրուհան – տարեր+ական (ե–ն սղվել է), ուղղական – ուղիղ+ական (ի–ն սղվել է), վաթել – փթիթ+ել (ի–ն սղվել է), բնական – քնին+ական (ի–ն սղվել է), օրբան – օրոր+ան (ո–ն սղվել է):

3. Բառակազմական կամ քերականական տարբեր բաղադրիչների միացումով առաջացած բառեր, օրինակ՝ ալբերենարան < ալբ+բեն+արան, ձևերի < բեր+րի, պրավիլ < գրավ+վել,

երկկողմ < երկ+կողմ, երեսսրբիչ < երես+սրբիչ, երրորդ < եր+րորդ, ընդդիմամուլ < ընդ+դիմ+ան+ալ, կեցցե < կեց+ցե, հողովել < հողով+վել, նոյան < նոյ+յան, Վահանն էլ < Վահան+ն, վրդովել < վրդով+վել: Սրանց թվում մեծ քանակ են կազմում ն կրկնակ բաղաձայն ունեցող բառերը, որոնք ն-ով վերջացող բազմավանկ բառերի հոգնակիի ձևեր են (օրինակ՝ սեղան+ներ, սողուն+ներ, դերասան+ներ, վահան+ներ, բաղաձայն+ներ, պատճեն+ներ, սվին+ներ, մեծատուն+ներ.), ն-ով սկսվող արմատներից ան- նախածանցով կազմված բառեր (օրինակ՝ ան+նախադեպ, ան+ներելի, ան+նկուն, ան+նման, ան+նշմար, ան+նպատակ), ինը (ինն) թվականից կազմված բառեր (իննավան, իննսուն, իններորդ, իննամյա, տասնիննասկան, քսանիննամյա) և այլն:

4. Մի շարք փոխառյալ բառեր և օտար անուններ, օրինակ՝

Աննա, Արիլեն, բալլադ, Բոնն, Բուդյա, Էմմա, Ժամնա, Լիլիթաստ, Հեյզոգա, Իելեն, Մեքքա մոլլա, Վիեննա, տամնա, ֆինն:

Ծանոթություն: Կրկնակ բաղաձայնով բառերի հետ չպետք է շփոթել նրանք, որոնց գրության մեջ իրար հաջորդող նույն տառերի միջև արտասանվում է գաղտնավանկի ը, օրինակ՝ գզվել - գըզվել, դղում - դըղում, թթու - թըթու, լկել - լըլկել, խխունջ - խըխունջ, ծննդյան - ծնընդյան, կկոցել - կըկոցել, կկու - կըկու, հույսա - հույսըս, ննջել - նընջել, շշուկ - շըշուկ, սսկվել - սըսկվել և այլն: Այս բառերն իրենց գրությամբ ստեղծում են կրկնակ բաղաձայնի տպավորություն:

Վարժություններ

45. Արտագրե՞ք տրված բառերը՝ կետերի փոխարեն գրելով *ր* կամ *րր*, *ռ* կամ *ռռ*:

ա. Ե...որդ, տա...ական, կ...ծիկ, ձ...ալ, տա...որոշել, տա...ալուծել, միատա..., տա...կետում տա...ագիր, հինգե...որդ, ամանո...:

բ. Բնօ...ան, տասներեքե...որդ, տա...երք, կ...ալ, տա...երային, անտա...ակույս, բնօ...ինակ, պա...կել, բա...օրություն, չո...որդ:

46. Արտագրեք տրված բառերը՝ կետերի փոխարեն գրելով դ կամ ղդ:

ա. Ու...ակի, անու...ելի, ու...նոր, խձու...ի, ու...աբերձ, գործու...ում, ու...երձ, ու...աթիռ, ու...անկյունի, ու...եպարկ, բարձրու...եշ:

բ. Ու...ընթաց, ու...ահայաց, ու...եցույց, ու...ամիտ, վազքու...ի, ու...արգել (ձանապարհի փակող), ու...եմոլոր, ու...արկել:

47. Լրացրեք բաց թողած տառերը:

ա. Հե...են, մո...ագար, Վիե...ա, աքի...եսյան, ար...ե, վշտա...ուկ, բա...ադ, ք...ախույզ, բազմատա... ա...պատակ, փ...ել (ծաղկել, բողբոջել), ...մապուր, ք...ապարկ, հո...երգություն, մ...իկ (բույսերի հիվանդություն):

բ. Բնօ...ան, տասներկուե...որդ, կե...ե, հո...ասուն, ի...սունամյա, այ...ենարան, ըն...իմակաց, տանջա...ուկ, հո...ական, երե...րթիչ, խ...իշոց, շ...ացնել, ժա...ա, եր...ենցադ, ձ...ալ, ավե...ուկ, տո...ա:

3 ծայնակապ

Հայերենը «չի սիրում» երկու և ավելի ծայնավորներ իրար կողքի: Ուստի բառամիջում իրար հաջորդող երկու ծայնավորների միջև որոշ դեպքերում արտասանվում է յ հնչյունը: Օրինակ՝ **միայնակ, գնեինք, էի, ժողովածուում, հիանալի** բառերը հաճախ արտասանվում են թույլ արտահայտված յ-ով՝ **միյայնակ, գնեյինք, էյի, ժողովածույում, հիյանալի**:

2այնավորների միջև արտասանվող յ հնչյունը կոչվում է ծայնակապ:

2այնակապը հայերենում գրվում է միայն **ա** և **ո** ծայնավորներից հետո, օրինակ՝

արքայական, գնայինք, գոյական, երեխայի, երեկոյով, կայարան, մնայուն, պահածոյացված, տղայի, գայիսոն, Միքայել, նոյեմբեր, Ռաֆայել

Է (ե), ի, ու ծայնավորներից հետո յ ծայնակապը չի գրվում, ինչպես՝ **այժմե(յ)ական, անէ(յ)ական, բերե(յ)ին, Գայանե(յ)ին, է(յ)ակ, ժողովածու(յ)ից, հարսնացու(յ)ի, մարգարե(յ)անալ,**

մի(յ)ություն, մի(յ)ասին, միջօրե(յ)ական, որդի(յ)ական, սերմնացու(յ)ով, քրիստոնե(յ)ություն:

Ծանոթություն: Ձայնակապի հետ չի կարելի շփոթել մի շարք բառերի արմատական յ-ն, ինչպես՝ բայ - բայական, թեյ - թեյել, խոյ - խոյահարել, խոյընթաց, հայ - հայերեն, հոկեյ - հոկեյի, Սերգեյ - Սերգեյի և այլն:

3 ձայնակապ չի առաջանում հետևյալ դեպքերում.

ա. ամենա-, ենթա-, կիսա-, հակա-, վերա- և **ա** հոդակապով վերջացող այլ նախածանցների ու ձայնավորով սկսվող հիմքերի միջև՝ ամենաարագ, ենթախմատու, կիսաուղիղ, հակաուրշավ, վերաէջադրել և այլն:

բ. Նաիրի բառի մեջ և դրանից կազմված բառերում՝ նաիրյան, նաիրիտ, Նաիրունի, նաիրական և այլն:

գ. Մի քանի փոխառյալ բառերում՝ արխարիկ, կակաո, կոպիլիցիա, նովոկալին, պոեմ, ռաուտո, Ուկրաինա և այլն:

Ծանոթություն: 3 ձայնակապ չի առաջանում նաև մի շարք բառերում, որոնցում **եա, իա, իո** տառակապակցությունները կարող են արտասանվել նաև որպես **յա, յո** երկհնչյուններ՝ բամիա - բամյա, եղիա - եղյա, հեքիաթ - հեքյաթ, միլիոն - միլյոն, օրիորդ - օրյորդ և այլն:

Վարժություն

48. Ընդգծեք այն բառերը կամ բառաձևերը, որոնցում կա յ ձայնակապ:

ա. Համայնք, հեքիաթ, ծիարշավ, կիսաեզրափակիչ, ենթաօծիք, հնգամյակ, ժողովածուում, գոյություն, այցելություն:

բ. Ինքնարտահայտում, գույք, Հայաստան, վայրկյան, խաբեբայություն, լիանալ, միասին, հարսնացուով:

գ. Թեյարան, մայել, Սերգեյ, կառույց, խոսեինք, հայիոյել, արդյունավետ, միայն, կրիա:

դ. Կայծկլտալ, գույն, սյունակ, էություն, թեյել, հայերեն, Հռիփսիմեհի, հայացք, քրեական, արքայական:

ԿԻՍԱԶԱՅՆ Յ ԵՎ ԵՐԿՆՅՈՒՆՆԵՐ

Հայերենի յ բաղաձայնի արտասանության ժամանակ, ի տարբերություն մյուս բաղաձայնների, ծայնալարերն ավելի ուժեղ են թրթռում, այսինքն՝ ավելի շատ ծայն է առաջանում: Հետևաբար մյուս բաղաձայններից առանձնացնելու համար յ հնչյունը կոչում են նաև **կիսաձայն**: Զայնավորների հետ յ-ն կազմում է կապակցություն, որ կոչվում է **երկհնչյուն**, ինչպես՝ **այծյաւ, Ձեյթուն, կյանք, հայր, հույս, մյուս, պայթյուն**:

Կիսաձայն յ-ի և որևէ ձայնավորի կապակցությունը կոչվում է **երկհնչյուն**:

Յ կիսաձայնը, որպես ձայնակապ հայտնվելով երկու ձայնավորների միջև, երկհնչյուն է կազմում ոչ թե նախորդ, այլ հաջորդ ձայնավորի հետ, ինչպես՝ **խաղայի - յի, հայացք - յա, մնայուն - յու, խնայել - յե, գրելի - յի, ժողովածուում - յու**:

Հայերենի երկհնչյուններն են.

այ - այրել, եղբայր, կայծ, հայթայթել, հայտնել, ձայն, պայծառ, վայր և այլն,

յա - Արամանյակ, եղյամ, երկաթյա, կյանք, Հակոբյան, Հրաչյա, մատյան և այլն,

էյ - Անդրէյ, Ձեյթուն, Էյնշտեյն, թեյ, լեյտենանտ, հեյ և այլն,

յէ - ամենաերկար, երամ, երգ, Իսրայել, հայերեն, նայել, վիլայեթ և այլն,

յի - անտառային, գայիսոն, գնայինք, նայիր, ջղային և այլն,

ույ - արժույթ, գույն, լույս, խարույկ, հաճույք, համբույր, հույն և այլն,

յու - աղբյուր, անկյուն, արյուն, երկյուղ, հյութ, հյուսիս, հնչյուն, նյութ, սյուն և այլն,

ոյ - գոյ, խոյ, խոյընթաց, հոյ, Նոյ և այլն,

յո - արդյոք, արքայորդի, յոգ, յող, յոթ, Յոհան և այլն:

Երկհնչյունների արտասանությունը և ուղղագրությունը

Հայերենի երկհնչյունների արտասանությունն ու գրությունը մեծ մասամբ համապատասխանում են իրար՝ **հայր, ժայռ, ատյան, մանյակ, Մետաքսյա, թեյ, Ձեյթուն, հյոան, յուրային, բույր, ուրույն և այլն:**

Սակայն մի շարք բառերում (հատկապես փոխառյալ) երկ-
հնչյունների արտասանության և գրության միջև կա անհամապա-
տասխանություն:

1. Յա երկհնչյունը գրվում է **իա** տառակապակցությամբ.

ա. մի շարք հին փոխառություններում՝ ալելուիա, բամիա,
դաստիարակ, խավիար, կրիա, հեքիաթ, փասիան, օվկիանոս

բ. մի շարք նոր փոխառություններում՝ ալյադեմիա, էներգիա,
էրոկուրսիա, իշիաս, լաբորատորիա, միլիարդ, մոմիա, քի-
միա և այլն,

գ. մի քանի օտար ծագման անձնանուններում՝ Ազարիա,
Անանիա, Բենիամին, Բունիաթ, Եղիա, Ելիազար, Երեմիա,
Հալաբիա, Մարիամ, Մարիանա, Սուքիաս և այլն,

դ. տեղանուններում՝ Ամասիա, Անգլիա, Ասիա, Բոլոնիա,
Եդեսիա, Իտալիա, Կիլիկիա, Մակեդոնիա, Մեծ Բրիտանիա,
Նիլեյցարիա, Սիսիան, Սոֆիա, Վիկտորիա, Ուրմիա, Ֆրանսիա
և այլն:

Ծանոթություն: Կանանց անուններում լավող յա երկհնչյունը սովո-
րաբար գրվում է յա՝ Ամալյա, Ասյա, Արաքսյա, Երմոնյա, Լիլյա,
Սոֆյա, Վիկտորյա, Օֆելյա:

2. Յա երկհնչյունը գրվում է **եա** տառակապակցությամբ Անդ-
րեսա, ստորեական, իդեալ, Իրես, միջօրեական, քվեաթեր-
թիկ, քվեատուփ, քվեարկել, քրեական, քրիստոնեական և այլ
բառերում:

3. Յե երկհնչյունը գրվում է **իե** տառակապակցությամբ Գաբ-
րիել, Հապորոմիե, կարիերա, Մարիետ, պիես, պրեմիերա,
Ջուլիետ, Վիետնամ և այլ օտար բառերում ու անուններում:

4. Յո երկհնչյունը գրվում է **եո** տառակապակցությամբ ալկո-
րդեոն, ամեոբա, լեգեոն, Նասյոլեոն, քամեկեոն և այլ օտար
բառերում ու անուններում:

5. Յո երկհնչյունը գրվում է **իո** տառակապակցությամբ մի
քանի հիմնականում փոխառյալ բառերում ու անուններում՝
ամբիոն, ավիոն, բրաբիոն, Բյուզանդիոն, գլխուղիտ,

մարիոնետ, մարմարիոն, մեդալիոն, մյլիոն, չեմպիոն, ռադիո, Սրապիոն, տրիլիոն, օրիորդ և այլն:

Ծանոթություն: Երկինյուններ կամ ծայնավորական զուգորդումներ ունեցող վերը նշված բառերում յ ծայնակապի և երկինյունների արտասանությունն ու ուղղագրությունը այստեղ ներկայացված են ըստ գործող դասագրքերի: Մինչդեռ կատարված ուսումնասիրությունները և գրավոր ու քանավոր հարցումները ցույց են տալիս, որ արտալեզվական ու լեզվական մի շարք գործոններով պայմանավորված՝ դրանց արտասանության մեջ կատարվել են զգալի տեղաշարժեր: Դրանց մի մասը (ըստ դասագրքերի՝ երկինյուններ ունեցող բառեր) ունի երկակի արտասանություն՝ երկինյունային (յ-ի թույլ արտասանությամբ) և երկծայնավորային (առանց ծայնակապի), ինչպես՝ Անդրյասյան // Անդրեասյան, Մարյամ // Մարիամ, քրիստոնյական // քրիստոնեական, հեջյաթ // հեքիաթ, օլիմպյադա // օլիմպիադա, սոցյալական // սոցիալական, դաստյարակ // դաստիարակ, Վյետնամ // Վիետնամ, Մարյետա // Մարիետա, քամելյոն // քամելոն, Նապոլյոն // Նապոլեոն, չեմպյոն // չեմպիոն, հրյա // հրեա, քվյաթերթիկ // քվեաթերթիկ, մյուս մասը, ինչպես նշվել է, արտասանվում է թույլ ինչվող յ ծայնակապի հավելումով կամ առանց դրա՝ անէ՝ անալ // անէանալ, մի՝ այն // միայն, է՝ ալ // էակ, լի՝ ություն // լիություն, հոլի՝ անալ // հոլիանալ, մի՝ ավորել // միավորել, է՝ ություն // էություն, տի՝ եզերք // տիեզերք, բազե՝ ակիր // բազեակիր, պի՝ ես // պիես, ձի՝ եր // ձիեր, դասատու՝ ի // դասատուի, մի՝ այնակ // միայնակ և այլն:

Վարժություն

49. Արտագրեք տրված բառերը՝ լրացնելով երկինյուններ կամ երկծայնավորներ նշանակող տառերը:

ա. Միամս...կ, ատամնաբ...ժ, ս...նակ, ն...րդ, Միքա...լ, ստորոգ...լ, հա...լի, քառ...կ, վա...ել, աներևակա...լի, հեծ...լ, կ...ծ, գ...ժ, քար...ր, հ...սկեն, մ...ս, վ...րկյան, ալ...ր, արտոն...լ:

բ. Մի...ն, Վ...ննա, տվ...լ, գործուն...թյուն, կանաց...թյուն, Ժան...կ, մ...սին, ան...կան, լեզ...ն, Գերման... պանթ ն, կատար...լ, աղ...սակ, քիլ...րդ, լ...րդ, լռել...յն, մարգար...թյուն, դաստ լակ:

գ. Ն..., Պար...ր, առաք...լ, Ձաքար..., ար...ն, այծ...մ, Ուկր...նա, արբան...կ, հոբել...ն, միլ...րդ, հետև...լ, իշ...ս, օվկ...նոս, հնադար...ն, հռոմ...կան, Մար...մ, քր...կան, հար...ր, դարձ...լ:

դ. Միմ...նց, Նապոլ...ն, փաս...ն, Վիկտոր... (անձնանուն), քրաք...ն, ամբ...ն, Իսրա...լ, Անդր...ս, եղ...մ, խաբեբա...թյուն, մեղմահնչ...ն, համբ...ր, մատ...ն:

ՎԱՆԿ

Բառի այն հնչյունը կամ հնչյունների խումբը, որ արտասանվում է մեկ շնչով, կոչվում է վանկ:

Օրինակ՝ կարոտ բառի արտասանության ժամանակ կ և ա հնչյուններն արտաբերվում են իրար հետ միասնաբար, մեկ շնչով՝ կա, իսկ մյուս երեք հնչյունները՝ **ր ո տ**, իրար հետ՝ **րոտ**: Այդ երկու խմբերի միջև կարող է որոշ չափով դադար լինել:

Բառերը կազմված կարող են լինել մեկ կամ մի քանի վանկերից: Օրինակ՝ **տուն, գիր, վարձ, խոսք**, ու բառերը արտասանվում են մեկ շնչով և մեկական վանկ են: Իսկ, օրինակ՝ **տարի, հարցարան, հայրենասիրություն** բառերը կազմված են երկու՝ **տա-րի, երեք՝ հար-ցա-րան**, և վեց՝ **հայ-րե-նա-սի-րու-թյուն**, վանկերից:

Վանկերի քանակը պայմանավորված է ծայնավոր հնչյունների քանակով: Բառի մեջ որքան ծայնավոր կա, այնքան էլ վանկ կա: Առանց ծայնավորի վանկ չի լինում:

Ծայնավորը վանկարար, այսինքն՝ վանկ կազմող հնչյուն է:

Հայերենում բոլոր ծայնավորները վանկարար են:

Միայն մեկ վանկից կազմված բառերը կոչվում են միավանկ բառեր, մեկից ավելի վանկերից կազմվածները՝ բազմավանկ:

Վանկը աֆտասանական-հնչյունական միավոր է և կարող է համընկնել կամ չհամընկնել իմաստային (բառակազմական) միավորի հետ: Օրինակ՝ **մարդասեր** բառն ունի երեք վանկ՝ **մար-դա-սեր**: Դրանցից առաջին երկուսը չեն համընկնում իմաստային միավորի հետ (**մարդ**), բայց երրորդ վանկը՝ **սեր**, համընկնում է:

Ինչպես նկատեցիք, վանկը կազմվում է մեկ կամ մի քանի հնչյուններից, օրինակ՝ **ա-րագ**: Միահնչյուն վանկ են կազմում մի-

այն ծայնավորները, այսինքն՝ ամենափոքր վանկերը մեկ ծայնավորից կազմված վանկերն են: Օրինակ՝ **ասել** > **ա-սել**, **էի** > **է-ի**, **ուրախ** > **ու-րախ**, **օտար** > **օ-տար**, **էական** > **է-ա-կան**:

Հայերենում կարող են լինել մինչև հինգ հնչյունից կազմված վանկեր: Օրինակ՝ **առանցք** > **ա-ռանցք**, **բռունցք** > **բը-ռունցք**, **կյանք**, **կուրծք**:

Վանկի տեսակները

Վանկը կարող է ավարտվել ծայնավորով կամ բաղաձայնով: Եթե վանկը վերջանում է ծայնավորով կամ կազմված է միայն ծայնավորից, կոչվում է **բաց վանկ**, օրինակ՝ **բացակա** > **բա-ցա-կա**, **ապակի** > **ա-պա-կի**, **կատարածու** > **կա-տարա-ծու**: Բաղաձայնով վերջացող վանկը կոչվում է **փակ վանկ**, օրինակ՝ **վարդաստան** > **վար-դաս-տան**, **հարկադրել** > **հար-կադ-րել**:

Վանկ են կազմում նաև չգրվող **ը-երը**: Օրինակ՝ **ջրհոր** բառի մեջ **ջ** և **ր** բաղաձայնների միջև արտասանվում է **ը**, որն այդ բաղաձայնների հետ միասին կազմում է վանկ: Այդ բառի վանկերն են՝ **ջըր-հոր**:

Արտասանվող, բայց չգրվող ը ծայնավորով վանկը կոչվում է գաղտնավանկ:

Ջրհոր բառի մեջ **ջըր-ը** գաղտնավանկ է: Այդպես նաև՝ **վկա** (>**վը-կա**) բառի մեջ **վը-ն** գաղտնավանկ է, **ակնթարթ** (>**ա-կըն-թարթ**) բառի մեջ **կըն-ը** գաղտնավանկ է:

Վանկատման կանոններ

Արդի հայերենում վանկերի սահմանները որոշվում են հետևյալ կանոններով.

ա. Երկու ծայնավորների միջև եղած մեկ բաղաձայնը վանկ է կազմում հաջորդող ծայնավորի հետ: Օրինակ՝ **ա-րագ, կա-տար, հա-յացք**:

բ. Երկու ծայնավորների միջև եղած մեկից ավելի բաղաձայններից վերջինը վանկ է կազմում հաջորդող, մյուսները՝ նախորդող

ծայնավորի հետ: Օրինակ՝ **մար-տիկ, աստ-ղիկ, ա-ռանցք-ներ, մը-կըրտ-վել**:

գ. Վանկասկզբում երկու բաղաձայն կարող է լինել, եթե դրանցից երկրորդը յ կիսաձայնն է: Օրինակ՝ **վայր-կյան, ար-դյոք**:

դ. Գրությամբ անմիջապես միմյանց հաջորդող երկու ձայնավորները անկախ արտասանությունից մտնում են տարբեր վանկերի մեջ, ինչպես՝ **մի-մի-այն, է-ինք, է-ակ, հա-կա-օ-ղային, ա-փե-տփ, Ա-նի-ի, լի-ու-թյուն**:

ե. Կրկնակ բաղաձայնները (որոնց միջև գաղտնավանկի ը չկա) սովորաբար բաժանվում են տարբեր վանկերի միջև (օրինակ՝ **Ան-նա, էմ-մա, Հով-հան-նես, գե-րան-ներ, տըգ-գալ, տար-րա-կան, կըծ-ծի, բեր-րի**): Իրենց միջև գաղտնավանկի ը ունեցող կրկնվող բաղաձայնները կարող են միասին մեկ վանկ կազմել (օրինակ՝ **զըգ-վել, թըթ-վել, զըգ-վել**) կամ էլ տարբեր վանկերի պատկանել (օրինակ՝ **մը-կը-կալ, թը-թու, կը-կո-ցել, խը-խունջ, պը-տը-տել, խը-ծը-ծել, չա-րա-ծը-ծի, ար-ծը-ծի**): Կան նաև թե՛ մեկ, թե՛ մյուս ձևով վանկատվող կրկնաբաղաձայն բառեր (օրինակ՝ **զըն-նել** կամ **զը-նը-նել, քըն-նել** կամ **քը-նը-նել, մըր-րիկ** կամ **մը-րը-րիկ, փըթ-թել** կամ **փը-թը-թել, խըտ-տել** կամ **խը-տը-տել**): Սրանցից երկրորդները հատուկ են ժողովրդական լեզվին:

զ. Ս, դ, ն հոգերը բաղաձայնից հետո նախորդ բաղաձայնի հետ ը-ով կազմում են վանկ՝ **գիր-քըս, գիր-քըն, ա-նու-նըդ, հո-րըդ** (քո հորը):

Ծանոթություն: Հայերենում կան թույլ «ը» ունեցող կիսավանկեր: Դրանք են բառասկզբի սպ, սկ, ստ, սփ, սք, սթ, գք, գգ, շպ, շտ, շկ հնչյունակապակցությունների դեպքում գոյացող ըս-, ըգ-, ըշ- գաղտնավանկերը և բառավերջի տր, դր, կր, գր, քր, ձդ, կդ, սն և նման հնչյունակապակցություններով վանկերը:

Պետք է զգուշանալ կեղծ գաղտնավանկերից: Քանի որ հայերենում ամեն մի առանձին բաղաձայն արտասանվում է -ը հենարանով (**թը, գը, դը, զը, խը, ծը** և այլն), շատերին թվում է, թե բառը վանկատելիս կարելի է ամեն մի բաղաձայնը հենարանով դարձնել վանկ (**գը-տը-նել, հան-դը-գը-նել, տը-րը-տը-նը-ջալ** և այլն): Այդպես չի կարելի: Իրականում վանկ են կազմում այն «ը»-երը, որոնք չվանկատված բառում

նույնպես հնչում են, թեև չեն գրվում: Օրինակ՝ կը-տըր-տել, գըր-գը-ոել, թըր-թը-ռալ, գըր-քեր, խըն-ծոր, դը-ռըն-բաց, ձը-կըն-կուլ, Մը-կըրտ-չան, տըր-տըն-ջալ, հան-դըգ-նել, ըս-կը-սել, թան-ծըր, ար-կըղ և այլն:

Վարժություններ

50. Տրված բառերը բաժանե՞ք վանկերի:

Կայսրություն, վիրավոր, դասագրքեր, բարձրանալ, հետաքրքիր, տարրական, նկարչատուն, մկան, ստեղծագործություն, կարգախոս, բարձրաձայն, վկայական:

51. Տրված բառերը վանկերի բաժանե՞ք՝ գրելով գաղտնավանկի ը-ն, եթե այն կա:

Թանձր, գաղտնի, պատսպարել, բջջային, կրնկակոխ, զննել, կրկնել, մանրահատակ, մանր, երաժշտական, պտտահողմ, ուղղել, ծոճռալ, մկկալ, դռնփակ, այսինքն, կարմրություն:

52. Վանկատե՞ք և յուրաքանչյուր բառի դիմաց նշե՞ք վանկերի քանակը:

Կմկմալ, աստղագետ, անբացատրելի, զգացում, մութ, վարք, արևելյան, կյանք, արևմտյան, ստեղծել, էինք, զնդակ, մեղք, տնօրենություն:

Օրինակ՝ տեգր – տե-գըր 2:

53. Գրե՞ք հինգ բազմավանկ բառ, որոնց առաջին վանկը եթե հանենք, մնացած մասը կմնա որպես բառ:

Օրինակ՝ տանտիկին – տան-տիկին:

54. Ընդգծե՞ք՝

1. միավանկ երեք բառ.

ա. սպա, մկան, արագ, ծյուն, վկա, անգղ, լույս, շերտ, կրակ, ծրար

բ. կայսր, հպարտ, սպաս, հարս, աստղ, զգույշ, կոպիտ, արտ
հյուր

2. երկվանկ երեք բառ.

ա. սկահակ, արյուն, լրտեսել, խայթ, վկա, բարև, համարյուր
հյուր, կաղապար

բ. պարտեզ, գիշանգո, գիսաստղ, էի, սպասել, մայր, կյանք
սրատես, սպի

3. եռավանկ երեք բառ.

ա. բարձրանալ, հարցնել, կրակմարիչ, վարսավիր, հնարամիտ
վնասակար, կակաո

բ. երկինք, միավոր, հնաբնակ, էություն, հայերեն, եկեղեցի
կրկնակոշիկ, վայրէջք

4. քառավանկ երկու բառ.

ա. զբոսաշրջիկ, հրապարակ, ամենակարծր, վնասող, տնտես
ություն, վարձատրել

բ. սննդամթերք, կառամատույց, փոխադրիչ, նարնջագույն,
քրթմնջալ, փայլվիլոն

գ. թրթնջուկ, շարադրություն, պղնձագործ, մշտնջենական,
ակնկալություն, չմշկորդ

5. երեք բառ, որոնցում բաց վանկ չկա.

ա. հացատուն, գործունյա, անտնտեսվար, կարծրանալ, վար-
գուն, ուսմասվար, սնաչ

բ. կամավոր, հացթուխ, վերարկու, պարտիզպան, հրավիրա-
տոմս, սիրելի, ծնհալ

6. երեք բառ, որոնցում բաց վանկ կա.

ա. պայթար, մրցաշար, կայտառ, հնադար, կայծակ, ընկույզ,
քարհանք, մանանա

բ. սղագրում, դրվագ, մարտական, գրտնակ, բարձր, հայթայ-
թել, հիշասարք, դդում

7. երեք բառ, որոնցում փակ վանկ կա.

ա. երեխա, եղջյուր, աղբյուր, խաբեբա, երախայրիք, աբեղա,
ակամա, լումա, հետագա

ք. մկնդեղ, պարագա, եռաժանի, ընծուղտ, խաթաբալա, բացա-
կա, հացողի, թպրտալ

8. երեք բառ, որոնցում փակ վանկ չկա.

ա. հետմիջօրե, գեղանի, միակողմանի, հոլանի, տեղնուտեղը,
ինչևէ, նախօրե, հասցե

բ. հանրաքվե, պողոտա, տանջալի, հակամանրե, տասնինը,
նորափեսա, փայտե, չարածձի:

ՏՈՂԱԴԱՐՉ

Գրելու ժամանակ հաճախ ամբողջ բառը միևնույն տողի վրա
չի տեղավորվում, ուստի ստիպված ենք լինում նրա մի մասը
տեղափոխել հաջորդ տող: Նախորդ տողում մնացած մասի մոտ
դրվում է տողադարձի գծիկ (-), որ կոչվում է **ենթամնա**:

**Բառի մի մասը հաջորդ տող տեղափոխելը կոչվում է տո-
ղադարձ:**

Տողադարձը կատարվում է երկու սկզբունքով՝ **ըստ վանկերի**
և **ըստ բառի բաղադրիչների**:

Ըստ վանկերի տողադարձի հիմքում ընկած են վանկատման
կանոնները:

Տողադարձի բառակազմական սկզբունքի համաձայն՝ բարդ և
նախածանցավոր բառերը կարելի է ոչ միայն վանկատել, այլև բա-
ռակազմական բաղադրիչների բաժանել: Ընդ որում՝ անջատվում
են նախածանցները (հոդակապի հետ միասին) և արմատները (հո-
դակապը մնում է իրեն նախորդող արմատի հետ): Օրինակ՝
ուն-օգուտ. ծով-եզր. գետ-ուփ. վայր-էջք, բուզմ-երանգ,
չարու-ճճի. նախու-դրյալ. կարգա-դրել և այլն:

Վերոհիշյալ երկու սկզբունքների կիրառմամբ տողադարձի կա-
նոնները ձևակերպվում են այսպես.

1. Տողադարձվող բառի երկու (ավարտվող տողում մնացող և
հաջորդ տող գնացող) մասերը պետք է կազմված լինեն կամ ամբող-
ջական վանկերից, կամ բառակազմական ամբողջական բաղադրիչ-
ներից (արմատ ունեցող): Օրինակ՝ տ-դալ. տա-կայն, զար-մանք,
թի-սվ. է-սվ. նա-ե, թե-և, փայ-ծաղ, այր-վածք, վայ-րի.

ա-նորոշ կամ ան-ոյոռ, ծո-վեզր կամ ծով-եզր, ինք-նիշխան կամ ինքն-իշխան, երվ-ներանդ կամ երվն-երանդ և այլն:

Ծանոթություն: Ըստ հայերենի վանկատման կանոնների՝ երկու ծայրավորների միջև եղած մեկից ավելի բաղաձայններից վերջինը վանկ է կազմում հաջորդող, մյուսները՝ նախորդող ծայրավորի հետ, ինչպես՝ վարծ-կան, ամպ-րոպ, կարծ-րանալ: Տողադարծի ժամանակ բացառություն կարող է լինել միայն յ կիսաձայնի դեպքում, որին նախորդող բաղաձայնը բառամիջում կարելի է կցել կամ նախորդ, կամ հաջորդ վանկին: Օրինակ՝ ա-րյուն կամ ար-յուն, էու-թյուն կամ էութ-յուն:

2. Անմիջապես միմյանց հաջորդող երկու ծայրավորանիշ տառերից (եթե նույնիսկ դրանք երկհնչյունային արտասանություն ունեն) մեկը կարող է մնալ, մյուսը՝ գնալ հաջորդ տող, ինչպես՝ միմի-այն, հասկա օդային, Եվսե-Եվ, Անդրե-տա, օվկի-անոս, Մարի-ամ, իդե-ալ, միլի-ոն, Խեղի-աթ, է-ություն:

3. Կցագիր և տառով արտահայտված «ե» և «վ» հնչյունները եթե բաշխվում են բառի տողադարձվող երկու մասերի վրա, ապա և տառը փոխարինվում է եվ տառակապակցությամբ, որի ե-ն մնում է ավարտվող տողում, իսկ վ-ն անցնում է հաջորդ տող: Օրինակ՝ երե-վան, բարե-վել, տերե-վաթուփ, կարե-վոր:

4. Տողադարձվող բառի՝ ավարտվող տողում մնացող հատվածի վերջին վանկը կամ հաջորդ տողն անցնող հատվածի առաջին վանկը եթե գաղտնավանկ է, ապա դրա ը-ն գրվում է: Օրինակ՝ շըղ-թա, ար-կըղ, կը-տըրտել, ըս-կիզը, ըստ-րուկ, երբե-մըն, իլը-կըրտիչ, խըռ-նըվել: Տողադարձից հեռու ընկած գաղտնավանկերի ը-ն չի գրվում: Օրինակ՝ եր բեմն, ծաղ-կաշիթա, խռնը-վել, Մըկըր-տիչ):

Բառակազմական սկզբունքով տողադարձ կատարելիս գաղտնավանկի ը-ն չի գրվում, եթե նույնիսկ տողադարձի՝ վանկատմամբ և բառակազմական սկզբունքները համընկնում են (օրինակ՝ ան-վնաս, գեր-խնդիր, դրա-քննիչ, վաղ-վիել, չարա-ճճի, Խոտն-կայս, ձեռն-տու, ինքն-իշխան, բացա-տրել, դիմա-դրել, Խամր-ընթաց, նախա-դրյալ)՝ բացառությամբ այն դեպքի, երբ

բառի տվյալ հատվածն այդ **ը-ից** բացի այլ գրվող ծայնավոր չունի (օրինակ՝ **ճըռ-ճուռ, գըր-բաց, թըր-թիռ, դըր-կից, բըն-կալ, մթըն-կա, ձկըն-կույ**) :

Ծանոթություն: Տողադարձի տարբերակներ (բացի վանկատման կանոններով սահմանվածներից) թույլատրելի են նաև բաղաձայնից հետո սլատճառական **ցն (ցր)** ածանց կամ երկու բաղաձայնից հետո կրավորական վ ածանց ունեցող բառերի դեպքում (օրինակ՝ **թըռց-նել, թռցը-նել** կամ **թըռ-ցընել, փախց-նել, փախցը-նել** կամ **փախ-ցընել, գըսպ-վել, գսպը-վել** կամ **գըս-պըվել, թըրջ-վել, թրջը-վել** կամ **թըր-ջըվել, կազմ-վել, կազմը-վել** կամ **կազ-մըվել, տանջ-վել, տանջը-վել** կամ **տան-ջըվել**) : Նմանատիպ տարբերակներ են հնարավոր նաև հնչյունափոխությամբ ծայնավորը կորցրած մի շարք այլ բառերի դեպքում (օրինակ՝ **քըրտ-նել, քրտը-նել** կամ **քըր-տընել, կարմ-րել, կարմը-րել** կամ **կար-մըրել, աղջ-կա, աղջը-կա** կամ **աղ-ջըկա, կարկ-տաբեր, կարկը-տաբեր** կամ **կար-կըտաբեր**) : Տողադարձի ժամանակ ըստ հնարավորին պետք է խուսափել ավելորդ **ը-եր** ներմուծելուց՝ **տանջ-վել** և ոչ թե **տանջը-վել** կամ **տան-ջըվել, խընդ-րել** և ոչ թե **խըն-դըրել** կամ **խնդը-րել, մարմ-նի** և ոչ թե **մար-մընի** կամ **մարմը-նի** և այլն :

5. Կան նաև տողադարձի սահմանափակումներ:

ա. Ձբ, գգ, շտ, սպ, ստ և նման հնչյունակապակցություններով սկսվող հատուկ անունները բառասկզբի գաղտնավանկից հետո տողադարձ չեն արվում, որպեսզի հատուկ անունը **ը-ով** չսկսվի և իր տեսքը չփոխի: Այսպես՝ չի կարելի տողադարձել **Ըս-տեփան, Ըստ-րապուրգ, Ըս-պարտակ, Ըս-պիտակ, Ըս-տամբուլ, Ըս-պահան, Ըշ-տայնթալ** և այլն: Ծիշտը՝ **Ստե-փան, Ստրաս-բուրգ, Սպար-տակ, Սպի-տակ, Ստամ-բուլ, Սպա-հան, Շտայն-թալ** :

բ. Նույն պատճառաբանությամբ ընդհանրապես չեն տողադարձվում տառային և վանկատառային հապավումները (օրինակ՝ **ԼԴՀ, ԱՄՆ, ՀՅԴ, ԽՍՀՄ, ՀամԼԿԵՄ**) :

գ. Հաջորդ տող չի կարելի տանել միայն ածանց կամ վերջավորություն, եթե այն չի առանձնանում վանկատման սկզբունքով (չի կարելի գրել **րնկեր-ություն, հար-իչ, սեղան-ից**, բայց կարելի

է գրել մի-ութիւն, լըծ-կան, հեծ-յալ, կարծ-լիկ, հարևան-ցի, քամի-ներ, Անի-ի, Լոռի-ում):

Ծանոթություն: Տողադարծի նշանը՝ ենթամնան, տեսքով նման է միության գծիկին: Ուստի միության գծիկով հարադրավոր բարդությունները (գիշեր-ցերեկ, հագած-կապած, փունջ-փունջ, հայ-ռուսական) առանձին բաղադրիչներով տողադարձելիս ենթամնա չի դրվում: Դրան փոխարինում է միության գծիկը, որը հաջորդ տողն անցնող բաղադրիչի սկզբում չի կրկնվում:

Վարժություններ

55. Տրված բառերը տողադարձեք հնարավոր բոլոր ձևերով:

ա. երաժշտություն, խնդրագիրքը, գրաքննիչ, ստույգ, բամիա, հնչյուն, ապաշնորհ, հակահրդեհային, կարգադրել, լեռնաբնակ, գործիչ, դասընկեր:

բ. Փայտե, հայերեն, ենթատեսակ, ազևոր, լիանալ, աներևութանալ, հայիոյել, երկնասլաց, Ստրասբուրգից, ինքնասեր, կղզյակ, Ֆրանսիա:

գ. Ծովեզր, զբոսաշրջիկ, քրքրել, տերևաթափ, ոգևորություն, խսղորենկեր, բացահայտ, զարդարանք, սառնասիրտ, Նոյյան:

դ. երկրպագություն, չմրմնջացին, մկան, սեղաններ, փայլատակել, մարմրել, կաթկթել, կարգապահ, պսպղուն, անմշակ, վառվռուն:

ե. Մշտատև, բուռն, միատարր, փրկվեցին, անտրտունջ, ուրախություն, լեռնային, կամրջակ, ուղղանկյուն, գմբեթաձև, կմտածեն, բարձրանալ:

զ. Սթափվել, անսրտացավ, արդյունք, համալսարան, փոխգնդապետ, մոմռալ, գրավվել, վկա, կռվել, անզգույշ, ապա, երևան, ուղեվձար:

է. Կրկնակոշիկ, ձեռնտու, կրկնվել, զգույշ, ժխտել, բրդատու, դուրագրգիռ, տրցակ, սփյուռք, պտտեցնել, տնքտնքալ, մրմռալ, խմբվել, ասարռել:

ը. Ընդգրկել, անկրկնելի, թմբկահար, քրթմնջյուն, կզրնգզրնգացնի, մտտեցնել, մշտնջենական, հռնդյուն, չսփրթնել, տրտնջալ, մկրտվել:

լիայում, Լոմոնոսով-Լոմոնոսովից, Անտոնիո-Անտոնիոյի, Լի-
ա- Լիային, Իսպանիա-Իսպանիայով:

դ. եթե բառը բարդ է, և բաղադրիչները կազմում են **հարադ-
րություն**, այսինքն՝ առանձին գրվելով՝ միասնաբար արտահայ-
տում են մեկ բառի իմաստ, պապ շեշտը հաճախ դրվում է առաջին
բաղադրիչի վրա, ինչպես՝ **վեր կենալ, վեր քաշել, մոտ գալ, ցույց
տալ, այնպես որ, ասես թե, հենց որ, ուժ տալ, խելքի գալ**: Այլ
դեպքերում շեշտը դրվում է հարադրության վերջին բաղադրիչի
վրա, ինչպես՝ **ի դեպ, քիչ-քիչ, ուտել-խմել**:

Ծանոթություն 1: Վերջին շրջանում նկատվող արտասանական տե-
ղաշարժերի հետևանքով փոփոխություններ են նկատվում նաև օտար հա-
տուկ անունների արտասանության մեջ. խոսակցական լեզվում միտում կա
այդ բառերի թեք ձևերում նույնպես պահպանելու քնազրի շեշտադրությու-
նը, ինչպես՝ **Լեոմոնտովի, Պոլշկինի, Ֆրանսիայի, Բեթհովենի** և այլն:
Գրական լեզվում, սակայն, այս միտումն անընդունելի է:

Ծանոթություն 2: Միավանկ բառերի վանկարար ծայնավորը սովո-
րաբար արտասանվում է շեշտված: Բայց կան միավանկ բառեր, որոնք
մեծ մասամբ զուրկ են շեշտից: Օրինակ՝ **գալիս է, նա է, մենք ենք, մի
հարց տվեց**:

Ծանոթություն 3: Կան նաև այլ դեպքեր, երբ նախադասության մեջ
բառը կորցնում է շեշտը՝ հարելով իր լրացմանը կամ լրացյալին: Այս դեպ-
քում գործ ունենք տրամաբանական շեշտի հետ: Օրինակ՝ **տուն գնա,
տնոր գիրքը**:

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՇՏ

Նախադասության մեջ բառերից մեկի բառային շեշտը կարող
է մյուսների համեմատ ավելի ուժգին լինել: Դա կոչվում է տրամա-
բանական շեշտ: Տրամաբանական շեշտը ունի **ճարտասանա-
կան-իմաստային նշանակություն**: Գրավոր խոսքում այն արտա-
հայտվում է շարադասությամբ կամ կետադրությամբ, իսկ բանա-
վոր խոսքում՝ հնչերանգով՝ ուժեղ և ընդգծված արտասանությամբ:

Դրվելով նախադասության որևէ անդամի վրա՝ տրամաբանա-
կան շեշտը **իմաստային երանգ** է հաղորդում ամբողջ նախադա-

սությանը: Ծեշտվում է բովանդակության արտահայտման **կենտրոնական բառը**, այսինքն՝ այն բառը, որին խոսողը առանձնակի նշանակություն է տալիս, և որը տվյալ պահին կարևոր է նախադասության միտքը ծիշտ արտահայտելու համար: Այդ է պատճառը, որ տրամաբանական շեշտը հաճախ անվանում են նախադասության **մտքի շեշտ**: Այսպես՝

1. **Վահանը պատմեց նոր դասը:**
2. **Վահանը պատմեց նոր դասը:**
3. **Վահանը պատմեց նոր դասը:**
4. **Վահանը պատմեց նոր դասը:**

Այս չորս նախադասություններից առաջինում շեշտվում է գործողության գաղափարը, այսինքն՝ այն, որ **պատասխանելու** գործողությունը տեղի է ունեցել՝ **Վահանը նոր դասը պատասխանեց**: Երկրորդ դեպքում ընդգծվում է այն միտքը, որ հենց **Վահանն** է պատասխանել նոր դասը և ոչ այլ ոք՝ **Նոր դասը պատասխանեց Վահանը**: Երրորդ դեպքում շեշտվում է գործողության առարկան՝ **դասը**, այսինքն՝ Վահանը պատասխանեց ոչ այլ ինչ, քան **դասը**՝ **Վահանը պատասխանեց նոր դասը**: Չորրորդ դեպքում շեշտվում է գործողության առարկայի՝ դասի **նոր** լինելը, այսինքն՝ Վահանը պատասխանեց ոչ թե հին, այլ **նոր դասը**՝ **Վահանը պատասխանեց նոր դասը**: Ինչպես տեսնում ենք, տրամաբանական շեշտը այստեղ իմաստային երանգներ է հաղորդում խոսքին:

Ծանոթություն: Տրամաբանական շեշտը սովորաբար դրվում է դիմավոր բայից առաջ, ինչպես, օրինակ՝ **տուն գնա, տնոր գիրքը, սա է քո տեղը**:

Վարժություններ

58. Ընդգծեք տրամաբանական շեշտ կրող բառերը:

Մորս համար գազել

Հիշում եմ դեմքը քո ծեր, մայր իմ անուշ ու անգին,
Լույս խորշումներ ու գծեր, մայր իմ անուշ ու անգին:

Ահա նստած ես տան դեմ, ու կանաչած թթենին
Դեմքիդ ստվեր է գցել, մայր իմ անուշ ու անգին:

Նստել ես լուռ ու տխուր, հին օրերն ես հիշում այն,
Որ եկել են ու անցել, մայր իմ անուշ ու անգին... (Ե. Չարենց)

59. Տրված բառերը կարդացե՛ք ձիշտ շեշտադրությամբ:

ա. Քսանմեկերորդ, միմիայն, ի պաշտոնե, աչքի ընկնել, վեր կաց, հիրավի, իրական, Մոսկվա, Երևանի, ամերիկահայ, արագ-արագ, մեծից փոքր, հեռու-հեռու:

բ. Միասնաբար, միթե, որքան, այնպես, հետևաբար, համաշխարհային, ենթավերնագիր, Լոմոնոսովի, Մոսկվայից, ֆուտբոլային, Պուշկինին, մոտ-մոտ, գիշերուզօր:

60. Նշե՛ք այն երեքական բառերը, որոնց վերջին վանկը շեշտված է:

ա. Որերորդ, նամանավանդ, արտահագուստ, գրեթե, համաեվրոպական, գործունեություն:

բ. Ենթաորովայնային, անհնազանդորեն, կամայական, քանիե-րորդ, իհարկե, գամփռ:

գ. Նույնիսկ, համահամալսարանական, անհամարժեք, Պուշկին, սանր, հիվանդանոց:

դ. Ամենքը, նույնքան, Լերմոնտով, կրակմարիչ, վարձավճար, հարատև, հետընթաց:

ե. Դոստոևսկի, Փարաջանով, Հովհաննես, Հոլանդիա, Բաղդասարյան, Նարեկացի, Մարգարետունի:

զ. Միթե, ովևե, լուսնկա, կարգադրել, գիշանգո, արագորեն, հետզհետե:

ՀԼՁՅՈՒՆ ԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բառի ձևափոխության կամ նոր բառեր կազմելու ժամանակ, երբ բառի շեշտը տեղափոխվում է բառավերջում նոր ավելացած մասի վերջին վանկի ծայնավորի վրա, նախկին շեշտակիր ծայնավորի արտասանությունը թուլանում է: Նա հայտնվում է թույլ դիրքում և կարող է ենթարկվել փոփոխության, այսինքն՝ կարող է վերածվել ուրիշ ծայնավորի կամ դուրս ընկնել:

Օրինակ՝ **ինքնասեր** բառի մեջ շեշտն ընկնում է վերջին **սեր** վանկի **ե** ծայնավորի վրա, իսկ **ինքնասիրություն** բառի մեջ շեշտը տեղափոխվում է վերջնավանկի **ու** ծայնավորի վրա: Նախորդ շեշտակիր **ե** ծայնավորը, կորցնելով շեշտը, թույլ է արտասանվում և փոխվում է **ի** ծայնավորի: Կամ՝ երբ **նկարիչ** բառին ավելացնում ենք **-ական** ածանցը, **ի** ծայնավորը, կորցնելով շեշտը, դուրս է ընկնում՝ **նկարիչ - նկարչական**, նմանապես՝ **դպիր - դպրոց, ուղեկից - ուղեկցել** և այլն:

Որևէ ծայնավորի կամ երկինչյունի փոփոխությունը կամ սղումը կոչվում է **հնչյունափոխություն**:

Սղում ասելով՝ հասկանում ենք հնչյունի դուրս ընկնելը:

Հնչյունափոխությունը պայմանականորեն նշվում է մաթեմատիկական մեծի նշանով՝ $>$, սղումը՝ սլաքով՝ $\uparrow$, օրինակ՝ **վեճ - վիճել** ($ե>ի$, այսինքն՝ **ե-ն** ($ե-ն$) դարձել է **ի**), **վերջին - վերջնական** ($ի>\uparrow$, այսինքն՝ **ի-ն** սղվել է), **իղձ - ըղձալի** ($ի>ը$), **գիրք - գրքի** ($ի>ը$), **ջուր - ջրաչափ** ($ու>ը$), **երեսուն - երեսնամյա** ($ու>\uparrow$), **կատու - կատվառյուծ** ($ու>վ$):

Հնչյունափոխության են ենթարկվում նաև երկինչյունները, օրինակ՝ **գույն - գունավոր** ($ույ>ու$), **քրիստոնյա - քրիստոնեություն** ($յա>ե$), **ծյուն - ծնծաղիկ** ($յու>ը$):

Այն բառը, որի մեջ տեղի է ունենում հնչյունափոխություն, կոչվում է հնչյունափոխված բառ կամ բառի հնչյունափոխված տարբերակ:

Հայերենում սովորաբար հնչյունափոխության են ենթարկվում է (ե), ու, ի ձայնավորները և յա, այ, ույ երկհնչյունները:

Ծանոթություն: Հազվադեպ հնչյունափոխվում են նաև ա, օ (ո) ձայնավորները: Օրինակ՝ քաղաք - քաղքենի, դադար - դադրել, պահապան - պահպանել, կոծակ - կոճկել, համար - համրել, համրիչ (ա ձայնավորը սղվել է), վազել - վազվ(ը)զել, կապել - կապկ(ը)պել, քաշել - քաշք(ը)շել (ա>ը). օրոր - օրրան, որկոր - որկրամուկ (օ ձայնավորը սղվել է), փորել - փորփ(ը)րել, մոտ - մ(ը)տերիմ (օ>ը) և այլն:

2ԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՀՆՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Է (ե) ձայնավորի հնչյունափոխությունը

Մի շարք բառերի փակ վանկի է-ն (ե-ն), շեշտը կորցնելով, դառնում է ի, օրինակ՝

էգ - իգական, էշ - իշատեր, էջ - իջնել, գես - գիսաւոր, գեր - գլրանալ, գրագետ - գրագիտություն, դեզ - դիզել, դեմ - դիմանալ, դեպք - դիպված, դեսո - դիտել, գենք - գիւնվոր, կեզ - կիզակետ, կես - կիսել, հանդես - հանդիսավոր, հրավեր - հրաւիրել, մեզ - միգապատ, մեջ - միջոց, շեն - շինական, պատվեր - պատվիրել, պարտեզ - պարտիզպան, պետք - պիտանի, սեզ - սիզամարզ, սեր - սիրել, վեճ - վլիճել, վեսլ - վիպակ, վերք - վիրավոր, վրեպ - վրիպակ, տեր - տիրոջ, քեն - քինախնդիր, օրենք - օրինական:

Մի շարք այլ բառերում այդ հնչյունափոխությունը տեղի չի ունենում՝ արգելք - արգելել, լեռ - լեռնային, խելք - խելացի, պետ - պետական, ջերմ - ջերմանալ, սերմ - սերմնացան և այլն:

Վարժություն

61. Վերականգնեք տրված բառերի անհնչյունափոխ արմատները՝ նշելով հնչյունափոխությունը:

ա. Կիսամյակ, վիրաբույժ, վիճաբանություն, իշայծյամ, իջվածք, զինագործ, ապավինել, դիմադրություն, սիգաճեմ, միտումնավոր, հանդիսատես, վիրահատում, գիսակ, գիտակ:

բ. Վիպասան, ընդդիմակաց, դիտարժան, գիրուկ, վիմագիր, վիրակապ, քինոտ, հակամիտություն, գիսաստղ, սիզախոտ, զինապարտ:

Օրինակ՝ կիսամյակ – կես (ե>ի):

Ի ծայնավորի հնչյունափոխությունը

1. Մի շարք միավանկ բառերի փակ վանկի ի–ն դառնում է ը, որը բառասկզբում գրվում է, օրինակ՝

ինձ – ընծուտո, իղձ – ըղձական, ինչ – ընչագուրկ, գիծ – գծել, գիտ – գնել, գիր – գրող, թիվ – թվանշան, խիղձ – խղձալի, ծին – ծնունդ, կիր – կրաքար, հին – հնաոձ, ձիգ – ձգել, միտք – մտածել, ջիղ – ջղային, սիրտ – սրտոտ:

2. Բազմավանկ բառերի վերջին փակ վանկի ի–ն կարող է՝

ա. սղվել՝ գեղեցիկ – գեղեցկություն, գրիչ – գրչակ, դեղին – դեղնուց, երկիր – երկրային, խնդիր – խնդրանք, ծաղիկ – ծաղկել, կապիկ – կապկել, կոշիկ – կոշկակար, (մանրա)գնին – գննել, միջին – միջնադար, նկարիչ – նկարչական, վարիչ – վարչապետ, վերջին – վերջնական, փոթորիկ – փոթորկահույզ:

բ. դառնալ ը՝ արժիձ – արժձագույն, խիղձ – խղձալ, միրգ – մրգառատ, նարինջ – նարնջագույն, սիրտ – սրտացավ, քիմք – քմահաձ:

3. Բազմավանկ բառերի վերջին բաց վանկի ի–ն երբեմն կարող է՝

ա. ծայնավորից առաջ սղվել՝ աղամխի – աղամխատուն, ամայի – ամայություն, ամեհի – ամեհություն, բարի – բարություն, գերի – գերություն, թշնամի – թշնամություն, փոշի – փոշուտել:

բ. –ակ ածանցից առաջ դառնալ յ՝ աղամխի – աղամխյակ, կղզի – կղզյակ, հոգի – հոգյակ, որդի – որդյակ, պատանի – պատանյակ:

գ. ա հոդակապի հետ միանալով՝ դառնալ ե (ի+ա>ե)՝ այգի+ա+գործ – այգեգործ, բարի+ա+տես – բարետես, գարի+ա+հաց – գարեհաց, հոգի+ա+վարք – հոգեվարք, ոսկի+ա+գոծ – ոս-

կլափած, որդի+ա+սեր – որդևսեր, տտարի+ա+դարձ – տարեդարձ, ուղի+ա+ գիր – ուղեգիր.

Այի շարք բառերում այդ հնչյունափոխությունը տեղի չի ունենում՝ կանացի – կանացիություն, դրացի – դրացիական, բերրի բերրիություն, գյուղացի – գյուղացիություն, ճշմարտացի – ճշմարտացիություն, որդի – որդիական:

Վարժություններ

62. Վերականգնե՛ք տրված բառերի անհնչյունափոխ արմատները՝ նշելով հնչյունափոխությունը:

ա. Լնջել, ջնջոց, սրտակից, նախնադար, վշտակցել, գնահատական, փղիկ, լճափ, մարմնական, մրգասեր:

բ. Կավճապատ, նարնջագույն, ալյակ, մսակեր, տարեվերջ, բրածո, գծություն, պատանյակ, հոգեթով, մտավոր:

Օրինակ՝ ննջել – նինջ (ի>ը):

63. Հետևյալ բառերով մեկական նոր բառ կազմե՛ք այնպես, որ է կամ ի ծայնավորը հնչյունափոխվի:

Խինդ, նախնի, հրավեր, վրեժ, տեր, նվեր, շեն, քեն, պատվեր, շոգի, շիշ, կիթ, բիծ, թախիծ, ծաղիկ, սկիզբ, գիրկ, ոսկի:

Օրինակ՝ այգի – այգեգործ (ի+ա>ե):

64. Փակագծերում նշե՛ք, թե ինչ հնչյունափոխություն է կատարված հետևյալ բառերում:

ա. Ծաղկաբույծ, թախծոտ, ընկալել, փոթորկել, մտածել, կապություն, մրրկածուփ, կոշկավաճառ, կրավորական, խնդրագիրք, հակադրություն, հոգեպարար:

բ. Քեռակին, նախնական, գաղտնապահ, հայրենասեր, թշնամական, վրիժառու, կենդանակերպ, որդյակ, թերանալ, թերակատար, խեցգետին, կռնակ, եկեղեցական:

գ. Հոգեբանություն, թվական, ոսկեվաճառ, բարեգործ, կոճկել, ապակեգործ, գոտեպնդել, շրջմովիկ, ուղեկալ, տարեմուտ, ուղեծիր, ստահող, ուղեվճար, բարեպաշտ:

Օրինակ՝ ծաղկաբույծ (ի>↑):

Ու ձայնավորի հնչյունափոխությունը

1. Մի շարք միավանկ բառերի փակ վանկի ու-ն դառնում է ը, որը բառասկզբում գրվում է, օրինակ՝

ունչ - ընչացք, ունդ - ընդեղեն, ումպ - ըմպել, գութ - գթառատ, գունդ - գնդակ, թութ - թթենի, թուղթ - թղթի, լուծ - լծել, խուց - խցիկ, կութք - կրծոսկր, հումձ - հնձվոր, հուր - հրկեզ, ծուկ - ձկնորս, մութ - մթան, մուր - մրահոն, նուտ - նռնենի, շունչ - շնչել, ջուր - ջրկյր, սուր - սրաթև, սուրբ - սրբազան, տունկ - տնկել, ցուրտ - ցրտահարվել, փունջ - փնջել:

2. Բազմավանկ բառերի վերջին փակ վանկի ու-ն կարող է՝

ա. սղվել՝ ամուր - ամրանալ, անասուն - անասնապահ, աշուն - աշնանացան, բազուկ - բազկերակ, գարուն - գարնանային, գլուխ - գլխավոր, երեսուն - երեսնամյա, հանուր - հանրակացարան, մածուն - մածնաթան, տեսուչ - տեսչություն, փետուր - փետրազարդ:

բ. դառնալ ը՝ գալուստ - գալստյան, ժողովուրդ - ժողովրդական, ծնունդ - ծննդատուն, մրմունջ - մրմնջալ, շշունջ - շշնջալ, սնունդ - սննդարար, փախուստ - փախստական:

3. Բառավերջի բաց վանկի ու-ն որոշ բառերում դառնում է վ՝ առու - առվակ, բու - բվեճ, թթու - թթվել, լեզու - լեզվակ, կատու - կատվածագ, ծու - ծվածեղ, չու - չվերթ, ուրու - ուրվական:

Վարժություններ

65. Հետևյալ բառերով մեկական բաժն կազմեք այնպես, որ ու ձայնավորը հնչյունափոխվի:

Բուրդ, զուսպ, ումպ, խուռն, հուր, անութ, շուրջ, լեզու, շուն, նուշ, կկու, ծիծու, ունդ, ունչ, ժողովուրդ, սերունդ, պտուղ, քուրմ, առատուր:

66. Փակագծերում նշեք, թե ինչ հնչյունափոխություն է կատարված հետևյալ բառերում:

ա. Ընչացք, անասնապահ, ամրանալ, թթվահամ, խորհրդավոր, երեսնամյա, առվեզր, մեղվապահ, գնդասեղ, ուրվագիծ:

բ. կորստյան, աղվամագ, ուրվական, լծկան, ստախոս, թփուտ, ըմպանակ, ձկներ, կատվախաղ, մածնաման, նռնածաղիկ:

Օրինակ՝ **ընչացք** – ունչ (ու>ը):

Ը ձայնավորի հնչյունափոխությունը

Բառավերջի գաղտնավանկի **ը** ձայնավորը սղվում է այն բոլոր դեպքերում, երբ բառին ավելացող բաղադրիչը սկսվում է ձայնավորով, օրինակ՝

բարձ(ը)ր – բարձրանալ, դուստ(ը)ր – դստերիկ, թանձ(ը)ր – թանձրություն, լիտ(ը)ր – լիտրանոց, կայս(ը)ր – կայսրուհի, համ(ը)ր – համրանալ, հյուս(ը)ն – հյուսնություն, արկ(ը)դ արկղեր (բայց՝ անգ(ը)ղ – անգ(ը)ղներ), գամի(ը)ռ – գամի(ը)ռներ):

Վարժություններ

67. Գաղտնավանկ ունեցող հետևյալ բառերով երկուական բառ կամ բառաձև կազմեք այնպես, որ **ը ձայնավորը սղվի:**

Արկղ, աստղ, ազդր, քաղցր, մեղր, տետր, ցածր, կարծր, դուստր, մանր:

Օրինակ՝ արկղ – արկղիկ, արկղեր:

68. Դուրս գրեք այն երեք բառերը, որոնցում կա **ը ձայնավորի սղում:**

Մարմնամարզություն, դեղնավուն, վագրենի, արթնանալ, լրաբեր, համրանալ, կրկնություն, բարձրաբերձ, սրտացավ:

ԵՐԿՆԵՅՑՈՒՆՆԵՐԻ ՀՆՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1. Բազմավանկ բառերի վերջին բաց կամ փակ վանկի յա երկհնչյունը երբեմն դառնում է է (գրվում է ե), օրինակ՝

գործույա – գործունեություն, **պաշտոնյա** – պաշտոնեական, **քրիստոնյա** – քրիստոնեական, **սուոյան** – սուտենակալ:

կրկարակյաց – երկարակեցություն, ժանյակ – ժանեկազարդ, հայացք – հայեցակետ, հավիտյան – հավիտենական, հեծյալ – հեծելազոր, մատյան – մատենագիր, սենյակ – սենեկսարահ, վայրկյան – վայրկենական:

2. Փակ վանկի ու երկհնչյունը կարող է՝

ա. դառնալ ու, օրինակ՝ բույժ – բուծել, գույժ – գուծել, գույն – գունաւոր, դաշույն – դաշունահարել, զգույշ – զգուշացում, զեկույց – զեկուցում, զրույց – զրուցընկեր, լույս – լուսավոր, համբույր – համբուրել, հույն – հունական, ողջույն – ողջունել, ցույց ցուցարար.

բ. դառնալ ը՝ բույն – բ(ը)նաւեր.

գ. սղվել՝ սառույց – սառցակալել, կապույտ – կապտաւուն:

Ծանոթություն: Սխալ է այս խմբի բառերի մեջ ու–ի փոխարեն յու կամ ու արտասանելը՝ համբույր – համբուրել, զրույց – զրուցընկեր, ողջույն – ողջույնել կամ ողջունել, մշակույթ – մշակութային:

3. Փակ վանկի յու երկհնչյունը կարող է՝

ա. դառնալ ը՝ ծյուն – ձ(ը)նծաղիլ, ձ(ը)նիւսլ.

բ. սղվել՝ արյուն – արնանման, ալյուր – ալրաղաց:

Վարժություններ

69. Հետևյալ արմատներով երկուական բառ կազմեք այնպես, որ ույ երկհնչյունը հնչյունափոխվի:

Լույս, պաճույճ, լույծ, ծույլ, փույթ, խույզ, սույզ, թույն, գույժ, բույր, ծույլ, կապույտ:

70. Վերականգնեք հնչյունափոխված հիմքերի անհնչյունափոխ ձևերը:

ա. Ձնհալ, սառցարան, հրապուրիչ, անասնաբուծություն, մատուցող, հուսալի:

բ. Համբուրել, դաշունիկ, ընկուզենի, ձնաբուք, արնանման, ատամնաբուժարան:

Օրինակ՝ ձնհալ – ձյուն:

Ամփոփիչ վարժություններ հնչյունափոխության վերաբերյալ

71. Վերականգնե՛ք տրված բառերի հնչյունափոխված հիմքերի անհնչյունափոխ սկզբնաձևերը՝ փակագծերում նշելով հնչյունափոխությունը:

ա. Երգչախումբ, ցժվել, փոշեխառն, առջև, թուլակազմ, թրատել, հոգյակ, քննություն, սփռոց, ծչակ, կլանել, թերանալ, փութեռանդ, վայրենանալ, ժուժկալ, քաղքենիություն, գործնական:

բ. Նախըապան, խոսնանավել, մեղվաբույծ, ժրաջան, լեզվակ, թերահավատ, խցան, կրկնուսույց, թխամորթ, գրգամուլ, ճահճապատ, գրչագիր, առվեգր, մեհենական, տիրասեր, անգիտակ:

գ. Սերնդափոխություն, շարժման, փորփրել, պարսկական, ծեռագրաբան, պահպանել, առաքելություն, ռմբակոծել, անդադրում, կատվախոտ, աշխուժանալ, մարդկային, զինանշան:

դ. Հանդգնել, հարստանալ, սնահավատ, փչակ, կպչել, երջանկանալ, խտություն, խարխլել, տամկություն, պատրանք, քրքջալ, փլվել, կապտել, փաղաքշանք, զրկանք, զրախոսություն:

ե. Բնական, դիզել, տնաբույս, անիծել, նրբանկատ, քնքշանալ, միջօրեական, դեղնագոծ, վիմարձան, կարմրակտուց, խնկաման, սառցաբեկոր, որկրամուլ, խրթնաբանություն, կուսական:

Օրինակ՝ Երգչախումբ–երգիչ (ի>†):

72. Տրված բառերում առկա է հնչյունափոխության երկուական դեպք. նշե՛ք դրանք փակագծում՝ վերականգնելով բաղադրիչների անհնչյունափոխ սկզբնաձևերը:

ա. Սննդամթերք, վարչատնտեսական, թռչուն, հրաձգարան, խորհրդատվություն, երգչախմբային, հոգեբուժարան, տնօրինություն:

բ. Ամրապնդել, բաժնետիրություն, մատենագրական, բրդատվություն, չվացուցակ, բնօրրան, տեղեկատվություն, հայրենասիրական:

գ. Հնագիտություն, միջամտել, գնացուցակ, բնօրինակ, անասնաբուժական, մարդկայնություն, բնատնտեսություն:

Օրինակ՝ սննդամթերք – սննդ (սնունդ, ու>ը), սն (սուն, ու>ը):

73. Կազմե՛ք մեկական այնպիսի բառ, որոնցում տրված բառերը և արմատները չենթարկվեն հնչյունափոխության:

ա. Բույր, գութ, –վրեպ, ամիս, –պուրծ, կույս, մուտ, արթուն, գունդ, բուն, խուփ, զուրկ, լուրջ, սուրբ, նուրբ, խախուտ, աղմուկ, –խույզ, –զնին, վեճ, –մուխ:

բ. –մուղ, բույն, դրուժ, լույս, մունջ, –տու, –հունչ, վիզ, –հուպ, –լիս, նուշ, ցույց, սկիզբ, ցուլ, կիթ, լեզու, երկու, գես, թումբ, տիպ, միտ, պատում, հարուստ:

գ. Օրոր, գրգիռ, մտերիմ, ջուր, հոգի, եղջուր, մոտ, նիշ, նիստ, –ցունց, գույն, սյուն, ծյուն, –սուն, հույս, խարխուլ, –պիշ, շեն, սիրտ, սփյուռ, ծիգ, –ազուն:

դ. Աղի, զույգ, գութ, թիռ, –խիլ, ծույլ, ժպիտ, շապիկ, երջանիկ, հավետ, համբույր, կուռ, մուկ, տուն, շուք, լիճ, լուր, գիր, քաղցր, զուր, բլուր, մարմին, կշիռ:

ե. –կորույս, կես, –ցիր, մրրիկ, –փթիթ, օրոր, –դետ, որդի, կարմիր, հինգ, թուղթ, անգղ, ինձ, ումպ, –զեն, աստղ, –սույզ, շուն, հանդես, հրավեր, –մետ, –բում:

74. Կազմե՛ք երկուական այնպիսի բառ, որոնցում տրված բառերը և արմատները մի դեպքում չենթարկվեն, մյուսում ենթարկվեն հնչյունափոխության:

ա. Բույս, ծյուն, բույր, –փթիթ, գունդ, քաղաք, –հունչ, ծիգ, բուն:

բ. Նուրբ, կոշիկ, աստղ, ուղի, –ցունց, քեն, –ցիր, –լիս, վեճ, պատառ:

գ. Ցամաք, կղզի, մունջ, կարմիր, փշուր, օգուտ, –դետ, հանուր, –լույծ:

դ. Համբույր, –շեն, –սուն, մատույց, –խույս, արյուն, որդի, –լիք, խում:

ե. Համար, ծիլ, ումպ, ծաղիկ, կիրթ, կուռ, հոգի, ծածուկ, նկարիչ:

զ. Արծիվ, –խում, երկու, նիշ, աղի, գույժ, ազնիվ, թթու, ծուկ, շահույթ:

Օրինակ՝ լույս– 1. լուսավոր, 2. վերջալույս:

75. Կապակցությունների իմաստը արտահայտե՞ք մեկ բառով. նշե՞ք կատարվող հնչյունափոխությունը:

ա. Չուկ վաճառող
բարձր հասակ ունեցող
դեմքի գիծ
գարու ջուր
բուրդ տվող

միտք անել
հինգ տարվա
պատիժ տալ
գերի տանել
բարի սիրտ ունեցող

Օրինակ՝ ծուկ վաճառող – ձկնավաճառ (ու>ղ)

բ. բարձր դիրք ունեցող
գինի վաճառող
փոքր կղզի
պտուղ ուտող
փոքր առու

հուր շիջող (հանգցնող)
կուռք պաշտող
բույնը ավերված
բույր ունեցող
զրույց անել

գ. զգույշ լինել
ծաղիկների փունջ
փոքրիկ տուն
լույս տվող
մանր բաներ վաճառող

ալյուր վաճառող
մեղու բուծող
նուշի ծառ
փոքրիկ շուն
սուտ ասել

դ. հոգի խռովող
կեսի բաժանել
էշի տեր
վեպ գրող
սունկ սիրող

լուր բերող
գույժ հաղորդող
ապակու մշակմամբ զբաղվող
խորհուրդ տվող
գիր բերող

ե. տուն շինող
բեռ կրող
գնդի կեսը
սուր միտք ունեցող
գենքերը կրող

ծուկ կուլ տվող
ցույց տալու փայտ
պանիր ուտող
հույս տվող
վերին հարկ

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Որևէ գրավոր լեզվի տառերի՝ որոշակի կարգով դասավորված ամբողջությունը կոչվում է այբուբեն:

Հայերենի այբուբենի յուրաքանչյուր տառ ունի իր անվանումը. ա-այբ, բ-բեն, գ-գիմ, դ-դա, ե-եչ, զ-զա, է-է, ը-ըթ, թ-թո, ժ-ժե, ի-ինի, լ-լյուն, խ-խե, ծ-ծա, կ-կեն, հ-հո, ծ-ծա, դ-դատ, ճ-ճե, մ-մեն, հ-հի, ն-նու, շ-շա, ո-վո, չ-չա, պ-պե, ջ-ջե, ո-ռա, ս-սե, վ-վեվ, տ-տյուն, ր-րե, ց-ցո, ի-վյուն, փ-փյուր, ք-քե, և-ել, օ-օ, ֆ-ֆե:

Ժամանակակից հայերենի այբուբենն ունի 39 տառ, որոնցով արտահայտվում են հայերենի 36 հնչյունները: Մնարոպյան այբուբենն ուներ 36 տառ: Տարբեր ժամանակներում այբուբենին ավելացվել են օ, ֆ, և տառերը, իսկ ի (վյուն) տառը փոխարինվել է ու երկտառով:

Մանրություն: Մնարոպյան այբուբենը օ և ֆ տառերով լրացվել է 12-րդ դարում: Հետագայում առանձին տառ է ծանաչվում նաև և-ը՝ որպես ե և ի տառերի սղագրական նշան (կցագիր): Ու-ն մնարոպյան այբուբենում չկար, քանի որ գրվում էր իբրև երկու տառերի՝ կա-պակցություն՝ ու=ո+ւ:

Ժամանակակից հայերենի այբուբենի ամեն տառ ունի իր մեծատառ և փոքրատառ տեսակները՝ բացի և-ից:

Տառերի թվային արժեքը: Հայերեն այբուբենի տառերն ունեն իրենց թվային արժեքը: Դրանք հարմարեցված են թվերի տասնորդական համակարգին հետևյալ կերպ. Ա - 1, Ժ - 10, Ծ - 100, Ռ - 1000: Դրանց միջև ընկած տառերը ներկայացնում են թվերի հաջորդական կարգ: Այսպես՝

Ա - 1	Ժ - 10	Ճ - 100	Ռ - 1000
Բ - 2	Ի - 20	Մ - 200	Ս - 2000
Գ - 3	Լ - 30	Յ - 300	Վ - 3000
Դ - 4	Խ - 40	Ե - 400	Տ - 4000
Ե - 5	Ծ - 50	Ը - 500	Ր - 5000
Զ - 6	Կ - 60	Ո - 600	Ց - 6000
Է - 7	Հ - 70	Ձ - 700	Ի - 7000
Ը - 8	Ձ - 80	Պ - 800	Փ - 8000
Թ - 9	Ղ - 90	Ջ - 900	Զ - 9000

Օրինակ՝ եթե անցյալում անհրաժեշտ էր գրել **19**, ապա գրվում էր նախ **10** նշանակող տառը՝ **Ժ**, ապա՝ **9** նշանակող տառը, և ունենում էինք՝ **ԺԹ** (19): Նմանապես՝ **Ե=5, Է=7, ԻԱ=21, ՍԷ=2007**:

Այժմ ընդունված է տառերով նշանակել հաջորդական կարգ՝ տառերը գործածելով դասական թվականների նշանակությամբ, ինչպես՝ **Ա** - առաջին, **Բ** - երկրորդ, **Գ** - երրորդ, **ԺԱ** - տասնմեկերորդ:

Այբուբենի ուշ ավելացված **ու, և, օ, ֆ** տառերը թվային արժեք չունեն:

Բառերի այբբենական դասավորությունը: Բառարաններում կամ բառացանկերում բառերը, անվանումները դյուրությամբ գտնելու նպատակով դասավորում են այբբենական կարգով:

Այբբենական կարգով դասավորելու դեպքում տրված բառերը նախ դասավորում են առաջին տառի հերթականությամբ, ապա նույն տառով սկսվող բառերը՝ հաջորդ տառի հերթականությամբ, և այսպես մինչև վերջ:

Օրինակ՝ ունենք հետևյալ ազգանունները՝ **Աբգարյան, Աբովյան, Հակոբյան, Ասատրյան, Անտոնյան, Նահապետյան, Հովհաննիսյան, Աբրահամյան**: Դրանց այբբենական դասավորությունը կունենա հետևյալ պատկերը՝ **Աբգարյան, Աբովյան, Աբրահամյան, Անտոնյան, Ասատրյան, Հակոբյան, Հովհաննիսյան, Նահապետյան**:

Վարժություններ

76. Գրե՛ք տրված բառերը կազմող տառերի անվանումները:

Որդի, լուսավոր, ծմեռ, բույս, գունդ, մանուշակ, աշտարակ, նուռ, խաղող, թիթեռնիկ, ուժեղ:

77. Յուրաքանչյուր տառի և տառակապակցության դիմաց գրեք դրանց թվային արժեքը:

ԺԷ, Ա, Լ, Ն, ԻԵ, ԽԱ, ՍԲ, ՌՃԺ, ՌՋՂԸ:

Օրինակ՝ ԺԷ-17, 17-րդ:

78. Ազգանունները դասավորեք այբբենական կարգով:

ա. Ավագյան, Ասլանյան, Հովհաննիսյան, Ամալյան, Ղազարյան, Այվազյան, Հայրիկյան, Նալբանդյան, Հակոբյան:

բ. Հունանյան, Հրաչյան, Նիկողոսյան, Հարությունյան, Անդրեասյան, Ասատրյան, Հովսեփյան, Տերտերյան:

79. Բառերը դասավորեք այբբենական կարգով:

ա. Հայ, հայտարարություն, հայասեր, համտեսել, հայրենիք, հայացք, հնարավոր:

բ. Հավատք, հավաստի, հավանաբար, հավասար, հավասարապես, հավասարություն:

գ. Հետևել, հիանալ, հպատակվել, հնարավոր, հայաստանաբնակ, Հայաստան:

դ. Ծիրան, կենսատու, խորհուրդ, երջանկաբեր, ծերակույտ, կոն, խնկեղեգ, ելուստ:

ե. Ձեռնարկ, ղողանջել, ծմռել, յողախառն, ձկնկիթ, ճյուղավոր, կղզյակ, խխունջ, դժմապուր:

80. Ո՛ր շարքի բոլոր բառերն են այբբենական կարգով դասավորված:

ա. Մանսուրյան, Մանասյան, Մանգասարյան, Մայրապետյան, Մարջանյան, Աարտիկյան, Մարտիրոսյան, Մինասյան, Միսաքյան, Մյասնիկյան:

բ. Մադաթյան, Մակարյան, Մակեյան, Մայրապետյան, Մանասյան, Մարջանյան, Մարտիրոսյան, Մինասյան, Միսաքյան, Մյասնիկյան:

գ. Մադաթյան, Մակարյան, Մահտեսյան, Մայրապետյան, Մարջանյան, Մարտիկյան, Մարտիրոսյան, Միսաքյան, Մյասնիկյան, Մինասյան:

ՄԵԾԱՏԱՌԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ¹

Մեծատառով են գրվում հատուկ անունները՝ **Վահան, Հակոբ, Երևան, Մասիս** և այլն: Հատուկ անունը կարող է կազմված լինել մի քանի առանձին գրվող բաղադրիչներից: Դրանք կոչվում են հարադրավոր բաղադրյալ հատուկ անուններ: Հարադրավոր բաղադրյալ հատուկ անունների մեջ մեծատառերի գործածության վերաբերյալ պետք է իմանալ հետևյալ կանոնները.

1. Հարադրավոր բաղադրյալ հատուկ անվան բոլոր բաղադրիչները (բացի շաղկապներից) սկսվում են մեծատառով.

ա. Պետությունների և դրանց միությունների անուններում, ինչպես՝ **Հայաստանի Հանրապետություն, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Անկախ Պետությունների Համագործակցություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն** և այլն:

Ծանոթություն 1: Պատմական երկրանունների միայն առաջին բաղադրիչն է մեծատառով գրվում՝ **Կիլիկիայի թագավորություն, Բյուզանդական կայսրություն, Հռոմեական սրբազան կայսրություն:**

Ծանոթություն 2: Կղզիների վրա գտնվող մի շարք պետությունների անվանումներ (**Կոկոսյան Կղզիներ, Կուկի Կղզիներ, Սեյշելյան Կղզիներ, Սուրբ Հեղինեի Կղզի** և այլն) ունեն իրենց համանունը՝ որպես կղզու կամ կղզեխմբի անվանում (**Կոկոսյան կղզիներ, Կուկի կղզիներ.**

¹ ՀՀ ԿԳՆ ԼՊՏ հայերենի բարձրագույն խորհրդի 2003 թ. որոշմամբ՝ մեծատառերի ուղղագրության կանոններում որոշ փոփոխություններ են կատարվել. որոնք առայժմ միայն մասամբ տեղ են գտել 12-ամյա դպրոցի 7-րդ դասարանի «Հայոց լեզվի» նոր դասագրքում (2006 թ.), որով սովորողները դեռևս չեն ավարտել դպրոցը: Այդ նկատառումով՝ սույն ձեռնարկում պահպանվել են մեծատառերի ուղղագրության այն սկզբունքները, որոնք հիմնված են ՀԽՍՀ տերմինաբանական հանձնաժողովի 1964 թ. որոշման վրա: Ձեռնարկի ստուգողական վարժություններում ընդգրկված չեն մեծատառերի գործածության այնպիսի դեպքեր, որոնց գրությունը հին և նոր դասագրքերով ու կանոններով հակասության մեջ է: Իսկ հավելվածի ուղղագրական բառացանկում նման դեպքերը տրված են երկու տարբերակով: Տրամաբանական է, որ դրանք առայժմ տեղ չեն կարող գտնել քննական թեստերում:

Մարշալյան կղզիներ, Սուրբ Հեղինեի կղզի): Տարբերությունն այն է, որ երկրորդ դեպքում մեծատառով են գրվում ոչ բոլոր բաղադրիչները:

բ. Լրացումից և լրացյալից կազմված այն հարադրավոր բաղադրյալ հատուկ անուններում, որոնց մեջ լրացյալը հատուկ անուն է, իսկ լրացումը՝ մականուն, ինչպես՝

Տիգրան Մեծ, Արտաշես Ա Բարերար, Մեծ և Փոքր Մասիսներ, Արևելյան Տավրոս, Սահակ Պարթև, Սարգիս Պիծակ, Մուշեղ Իշխան, Վահրամ Կրտսեր, Վերլին Արտաշատ, Նոր Զելանդիա, Նոր Նորք, Լոս Անջելես, Սողոմոն Իմաստուն, Գրիգոր Լուսավորիչ, Արա Գեղեցիկ, Առյուծ Միեր և այլն:

2. Հարադրավոր բաղադրյալ հատուկ անվան միայն առաջին բաղադրիչն է սկսվում մեծատառով.

ա. Լրացումից և լրացյալից կազմված այն անուններում, որոնց մեջ լրացյալը հատուկ անուն չէ, ինչպես՝

Սևանա լիճ, Սև ծով, Հայկական սպար, Հայկական բարձրավանդակ, Մեծ արջի համաստեղություն, Հյուսիսային պսակ, Բերենիկեի վարսեր, Հյուսիսային սառուցյալ օվկիանոս (Սառուցյալ օվկիանոս), Նեղոսի հովիտ, Հրո երկիր, Վայոց ձոր, Վայոց ձորի մարզ, Հայկ նահապետ, Մխիթար սպարապետ, Արշակունյաց հարստություն, Հայկ դյուցազն, Հայկական լեռնաշխարհ, Մովսես մարգարե, Գևորգյան ճեմարան, Սուրբ խաչ եկեղեցի, Խոր վիրապ, Խոր վիրապի վանք, Ցաղաց քարի վանք և այլն:

բ. Ստեղծագործությունների, գիտական աշխատությունների, պարբերականների անուններում, ինչպես նաև հիմնարկներին, զանազան հաստատություններին ու առարկաներին տրվող պայմանական անուններում, որոնք առնվում են չակերտների մեջ՝

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուն, Դ. Վարուժանի «Ցորյանի ծովեր» բանաստեղծությունը, Ա. Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքը և այլն:

գ. Պետության կողմից շնորհվող շքանշանների անուններում՝ Մարտավան խաչ շքանշան, Պատվո շքանշան և այլն:

դ. Համաշխարհային կազմակերպությունների, հաստատությունների, եզակի քաղաքական, հասարակական մարմինների անուններում՝

Արժույթի միջազգային հիմնադրամ, Միավորված ազգերի կազմակերպություն, Անվտանգության խորհուրդ, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն և այլն:

ե. երկրների կենտրոնական ղեկավար մարմինների անուններում՝ (<<) Ազգային ժողով, (Անգլիայի) Համայնքների պալատ, (Ֆրանսիայի) Ազգային ժողով, (Ռուսաստանի) Պետական դումա և այլն:

Ծանոթություն: Եթե պետական, կուսակցական ղեկավար մարմինների անվանումները չեն տեղայնացված, ապա, որպես հասարակ անուններ, գրվում են փոքրատառով՝ գիտության և կրթության նախարարություն, գիտությունների ակադեմիա, պետական համալսարան, բժշկական համալսարան, գրողների միություն, վճռաբեկ դատարան և այլն: Այսպես են գրվում նաև պետական, ռազմական, գիտական պաշտոնների, պատվավոր այլ կոչումների, մրցանակների անվանումները՝ գլխավոր դատախազ, գիտության վաստակավոր գործիչ, վաստակավոր մանկավարժ, ակադեմիայի իսկական անդամ, ազգային հերոս և այլն:

զ. Պատմական նշանավոր անցքերի, պետական տոների անուններում՝

Մարտի ուր, Մայիսի քսանուր, Նոր տարի, Ռազմաօդային ուժերի օր, Թարգմանչաց տուն, Հայրենական մեծ պատերազմ, Մեծ հայրենական, Փարիզյան կոմունա և այլն:

Ծանոթություն 1: 2-րդ կետին վերաբերող անվանումներում մեծատառով են գրվում նաև այն քաղաքիչները, որոնք ինքնին, առանձին վերցրած, հատուկ անուն են՝ «Ողբ եղեսիոյ» պոեմը, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշան, Հայկական Տավրոս լեռնաշղթա:

Ծանոթություն 2: Մեծատառ են գրվում նաև՝ ա) նախադասության առաջին բառը՝ «Մեր երկիրն ունեցել է մի շարք մայրաքաղաքներ՝ Արմավիր, Դվին, Անի, Արտաշատ, Վաղարշապատ... Վերջինը երևանն է», բ) խոսակցին դիմելիս եզակի թվի երկրորդ դեմքի անձնական դերանունների (դու, ինքդ) քաղաքավարական հոգնակիի ձևերը՝ «Իսկ

Դուք, Ձերդ պայծառափայլություն, կարող եք ինքներդ պատվիրել ոստրե, խավիար, բայց ոչ Բեթհովեն», «Ե. Չարենցի գրչով է ստեղծվել «Էմալե պրոֆիլը Ձեր» բանաստեղծությունը»:

Լրացուցիչ կանոններ և հրահանգներ

Առանձնահատուկ ուշադրություն են պահանջում մեծատառերի ուղղագրության հետ կապված հետևյալ դեպքերը:

1. Հայկական բառը երբեմն հատուկ անվան առաջին բաղադրիչ է (Հայկական Տավրոս, Հայկական սյար, Հայկական լեռնաշխարհ, Հայկական բարձրալուծողակ, «Հայկական աշխարհ») և **պետք է գրվի մեծատառով, իսկ այլ դեպքերում սովորական ածական է** (Իհն հայկական Կաղմոսի երկիր, հնագույն հայկական Կոմագենե երկիր, հայկական հետևակ, հայկական հողեր) և **պետք է գրվի փոքրատառով:**

Հատուկ անուն չէ **հայոց երկիր-ը**, եթե գործածված է «հայերի երկիր» իմաստով:

2. Բառերով կամ տառերով գրված դասական թվականները, որոնք անձնական բաղադրիչ են (Արշակ երկրորդ, Լևոն Հինգերորդ, Դարեհ Երրորդ, Սարգսյու Առաջին, Արտուշես Ա Բարի, Անտիոքոս Առաջին), **մեծատառով են գրվում որպես ինքնին հատուկ անուն լրացյալի որոշիչ (մականուն):**

3. Որպես մականուններ՝ մեծատառով են գրվում անհաղթ, մեծ, երկաթ, սակավակյաց, գայլ, գեղեցիկ, կրտսեր, բարի, իմաստուն, լուսավորիչ, կոտակ, անհաղթ, շնորհալի, ավագ, ողորմած, կառուցող, մսակեր և այլ բառեր (Դավիթ Անհաղթ, Տրդատ Մեծ, Աշոտ Երկաթ Երվանդ Սակավակյաց Գայլ Վահան Արա Գեղեցիկ, Տիգրան Մեծ Երկրորդ, Արտաշես Ա Բարի, Աղոտմոն Իմաստուն Գրիգոր Լուսավորիչ, հոստով Կոտակ, Դավիթ Անհաղթ Ներսես Շնորհալի, Ժողեֆ Իոնի Ավագ, Աշոտ Ողորմած, Աշոտ Կառուցող, Աշոտ Սոսկեր):

Անձնանունների **հայր, որդի** հետադաս լրացումները գրվում են փոքրատառով և միության գծիկով՝ **Դյումա-հայր, Դյումա-որդի, իսկ եղբայրներ, քույրեր, ամուսիններ լրացումները՝ փոքրատառով և առանց գծիկի** (Գրիմ եղբայրներ, Լիսիցյան քույրեր Կյուրի ամուսիններ): Նույն բառերը նախադաս լրացում (հայր Անդրանիկ, քույր Աննա) կամ հետադաս լրացյալ (Դավիթ Այավկա որդի, Սինայի որդի) լինելու դեպքում գրվում են փոքրատառով և առանց գծիկի:

4. Տեղանուններում հաճախ հատուկ անվան առաջին բաղադրիչ են լինում Նոր, մեծ, փոքր, բարձր, վերին, ներքին, արևելյան, արևմտյան և այլ բառեր (Նոր Նորք, Նոր Արեշ, Նոր Բութանիա, Նոր Նախիջևան, Նոր Գետիկավանք, Նոր Շիրական, Մեծ և Փոքր Մասիսներ, Մեծ Հայք, Փոքր Հայք, Բարձր Հայք, Մեծ Ծոփք, Վերին Թալին, Ներքին Դիլին, Արևելյան Տավրոս, Արևմտյան Հայաստան) և գրվում մեծատառով:

5. Համաստեղությունների և այլ հատուկ անուններում միայն առաջին բաղադրիչն է մեծատառով գրվում (Մեծ արջ, Հյուսիսային պսակ, Բերե նիկեի վարսեր, Հայկական պար լեռնաշղթա Սուրբ խաչ տաճար, Կարմիր բլուր, Խոր վիրապ, Մազե կամուրջ, Ծիր կաթին, Հարդագողի ծանապարհ, Վախազնի ծանապարհ, Արեգական ծանապարհ, Պարզ լիճ, Ցաղաց քարի վանք, Արժույթի միջազգային հիմնադրամ, Վայոց ձոր, Հրո երկիր, Ասեղի հրվանդան), քանի որ դրանցում լրացյալն ինքնին հասարակ անուն է:

6. Միջնաբերդ, դյուցազուն, սպարապետ, գունդստաբլ, նահապետ, բժշկապետ, զորավար, հարյուրապետ, մեկիք, իշխան, պատմահայր, քերթողահայր, մարգարե, առաքյալ, կաթողիկոս, ավետարանիչ և նման այլ բառեր սովորաբար հատուկ անվան բաղադրիչ չեն, այլ բառակապակցության հասարակ անուն լրացյալ (Անիի միջնաբերդ, Վանի միջնաբերդ, Արտաշատի միջնաբերդ) կամ ծագում, հասարակական դիրք, տիտղոս, պաշտոն, զբաղմունք նշող հասարակ անուն լրացումներ (Սուշեղ սպարապետ, Վահան սպարապետ, սպարապետ Վասակ Մամիկոնյան, զորավար Մարկոս Կոստոս, զորավար Անդրանիկ, Միհրան զորավար, Կոստան դին գունդստաբլ, Հայկ նահապետ, դյուցազուն Հայկ, բժշկապետ Դեզին, Ավան հարյուրապետ, մեկիք Շահնազար, պատմահայր Հերոդոտոս, քերթողահայր Խորենացի, Մովսես մարգարե Պողոս առաքյալ, կաթողիկոս Սահակ Պարթև, Հովհաննես ավետարանիչ) և գրվում են փոքրատառով:

7. Մայր բառը մայր քաղաք, մայր տաճար, մայր բուռ, մայր Արաքս, մայր Եփրատ և նման կապակցություններում սովորական որոշիչ է (հատուկ անվան բաղադրիչ չէ) և գրվում է փոքրատառով: Միայն Մայր աթոռ Սուրբ Էջմիածին կապակցության դեպքում է այն մեծատառով գրվում:

8. Եկեղեցիների, վանքերի անվանումներում, տեղանուններում սուրբ բառը եթե առաջին բաղադրիչ է (Սուրբ խաչ տաճար, Սուրբ Գևորգ եկեղեցի, Սուրբ Կարապետ եկեղեցի, Սուրբ Կարապետի վանք), ապա գրվում

է մեծատառով, մինչդեռ անձնանունների հետ և այլ դեպքերում գործածվում է որպես սովորական որոշիչ և գրվում է փոքրատառով (սուրբ Մեսրոպ Մաշտոց, սուրբ Սահակ հայրապետ, սուրբ գրքեր, սուրբ ջրեր, սուրբ լեռ և այլն):

9. երբ Ոստան–ը գավառի կամ քաղաքի անուն է, գրվում է մեծատառով, իսկ երբ հասարակ անուն է՝ «ծննդավայր» կամ «մայրաքաղաք» լուսատով, գրվում է փոքրատառով:

10. Կտուց, համեստ, մանուշակ, զվարթ, երջանիկ, ալմաստ, նվեր, արշալույս, ազնիվ, ռազմիկ, ազատ, աղավառտուն, գետափ, անտառամեջ, ակունք և նման հասարակ գոյականներն ու ածականները իաճախ օգտագործվում են որպես հատուկ անուններ՝ Կտուց (կղզի և անապատ), Համեստ, Մանուշակ, Զվարթ, Երջանիկ, Ալմաստ, Նվեր, Արշալույս, Ազնիվ, Ռազմիկ (անձնանուններ), Ազատ, Աղավառտուն, Գետափ, Անտառամեջ, Ակունք (տեղանուններ), և գրվում մեծատառով:

11. Երևանի Մատենադարան անվանման մեջ մատենադարան բառը ավանդաբար մեծատառով է գրվում՝ համաձայն տերմինաբանական հանձնաժողովի «Հայկական ՍՍՀ կառավարման մարմինների լրիվ և կրճատ անվանումները» 1979թ. որոշման (տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Երևան, 1988, էջ 148): Նույն բառը այլ դեպքերում գրվում է փոքրատառով՝ էջմիածնի մատենադարան, Երուսաղեմի մատենադարան:

12. Աստված բառը կարելի է մեծատառով գրել, եթե վերաբերում է քրիստոնյաների պաշտած Աստծուն, բայց փոքրատառով պետք է գրել մնացած դեպքերում, օրինակ՝ պատերազմի աստված Արես, Վահագն աստված, հեթանոս աստվածներ:

13. Հատուկ անունների կազմում դը, դա, վան, ֆոն, ալ, էլ և այլ բաղադրիչներ փոքրատառով են գրվում որպես քերականական մասնիկներ՝ հոդեր, նախդիրներ (Գի դը Մուպասան, Լյուդվիգ վան Բեթհովեն, Հերբերտ ֆոն Կարայան, Աբդ էլ Քերիմ): Փոքրատառով են գրվում նաև շաղկապները՝ Սեն Պիեռ և Միքելոն, Տրինիդադ և Տոբագո:

Նույն մասնիկները մեծատառով են գրվում, եթե հատուկ անվան առաջին բաղադրիչն են՝ Լա Մանշ, Վան Դեյք, Էլ Ռիյադ և այլն: Հետևաբար նույն անունը տարբեր շարադասությամբ կգրվի տարբեր ձևերով՝ Վինսենտ վան Գոգ և Վան Գոգ Վինսենտ:

14. Տեր բառը հայկական ազգանվան կազմում գրվում է մեծատառով (օրինակ՝ Սիրարվի **Տեր**-Ներսիսյան): Նույն՝ «տեր» իմաստն ունի ֆրանսերեն **սեն(տ)** բառը (ինչպես նաև դրա **սենթ, սան, սանտա, սանկտ** համարժեքներն այլ լեզուներում) ազգանունների կազմում, ուստի նույնպես գրվում է մեծատառով (և գծիկով)՝ Անտուան դը Սենտ-Էքզյուպերի Սեն-Սյոն, Կամիլ Սեն-Սամու: Նույն **սեն(տ)** բառը տեղանունների կազմում նշանակում է «սուրբ» և նույնպես գրվում է մեծատառով (և առանց գծիկի)՝ Սենտ Էտիեն, Սեն Դընի Սեն Գյուարդ Սեն Մալու, Սեն Դիեռ և Միքելոն, **Սենթ** Վինսենթ, **Սենտ** Բիթս, Սան Դիեգո, Սան Խոսե, Սան Մարինո, Սան Պաուլո, Սան Ռեմո, Սան Ֆրանցիսկո, Սանտա Կրուս, Սանտո Դոմինգո, Սանկտ Պետերբուրգ: Նույն բաղադրիչը անձնանունների հետ «սուրբ» իմաստով գրվում է առանձին և փոքրատառով՝ սանտա Մարիա, սանտա Լյուչիա, երբեմն ավանդաբար՝ մեծատառով՝ Սանտա Կլաուս:

15. Տառային հապավումներից **հեկ-ը, ջեկ-ը, բուհ-ը, աեկ-ը** փոքրատառերով են գրվում թե՛ առանձին, թե՛ բարդ բառերի կազմում (Սուսնեկ և այլն), իսկ տառային այլ հապավումներ գրվում են մեծատառերով՝ ՍԱԿ, ՌԴ, ԱՄՆ, ՉԺՀ, ԼԴՀ, ԲՈՀ (բարձրագույն որակավորման հանձնաժողով), ՀՅԴ (Հայ յեղափոխական դաշնակցութիւն), ՀՀԿ, ՀԺԿ ՊՆ, ՕԵԿ, ՀՀԵ ԽՍՀՄ, ՀԽՍՀ, ԱՊՀ, ՀՀ, ԿԲ (կենտրոնական բանկ) և այլն:

16. Վանկային հապավումներում մեծատառով է գրվում միայն հատուկ անուններից վերցված վանկը՝ Հայխնայբանկ, Հայէկոնոմբանկ, Հայգազարդ, Հայջլշին, Հայմոսգազարդ:

17. Կրճատագրությունները փոքրատառով են գրվում, եթե հասարակ անուններ են (օրինակ՝ մ.թ.ա.), և մեծատառով, եթե հատուկ անուններ են (օրինակ՝ Ա. Դիտրիխ, Ֆ. Չարեմբա, Զ.ա.):

18. Արեգակ, Լուսին, Երկիր բառերը՝ որպես մոլորակի անվանումներ, գրվում են մեծատառով, իսկ որպես լուսատուների կամ այլ անվանումներ՝ փոքրատառով: Օրինակ՝ «Հայտնի է, որ **Երկիրը** պտտվում է իր առանցքի և **Արեգակի** շուրջը», «**Ցերեկը** լույս է տալիս արեգակը, իսկ **գիշերը**՝ լուսինը», «**Մեր Երկիրը** փոքր է»:

Վարժություններ

81. Արտագրե՛ք՝ մեծատառերը թողնելով միայն անհրաժեշտ տեղում:

ա. ԼԵՌՆԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔ ԵՈՒԾԻԻ ԲԵՐԴԸ ՀԻՄՆԱԴՐԵԼ ԵՆ ՔԱՋԱԿՈՐՈՎ ԱՎԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՊԵՏԸ և ՎԱՐԱՆԴԱՅԻ ՄԵԼԻՔ ԵԱՀ. ՆԱԶԱՐԸ 17-18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ:

բ. ԱՅՑԵԼԵԼՈՎ ԵՂԵԳՆԱԶՈՐ՝ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԼՏԿԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԱՎ ՑԱՂԱՑ ՔԱՐԻ ՎԱՆՔՈՒՄ, ՍՄԲԱՏԱԲԵՐԴՈՒՄ, ՏԵՍԱՎ ԳԼԱԶՈՐԻ ՎԱՆՔՆ ՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ:

գ. ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆՈՒՄ ՀԱՆԴԻՊԵԼՈՎ ՄՀԵՐԻՆ՝ ԱՐԵԱԼՈՒՅՍԸ ԿՈԱՀԵՑ, ՈՐ ՆԱ Է ԻՐԵՆ ՍՊԱՍՈՂԸ, ԵՎ ՍՈՏԵՆԱԼՈՎ ԴԻՄԵՑ ՆՐԱՆ. «ԲԱՐԵՎ ԶԵՁ, ԵՍ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ ՀՈՎ. ՀԱՆԻՍՅԱՆՆ ԵՄ, ԻՆՉ Է ԶԵՐ ԱԶԳԱՆՈՒՆԸ»:

դ. ՆԵԱՆԱՎՈՐ ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔԻՑ ՄԵԼՔ ՈՒՂԵՎՈՐՎԵՑԻՆՔ ԴԵՊԻ ՎԱՅՈՑ ԶՈՐ, ՈՒՐ ԱՅՑԵԼԵՑԻՆՔ ՆՈՐԱՎԱՆՔ, ՍՄԲԱՏԱԲԵՐԴ ԵՎ ԱՐԱՏԵՍԻ ՎԱՆՔ:

ե. ԳԱՌՉՈՒԻ ՎՐԶԻՆ ԵՆ ՊԼՏԿԱՆՈՒՄ «ԵՐԿՐԱՅԻՆ ԴՐԱԽՏ» ՆԿԱՐԱԵԱՐԸ, ԺԱՆ ՖԻԼԻՊ ՈԱՄՈՅԻ «ԲԱՐԵԿԻՐԹ ՀՆԴԻՎՆԵՐ» ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԲԵՄԱՆԿԱՐՆԵՐԸ, ԷՌՆՍՏ ՀԵՄԻՆԳՈՒԵՅԻ «ՀՐԱԺԵՇՏ ԶԵՆՔԻՆ» ԳՐԹԻ ՆԿԱՐԱՋԱՐԴՈՒՄՆԵՐԸ:

զ. 1970 ՄԵՏՐ ԲԱՐՉՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ՝ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԾԱՂԿԱՆՑ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՎՐՈՍԻ ԼԵՌՆԵՐԻ ՄԻՋԵՎ Է ՊԱՐՓԱԿՎԱԾ ՎԱՆԱ ԼԻՃԸ:

է. ՏԱՎՐՈՍԻ ԼԵՌՆԱԵՂԹԱՅԻ ՄԻ ԲԱՐՉՈՒՆՔԻ ՎՐԱ Է ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԱԳԵՆԵ ԵՐԿՐԻ ԱՆՏԻՈՔՈՍ ԱՌԱՋԻՆ ԵՐՎԱՆԴՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐԻ ԿԱՌՈՒՑԱԾ ՍՐԲԱՎԱՅՐԸ՝ ՀԵԹԱՆՈՍ ԱՍՏՎԱԾՆԵՐ ԱՐԱՄԱԶԴԻ, ԱՐԵԳԻ, ԱՐՏԱԳՆԵՍԻ ՀՍԿԱ ՔԱՆԴԱԿՆԵՐՈՎ:

ը. ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿ ԳԱՐԴՄԱՆԱ ԻՇԽԱՆԸ՝ ՍԱՀԱԿ ՍԵՎԱԴԱՆ, ԵՎ ՈՒՏԻՔԻ ՏԵՐԸ՝ ԶԼԻԿ ԱՄՐԱՍԸ, ԱՊՍԱՄԲՈՒԹՅԱՆ ԴՐՈՇ ԷԻՆ ԲԱՐՉԱՅՐԵԼ ՀԱՅՈՑ ԱՐՔԱՅԻ՝ ԱՇՈՏ ԵՐԿԱԹԻ ԴԵՄ:

թ. ՍԵՂԱՆԻ ԳԼԽԻՆ՝ ՓԱՌԱՎՈՐ ԲԱԶՄՈՑԻ ՄԵՋ, ՆՍՏԵԼ ԷՐ ՏԱՃԱՏՈՒՀԻՆ՝ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԿԻՆԸ, ՆՐԱ ԿՈՂՔԻՆ՝ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԸ՝ ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ՈՐԴԻՆ, ԴԻՄԱՅԸ՝ ՎՈԱՄԵԱՊՈՒՀ ԱՐՔԱՆ:

ժ. 1939 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀՆՉԵՑԻՆ ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ «ԱՆՈՒՇԸ», ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ «ԱԼՄԱՍՏ» ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ԳՈՀԱՐՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ-ՊԱՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄՈՒՅԹԻ ԿԱՏԱՐՄԱՐ:

ժա. ԱՐԱՔՍԻ ՎՏԱԿ ԱԶԱՏ ԳԵՏԻ ԿԻՐՃԻ ՊՈՆԿԻՆ ԿԱՆԳՆԱԾ ԳԱՌՆՈՒ ԱՄՐՈՑԸ, ՈՐ ԱՎԵԼԻ ԵՔԵՂ ՎԵՐԱԵՆԼՎԵԼ ԷՐ ՏՐԴԱՏ ՄԵԾԻ ՕՐՈՔ, ՎԱՐԴԱՆԱՆՑ ՕՐԵՐՈՒՄ ՄԱՍԱՄԲ ԱՎԵՐՎԵՑ ԱՊԻՐԱՏ ՎԱՍԱԿԻ ՉԵՌՔՈՎ:

ժք. ԹՈՂԱԾ ԻՐԵՆՑ ԿԻՍԱՎԵՐ ՈՍՏԱՆԸ՝ ՎԱԶԵՆ ՈՒ ՈՍԿԱՆԸ ԱՆԻՑ ՆԿԵԼ ԷՆԸ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ՝ ՕԹԵՎԱՆ ՓՆՏՐԵԼՈՒ ՕՏԱՐ ՈՒ ԱՆՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼ ԱՅՂ ԵՐԿՐՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ:

82. Ո՛ր հարադրավոր բաղադրյալ հատուկ անունը կամ բառակապակցությունն է սխալ գրված. գրե՛ք ճիշտը:

ա. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Միավորված Ազգերի Կազմակերպություն, Բարձր Հայք, Արշակ երկրորդ:

բ. Մեծ Հայք, Կարմիր բլուր, Երևանի Պետական Համալսարան, Մեսրոպ Վայոցձորեցի:

գ. ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Ռուսաստանի Դաշնություն, Մեծ Բրիտանիա:

դ. Անիի Միջնաբերդ, Հայաստանի հանրապետական կուսակցություն, Հայ հեղափոխական դաշնակցություն, Երկիր մոլորակ:

ե. Նոր Գվինեա, պատմության թանգարան, Լատինական գիր, Դավիթ Շինարար:

83. Ո՛ր շարքի հարադրավոր անվանումների բոլոր բաղադրիչներն են մեծատառով գրվում:

ա. Գ(գ)ի Դ(դ)ը Մ(մ)ոպասան, Հ(հ)արդագողի Ճ(ճ)անապարհ, Հ(հ)այկական Բ(բ)արձրավանդակ, Ա(ա)նկախ Պ(պ)ետությունների Հ(հ)ամագործակցություն:

բ. Ա(ա)րևմտյան Հ(հ)այաստան, Ի(ի)սպանիայի Թ(թ)ագավորություն, Դ(դ)ավիթ Ա(ա)նիադք, Հ(հ)այկական Տ(տ)ավրոս:

գ. Ա(ա)րտաշես Ա(ա) Բ(ա)րեբար, Գ(գ)րիգոր Լ(լ)ուսավորիչ, Ծ(ծ)իր Կ(կ)աթին, Մ(մ)ազե Կ(կ)ամուրջ:

դ. Ա(ա)րևելյան Տ(տ)ավրոս, Ն(ն)որ Ն(ն)որք, Ե(ե)րևանի Մ(մ)ատենադարան, Խ(խ)որ Վ(վ)իրապի Վ(վ)անք:

ԲԱՌԵՐԻ ԳԾԻԿՈՎ, ԱՆՋԱՏ ԿԱՄ ՄԻԱՍԻՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հաճախ դժվարություն է հարուցում միության գծիկով կամ առանց դրա գրվող հարադրական բարդությունների և դրանց նման-

վող համադրական բարդությունների, ինչպես նաև որոշ բառակապակցությունների ուղղագրությունը: Դրանք չշփոթելու, իրարից տարբերելու համար անհրաժեշտ է իմանալ հետևյալ կանոնները:

Գծիկով միացած բաղադրիչներով են գրվում.

1. Կրկնավոր հարադրական բարդությունները, որոնց բաղադրիչներից մեկը կարող է հնչյունափոխված լինել: Օրինակ՝

մեծ-մեծ, փունջ-փունջ, արագ-արագ, խնչ-ինչ, մեկ-մեկ, իլինգ-իլինգ, մերթ-մերթ, ծիլ-ծիլ, հայ-հայ, ամառ-չամառ, մանր-մոմր, պարսպ-սարսպ, առող-փառող, բան-ման, մարդ-մուրդ, դեփ-դեղին, շիփ-շիռուկ, կաս-կարմիր, դափ-դատարկ, ետ-ետ նայել, վայ-վոյ անել, քառ-քառ ծածաղել և այլն:

Ծանոթություն: Սրանցից տարբերվում են արմատի կրկնությամբ կազմված անհոդակապ (տերտեր, բարբառ, դողդոջ, մրմուռ, թրթուր, քրքիջ, դասդասել, հռհռալ և այլն), հոդակապով (մեծամեծ, նորանոր, բարձրաբերձ և այլն), շաղկապավոր (սուսուփուս, քիչումիչ, ծուռումուռ, լիուլի և այլն), նախդրավոր (հնհին, խառնիխուռն, մեջընդմեջ, օրոստօրե, օրեցօր, գույնզգույն, հետզհետե և այլն), քարացած հոլովաձևներով (բերնեբերան, տնետուն, գյուղեգյուղ, մեկմեկու և այլն) համադրական բարդությունները, որոնք գրվում են միացած բաղադրիչներով, ինչպես նաև՝ նույն բառի տարբեր հոլովաձևներով կապակցությունները (քիթ քթի, ծեռք ծեռքի, գուռ դռան, տեղը տեղին, քարը քարին, մեկը մեկին, մեկին մեկ, մեկը մեկով, մեկով մեկ, մեկը մեկից, մեկից մեկ, տնից տուն, լավից լավ, հեռվից հեռու, հեռու հեռվում, հեռու հեռվից և այլն), որոնք գրվում են առանձին բաղադրիչներով՝ առանց գծիկի: Կան և անհնչյունափոխ կրկնվող բառերի նախդրավոր կապակցություններ, որոնք կարող են գրվել թե՛ առանձին, երբ շեշտվում են երկու բաղադրիչներն էլ (մեկ առ մեկ, մերթ ընդ մերթ և այլն), թե՛ միացած բաղադրիչներով, երբ շեշտվում է բառի վերջին՝ վանկի ծայնավորը (մեկառմեկ, մերթընդմերթ և այլն):

2. Միևնույն խոսքի մասին պատկանող բառերով կազմված այն հարադրական բարդությունները, որոնց բաղադրիչները, պահպանելով իրենց հարաբերական անկախությունը (սովորաբար նաև բառային շեշտը), արտահայտում են մեկ հասկացություն կամ հանդես են գալիս որպես մեկ անուն՝ առարկան (անձը, իրը, երևույթը) բնութագրելով կամ ներկայացնելով տարբեր կողմերից: Օրինակ՝

- ա. տուն-թանգարան, Եղբայր-հուշարձան, թարգմանիչ-գործավար, գեներալ-մայոր,
- բ. հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք,
- գ. գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական և այլն:

Ծանոթություն 1: Այն կապակցությունները, որոնց առաջին բաղադրիչն արտահայտված է որոշիչի կամ պարագայի դեր կատարող ածականով կամ գոյականով, գրվում են առանց գծիկի՝ անջատ, օրինակ.

ա. ալ կարմիր, բաց կապույտ, մուգ կարմիր, վառ դեղին, մեղմ կանաչ, ռոք աստղ, փոփ երաժշտություն, շոու բիզնես,

բ. Մեծ Պարնի, Նոր Նախիջևան, Վերին Թալին, Նյու Յորք, Այմա Աթա, Նիժնի Տագիլ, Փոքր Ասիա, թղթակից անդամ, հերոս քաղաք, հերոսուհի մայր, տիեզերագնաց օդաչու, մարդ անհատ, մարդ արարած,

գ. Թումանյան քննադատը, Բաֆֆի վիպասանը, Պարոնյան թատերագիրը, Մաշտոց գիտնականը, գեղանկարիչ Սարյանը, երգահան Կոմիտասը և այլն:

Ծանոթություն 2: Մեկից ավելի տիտղոսները գրվում են առանձին, ստորակետով անջատված, օրինակ՝ **դոկտոր, պրոֆեսոր**. «Ելույթ ունեցավ դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Հակոբյանը»:

3. Բառերի այն միացությունները, որոնք արտահայտում են տարբեր կողմերի (լեզուների, ժողովուրդների, պետությունների, միավորների) հարաբերություն: Առաջին բաղադրիչի ածանցը սովորաբար կրճատված է լինում, իսկ երբեմն երկրորդին միանում է հոդակապով: Օրինակ.

ա. հայ-ռուսերեն, էսպերանտո-հայերեն, ուրդու-իլիդի, չինարեն-հայերեն,

բ. չին-տիբեթական, ռուս-իրանական, ֆրանս-սլլոնավական,

գ. գերմանա-խոսալական, խորհրդա-ամերիկյան,

դ. մետր-վայրկյան, կիլովատտ-ժամ, մարդ-օր և այլն:

Ծանոթություն 1: Հոդակապով կամ անհոդակապ նմանատիպ միացությունները, եթե նշում են ոչ թե կողմերի հարաբերություն, այլ միասնություն կամ հավելում, գրվում են միացած բաղադրիչներով՝ առանց գծիկի, օրինակ.

Ռոմանագերմանական (>ռոմանական և գերմանական), լեզվագրական, պատմաբանասիրական, գիտահետազոտական, դրամաի-

րային, ռազմածովային, աղետամոքսային, բառաքերականական, նյութատեխնիկական, ուսումնադաստիարակչական, դեղնաշագանակագույն, կապտականաչավուն, հնդեվրոպական և այլն:

Ծանոթություն 2: Երբեմն իմաստից կախված՝ կարող են լինել միայն գրության ձևով տարբերվող՝ նույնահունչ համանուններ, օրինակ՝ հունահռոմեական (ըմբշամարտի ոճ) և հունա-հռոմեական (ռազմական հարաբերություններ):

Ծանոթություն 3: Տարածական կամ հակադրական հարաբերության մեջ գտնվող անվանումների ու բառերի միջև դրվում է անջատման գիծ՝ Երևան - Սևան - Իջևան (մայրուղի), Պետրոսյան - Ֆիշեր (մրցամարտ), գյուղ - քաղաք (տարբերությունը), Երևան - Լոս Անջելես (հեռուստակա մուրջ):

4. Առնչակից, հոմանիշ կամ հականիշ բառերի այն միացությունները, որոնք արտահայտում են հավաքականություն, միասնություն, ամբողջություն, տարածական կամ ժամանակային հատված, բազմակիություն, հատկանիշի շեշտվածություն: Օրինակ.

ա. ենթակա-ստորոգյալ, որոշիչ-որոշյալ, արմատ-ածանց, ստորակետ-գլիծ, սնունդ-ազգանուն, մազ-մորուք, քիթ-մուր, կլին-երեխա, ոտն-տեղ, նետ-աղեղ, սեղան-նստարան, ժամ-պատարագ, կանաչ-կարմիր, խուլ-համր, երկար-բարակ, անտեր-անտուն, տնով-տեղով, ձեռքով-ոտքով համով-հոտով, աչքով-ունքով, հականեն-հանդանեն, ոտել-խմել, չափել-ձևել, ծել-ծաղկել, գրել-կարդալ, եփել-թավել, սահել-անցնել, էլ-զառ-Լոթարյունգիս, Արցախ-Ուտիք, Զոոլ-Լենցի օրենք, «Մեր սեղես-Բենց» ձեռնարկություն,

բ. ողջ-առողջ, ձայն-ծալտուն, սղմով-սղաղակ, դեղ-դարման, գոռում-գոչոն, բուք-բորան, խաղը-խայտառակ, ասել-խոսել, կոել-կոխել, անդալ-պաղատել, զուգել-զարդարել, կցել-կցմցել, կյու-հնազանդ, տխուր-սրտոմ, կխատ-պաատ, լվիկ-մնջիկ,

գ. հեռու-մոտիկ, մեծ-փոքր, տեղի-անտեղի, կենաց-մահու, տղա-աղջիկ, ուսանող-ուսանողուհի, ավել-պակաս, բացել-փակել, տանել-բերել, լինել-չլինել, եղած-չեղած.

դ. գիշեր-ցերեկ, ամառ-ձմեռ, շաբաթ-կիրակի, մարտ-ապրիլ, այստեղ-այնտեղ, դեսից-դենից և այլն:

Ծանոթություն: Այն բայազույգերը, որոնք ոչ թե զուգահեռ (համաժամանակյա) կամ միմյանց լրացնող (փոխկապակցված), այլ հաջորդական գործողություններ են ցույց տալիս, գրվում են առանց գծիկի՝ անջատ բաղադրիչներով (երբեմն՝ ստորակետով): Օրինակ՝ **գնալ կորչել, վազել հասնել, թողնել հեռանալ, բերել ցույց տալ** և այլն:

5. Կրկնակի անունները: Օրինակ.

Կամենեց-Պոդոլսկ, Սալոնիկով-Շչեդրին, Ժամս-Ժակ Ռուստ, Լևոն-Չավեն Սյուրմեյյան և այլն:

6. Որևէ անունից և Տեր-, Մելիք- ու նման բաղադրիչներից կազմված ազգանունները, երբ նշված բաղադրիչներն արտասանվում են առանձին: Օրինակ.

Տեր-Գաբրիելյան, Մելիք-Բախշյան և այլն:

Ծանոթություն 1: Նշված բաղադրիչներն անձնանվան (ազգանվան) մյուս բաղադրիչների հետ միասին մեկ շեշտով արտասանվելու դեպքում գրվում են առանց գծիկի՝ միասին, օրինակ՝ **Տերմերկերյան, Մելիքսեթյան, Բեկնազարյան, Միրզաբեկյան, Շահնազարյան** և այլն:

Ծանոթություն 2: **Տեր, մելիք, բեկ** և այլն, ինչպես նաև **աղա, էֆենդի, ամի, դայի, խանում, խաթում, ապեր, քեռի, հարս, տատ** և նման բառերը հատուկ անվան հետ որպես որոշիչ կամ որոշյալ գործածվելիս գրվում են առանձին: Օրինակ՝ **տեր Սահակ, մելիք Ավան, Նադիր շահ, Աբխտղում աղա, Դիան դայի, խանդութ խաթում, Նազու աղջիկ** և այլն:

Ծանոթություն 3: Առանց գծիկի՝ անջատ են գրվում նաև արևմտյան **դա, դը, վան, ֆոն, դել, դը լա, նյու,** արևելյան **ալ, էլ, էդ, էն** բաղադրիչները: Օրինակ՝ **Լեոնարդո դա Վինչի, Մարիո դել Մոնակո, Լյուդվիգ վան Բեթհովեն, Վիլհելմ ֆոն Հումբոլդտ, Նյու Յորք, Հարուն ալ Ռաշիդ, Նահր էլ Բարիդ, «Ալ Ահրամ» թերթ** և այլն:

Ծանոթություն 4: «Տեր» իմաստն ունի ֆրանսերեն **սեն(տ)** բառն ազգանունների կազմում, ուստի նույնպես գրվում է գծիկով (և մեծատառով)՝ **Անտուան դը Սենտ-Էքզյուպերի, Սեն-Սիմոն, Կամիլ Սեն-Սանս:** Նույն **սեն(տ)** բառը (ինչպես նաև դրա **սենթ, սան, սանտա, սանկտ** համարժեքներն այլ լեզուներում) տեղանունների կազմում նշանակում է «սուրբ» և գրվում է առանձին՝ առանց գծիկի (և մեծատառով)՝ **Սենտ Էտիեն, Սեն Դընի, Սեն Պիեռ և Միքելոն, Սենթ Վինսենթ, Սենտ Բիթս, Սան Դիեգո, Սան Խոսե, Սան Մարինո, Սան Պաուլո, Սան Ռեմո, Սան Ֆրանցիսկո, Սանտա Կրուս, Սանտո Դոմինգո, Սանկտ Պետերբուրգ,** հազվադեպ՝

միասին՝ **Սանտյագո**: Նույն բաղադրիչը անձնանունների հետ «սուրբ» իմաստով գրվում է առանձին և փոքրատառով՝ **սանտա Մարիա, սանտա Լյուչիա**, երբեմն ավանդաբար՝ մեծատառով՝ **Սանտա Կլաուս**:

7. Ավանդական գրություն ունեցող մի քանի հատուկ անուններ՝

Նար-Դոս, Գամառ-Քաթիպա, Սայաթ-Նովա, Կարա-Մուրզա, Չիֆթե-Սարաֆ, Աբու-Լալա Մահարի և այլն,

ինչպես նաև **հայր, որդի** հետադաս լրացումներով անձնանունները՝ **Դյումա-հայր, Դյումա-որդի**:

8. Ոչ-ոքի բառը. «Խաղն ավարտվեց **ոչ-ոքի**», «**Ոչ-ոքի** արդյունքը երկու կողմերին էլ չի գոհացնում»:

Ծանոթություն: Սրանից պետք է տարբերել **ոչ ոք** ժխտական դերանվան **ոչ ոքի** թեք ձևը, որ գրվում է առանց գծիկի՝ անջատ: Նույն կերպ են գրվում **ոչ** ժխտական բաղադրիչով մյուս կազմությունները (բացի ոչինչ բառից): **Օրինակ՝** **ոչ մեկը, ոչ մի, ոչ միայն, ոչ այնքան, ոչ թե, ոչ երբեք, ոչ իսկ, ոչ բարով, ոչ հայերեն, ոչ մարդկային, ոչ բնական, ոչ ձիշտ, ոչ տեղին, ոչ մարդ, ոչ ևս լինել և այլն:**

9. Ինչ դերանունով բաղադրված ինչ-որ, փոքր-ինչ, դույզն-ինչ (ինչպես և ինչ-ինչ) անորոշ իմաստ արտահայտող բառերը:

Ծանոթություն: **Ինչ-որ** անորոշ դերանունից («**Ինչ-որ** մարդիկ եկան», «**Ինչ-որ** հարց է քննարկվում») պետք է տարբերել **ինչ որ** հարաբերական բառը, որը կապում է նախադասություններ և գրվում է առանց գծիկի՝ **ինչպես՝** «Գիտեմ այն, **ինչ որ** նա չգիտի», «**Ինչ որ** ունեի, տվեցի նրան»:

10. Վայ, ուռա բառերով և գոյականով այն կապակցությունները, որոնք արտահայտում են հեզնական իմաստ: **Օրինակ.**

վայ-ժողովրդավար, ուռա-հայրենասիրություն և այլն:

11. Թվականների կամ ժամանականիշ բառերի այն կապակցությունները, որոնք արտահայտում են մոտավորության իմաստ:

Օրինակ՝ **տասը-տասնիինգ (10-15) մարդ, չորս-հինգ (4-5) հոգի, քսան-քսանիինգ (20-25) տարեկան, երկու-երեք (2-3) ամիս, մեկ-երկու (1-2) նկատառում, հունիս-հուլիսին, այսօր-վաղը և այլն:**

Ծանոթություն 1: Թվականների այնպիսի կապակցությունը, որի առաջին բաղադրիչն ունի բացառականի իմաստ, գրվում է առանձին՝ առանց գծիկի, եթե տառերով է արտահայտված (*երկուսից երեք օր, տասից տասնհինգ էջերը, հինգից տասնմեկերորդ դարեր* և այլն), և գրվում է անջատման գծով, եթե թվանշաններով է արտահայտված (էջ 10 – 15, 1 – 4-րդ դասարաններ, 1 – VIII հատորներ, ԺԲ – ԺԹ գլուխներ և այլն):

Ծանոթություն 2: Մի անորոշ դերանվամբ կապակցությունները գրվում են առանց գծիկի՝ անջատ բաղադրիչներով, օրինակ՝ *մի երկու, մի հինգ, մի քանի, մի քիչ, մի գլուխ, մի տեսակ, մի փոքր, մի կերպ* և այլն:

12. Այն բառերի ու բառաձևերի բաղադրիչները, որոնց առաջին բաղադրիչն արտահայտված է թվանշաններով, տառային կամ վանկատառային հապավումներով, անվանողական փոխանուններով, չակերտների մեջ առնված նախադասություններով (կամ ինքնին հոլովված կամ չհոլովվող բառերով), ոչ մեսրոպյան գրերով կամ այլ նշաններով: Օրինակ.

ա. 9-ի, 3-ով, XV-ից, 18-ամյա, 100-ամյակ, 10-օրյակ, 7-րդ, 2-ական, 20-ապրտիկ, 1000-ավոր.

բ. ԱՄՆ-ի, ՄԱԿ-ում, ԱԺ-ից, ՍՊԸ-ներ, ՀՀԵ-ական, ՀՀԵ-ամեն,

գ. *հինգ-ը* թվական է, *վարդ-ը* գրվում է *դ-ով*, բայց կարդացվում է *թ-ով*.

դ. «Իմ սիրտը լեռներում է»-ից, «Ես և նա»-ն, «Նախրի երկրից»-ը, «Աշնան»-ը,

ե. Z-աձև, *-ից, %-ներ, merci-ներ և այլն:

Ծանոթություն: Ինքնուրույն բառի վերածված և սովորական դեպքերում փոքրատառերով գրվող հապավումներով կազմությունների բաղադրիչները գծիկով չեն անջատվում: Օրինակ՝ *բուհի, բուհական, բուհեր, զագսից, ջեկեր* և այլն:

13. Տառերի, թվերի և անվանումների հարադրությամբ կազմված մականիշերի բաղադրիչները, օրինակ.

ԱԻ-93 բենզին, Տու-104 ինքնաթիռ, ԳԱՁ-24 «Վոլգա» ավտոմեքենա, «Սոյուզ-6» տիեզերանավ, «Պենտիում-4» համակարգիչ, «Էվսոն-100» սուպիչ և այլն:

Առանց գծիկի՝ անջատ բաղադրիչներով են գրվում.

14. Հարադիր բայերը, ինչպես՝

վեր կենալ, մոտ բերել, միտք անել, հարց տալ, գլուխ բերել, օրուարն չտալ, պարտքուպահանջ չունենալ, աղուհաց կիսել, ներսուդուրս անել և այլն:

15. Բայական այն զուգադրությունները, որոնց բաղադրիչները ցույց են տալիս գործողության հաջորդականություն, կամ դրանց երկրորդ բաղադրիչը ցույց է տալիս ուղևորման գործողություն, ինչպես՝

ելնել գնալ, գնալ հանգստանալ, գալ տիրություն անել, բռնել տեղափոխել, վերցնել տանել և այլն:

16. Կրկնավոր այն կազմությունները, որոնց բաղադրիչներից մեկը հոլովված է, և նրա հոլովական իմաստը գիտակցվում է, ինչպես՝
լուռ դռան, կուղք կողքի, ձեռքից ձեռք, երեքից չորս, ուս ուսի:

17. 99-ից բարձր քանակական բարդ թվականները՝

հարյուր մեկ, հինգ հարյուր, հազար վեց հարյուր տասնինը և այլն, կոտորակային թվականները՝ երկու երրորդ, հինգ վեցերորդ, տասը տասնհինգերորդ:

Ծանոթություն: Վերջածանց ավելացնելու դեպքում երկբաղադրիչ թվականների անջատ գրվող բաղադրիչները միանում են, ինչպես՝ հարյուրհինգամյա, հազարհինգամյակ, երկուհարյուրանոց, երկուհազարական և այլն: Կանոնը չի գործում, եթե թվականը բազմաբաղադրիչ է, ինչպես՝ երեք հազար չորս հարյուրական, մեկ միլիոն հինգ հարյուր հազարանոց և այլն:

18. Առ նախդիրով կրկնավորները՝

օր առ օր, ժամ առ ժամ, րուպե առ րուպե, մեջ առ մեջ, ինչպես նաև գրաբարից փոխանցված բուն նախդրային նշանակությամբ կապակցությունները՝ առ այն, առ Աստված, առ հարյուր, առ ի չգոյե (չեղած տեղից), առ Վահան Մամիկոնյան, առ այսօր, առ 19-ը հունվարի և այլն:

Ծանոթություն: Առ- նախածանցով բաղադրյալ բառերը գրվում են միացյալ բաղադրիչներով՝ առնվազն, առձեռն, առհավետ, առայժմ, առհասարակ և այլն. այս դեպքում առ-ը համարվում է ածանց:

19. Ի նախդիրով կազմությունները՝ բացառությամբ իզուր, իսպառ, իհարկե բառերի՝

ի պաշտոնե, ի նպաստ, ի դեպ, ի հեծուկս, ի կատարումն, ի լրումն և այլն:

20. Օտար անունների դը, դա, ֆոն, վան, դե, ալ, էլ, եդ, են և նման բաղադրիչները, ինչպես՝

Օնորե դը Բալզակ, Լյուդվիգ վան Բեթհովեն, Լուպե դե Վեգա, Հարուն ալ Ռաշիդ և այլն:

Ծանոթություն: Փոխ-, վիցե-, դեր-, օբեր-, էքս- (=նախկին) բաղադրիչով կազմված բաղադրյալ բառերը գրվում են միացած բաղադրիչներով՝ փոխվարչապետ, փոխնախարար, էքսչեմպիոն, դերծովակալ, օբերլեյտենանտ:

21. Ի վար (վայր) և ի վեր կապերով բաղադրված կապակցությունները, ինչպես՝

լեռն ի վար, սարն ի վեր, փողոցն ի վեր, հնուց ի վեր, վաղուց ի վեր, լանջն ի վայր և այլն:

Ծանոթություն: Դրանք նաև միացած բաղադրիչներով կարող են գրվել, եթե ունեն մեկ բառային շեշտ և մակբայի նշանակություն (դարիվեր ընթանում էր, երեսնիվայր ընկավ, հիմնիվեր կործանվեց): Դրանք համադրական բարդություն են, եթե անվանական բաղադրիչը նույնությամբ անկախ գործածություն չունի՝ բերանքսիվայր, գլխիվեր, զառիվայր:

22. Ու, և շաղկապներով բարդությունների բաղադրիչները, եթե առանձնաբար շեշտվում են, նույն բառն են, հոմանիշներ են, հականիշներ են կամ ունեն առնչակից իմաստներ, ապա գրվում են իրարից անջատ, ինչպես՝

ինձ ու ինձ, ավելի ու ավելի, բուք ու բորան, ողջ և առողջ, ներս ու դուրս, վեր ու վար, աջ ու ակիակ, գիշեր ու ցերեկ, ամառ ու ծմեռ, ահել ու ջահել, առք ու վաճառք, թեր և դեմ, օր ու արև, այս ու այն, կիլոգրամ ու կես և այլն:

Ծանոթություն: Եթե դրանք սերտ միասնություն են կազմում և արտասանվում են միասնաբար, գրվում են միացած բաղադրիչներով, ինչպես՝ ներսուդուրս, վերովար, որթևայրի, բուքուբորան, ահուդող,

ալուսիաց, այրուծի, այրուկին, առևտուր, մինուճար, մեկուկես, հինգուկես, օրուկես և այլն: Բայական հարադրությունների կազմում և որպես որոշիչ գործածվելիս նույնպես սրանք կցվում են՝ չեմուչում անել, վիրավար անել, մեծումեծ մարդիկ: Միացած բաղադրիչներով են գրվում սև, եթե բաղադրիչներից թեկուզ մեկը նույնությամբ անկախ գործածություն չունի, օրինակ՝ գորուգիշեր, ծակուծուկ և այլն:

Կից բաղադրիչներով են գրվում.

23. Հարադրավոր բաղադրյալ տեղանուններից, հարադիր բանից և միության գծիկով գրվող բարդ բառերից կազմված ածանցյալները, օրինակ՝

նորգելանդական, փոքրաւիական, հեռավորարևելյան, մեծպարնեցի, վերինթալիցի, նորնախիջևանցի, դոնիռուտովցի, ադիսաբեբացի, սևծովյան, խաղաղօվկիանոսյան, հյուսիսարևելյան, հարավարևմտյան, նյույորքյան, պարապարապություն, տունթանգարանային, կիսատպոստություն, նարդոսյան, ձեռքբերում, լույսընծայում, ձեռքսեղմում, դուրսբերում և այլն:

24. Հոդակապով և անհոդակապ բարդությունները, օրինակ՝ պատմաբանասիրական, ռոմանագերմանական, էլեկտրաէներգիա, գիտահետազոտական, գործընկեր, զբոսայգի և այլն:

Ծանոթություն: Որոշ անհոդակապ բարդությունների նմանվող և դրանց հետ շփոթվող բառակապակցություններ կան, օրինակ՝ *այսօր – այս օր, կեսգիշեր – կես գիշեր, տանտեր – տան տեր, ոսկեօղ – ոսկե օղ, մեծարժեք – մեծ արժեք, խորիմաստ – խոր իմաստ, ութանկյուն – ութ անկյուն, հեքիաթասաց – հեքիաթ ասաց, հինգհազարանոց – հինգ հազարանոց* և այլն: Այսպես՝ «Դա ինձ համար **մեծ արժեք** ունի». բայց՝ «Նրա մոտ գնաց **մեծարժեք** նվերներով»: «Նա ընկերոջը տվեց **հինգ հազարանոց** և տասներկու հարյուրանոց թղթադրամներ», բայց՝ «Թշնամու **հինգհազարանոց** բանակը փախուստի դիմեց»:

25. Կցական բարդությունները, օրինակ՝ այսինքն, գլուխգործոց և այլն, այդ թվում՝ մասնավորապես՝

ա. 11-ից մինչև 99 քանակական բարդ և բարդ ածանցավոր թվականները, օրինակ՝ քսանչորս, ութսունինը,

բ. ըստ, ընդ, ց, գ, ի նախդիրներով կրկնավորները, ինչպես՝ օրըստօրե, տարեցտարի, օրեցօր, հետզհետե, շալիշար, ինիին, մոտիմոտ և այլն,

գ. այն կրկնավոր բարդությունները, որոնց առաջին բաղադրիչը քարացած քերականական ձև է, այսինքն՝ նրա հոլովական իմաստը այսօր չի գիտակցվում, ինչպես՝

աշխարհեաշխարհ, տնետուն, դռնեդռն, օրեցօր, ծայրեծայր, բացելիբաց, երկրեերկիր, կուգեկուգ,

դ. ի նախդիրով կազմված իզուր, խապառ, իհարկե բառերը:

26. Հապավական բարդությունները, օրինակ՝

ժողգործիքներ, զինգրքույկ, բուժօգնություն, շինհրապարակ, ժողտնտիսորի և այլն:

27. Ամենա-, ց-, առ- և այլ նախածանցներով բառերը, օրինակ՝ ամենալավ, ցպահանջ, ցտեսություն, ցայդ, ցայսօր, ցմրուր, առնվազն, առձեռն, առհավելո, առայժմ, առհասարակ և այլն:

Վարժություններ

84. Փակագծերը բացելով՝ բառերը գրեք միասին, անջատ կամ գծիկով:

ա. Ի (գիտություն), գիշեր (ցերեկ), բողոք (դիմում), դեր (ծովակալ):
 բ. Բարակ (մարակ), տեղի (տալ), տան (տիկին), ծովից (ծով):
 գ. Կողք (կողքի), մուգ (կարմիր), գյուղե (գյուղ), ինչ (որ) բան:
 դ. Հրամ (կազմ), վեց (անկյունի), ուս (ուսի), մարդ (մուրդ):
 ե. Համ (երկրացի), այսօր (վաղը), գլուխ (տալ), մեջք (մեջքի):
 գ. Մինչև (անգամ), չար (որակ), ծանոթ (անծանոթ), հյուսիս (արևելյան):

է. Հնուց (ի) վեր, հարյուր (ամյա), հյուսիս (արևելք), մանր (մունր):
 ը. Ըստ (որում), առոք (փառք), ձեռք (ձեռքի), պար (ուսույց):
 թ. Հարգել (պատվել), նոր (զելանդական), (ի) սկզբանե, ձեռք (բերում):

ծ. Առ (մեկը) հունիսի, բուհ (ական), եՊՀ (ուսմ), վերջ (երգ):
 ժա. Պետ (կրկես), աղ (ու) հաց (կիսել), **վարդ** (ի) ուղղագրությունը, դեր (անուն):

ժբ. Ծափ (ծիծաղ), (ի) դեմս, (հատիկ) հատիկ, վայր (էջք):

ժգ. երեք (չորրորդ), (մազ) մորուք, օր (օրի), ձեռք (սեղմում):

ժդ. (Յ) պահանջ, ամեն (մի), (լեփ) լեցուն, առ (այժմ):

ժե. Աներ (որդի), (կաս) կարմիր, վաղը (ևեթ), հարյուր (հինգ):

ժզ. Փոխ (նախագահ), վեր (կենալ), ունկն (դրել), զույգ (զույգ):

ժէ. Ամեն (ինչ), վաթսուն (վեց), ոտքի (կանգնել), (հյուսիս) արևմուտք:

ժը. (Շիփ) շիտակ, տնից (տուն), (առ) ձեռն, բարձր (աշխարհիկ):

ժթ. Փոքր (ի) շատե, հին (ավուրց), տասը (քսան), ականջ (դնել):

ի. (Ի) գիտություն, պատեհ (անպատեհ), երես (սրբիչ), (ընդ) դեմ:

իա. Մեկից (մեկ), շաքար (ավազ), երամ (երամ), խորդ (ու) բորդ:

85. Ո՛ր շարքի բոլոր դեպքերում են բաղադրիչները գրվում միասին.

ա. Քառասուն (հինգ) ամյա, փայտ (փորիկ), քաղցր (մեղցր), շուրջ (պար):

բ. (Գողե) գող, (հյուսիս) արևմտյան, իննսուն (ամյա), (առ) այն:

գ. Օրն (ի) բուն, (ի) զեն, (դռնե) դուռ, (մեջ) բերում:

դ. (Սերնդե) սերունդ, քարե (դարյան), այր (ու) ծի, հաշվե (գետ):

86. Ո՛ր շարքի բոլոր դեպքերում են բաղադրիչները գրվում գծիկով.

ա. (Նետ) աղեղ, (համով) հոտով, վեր (վեր) թռչել, դեսից (դենից) խոսել:

բ. Հարավ (արևմտյան), (ահել) ջահել, հեռու (մոտիկ), ծանր (ծանր):

գ. Աչքով (ունքով), ամառ (ծմեռ), (կանաչ) կարմիր, (աղմուկ) աղաղակ:

դ. Ցուցահանդես (վաճառք), խուլ (համր), հաց (մաց), (սարե) սար:

87. Ո՛ր շարքի բոլոր դեպքերում են բառի կամ բառակապակցության բաղադրիչները գրվում անջատ (առանց գծիկի).

ա. (ի) ծնե, աման (չաման), (ց) այսօր, ձեռք (բերել):

բ. (Սարից) սար, խելք (խեքի) տալ, պատ (շար), (երկու) հարյուր:

գ. Ոչ (ոք), (մուգ) կարմիր, ծյուղից (ծյուղ), ալան (թալան):

դ. Ամեն (ոք), (ըստ) այնմ, դեմ (դիմաց), հինգ (վեցերորդ):

ՈՃ ԵՎ ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նույն լեզվով խոսող մարդիկ իրար հետ հաղորդակցվելիս գործածում են տարբեր բառեր, արտահայտություններ, նախադասությունների տարբեր ձևեր, արտահայտչական տարբեր միջոցներ: Մեզանից մեկը նախընտրում է խոսակցական բառեր, մյուսը՝ գրքային: Մեկը հաճախ է դիմում փոխաբերությունների ու համեմատությունների օգնությանը, մյուսը, ընդհակառակը, բավարարվում է պարզ նկարագրական կամ դատողական խոսքով, մեկը նախընտրում է հուզական, գեղեցիկ բառերով զարդարուն խոսքը, իսկ մյուսն ունի զուսպ ու չափավոր խոսք և այլն: Այդպիսով, գործածելով նույն լեզուն՝ ամեն մեկս մեր խոսքը կառուցում ենք լեզվական յուրահատուկ միջոցներով:

Լեզվավան միջոցների գործածության յուրահատկությունների ամբողջությունը կոչվում է ոճ:

Լեզվական յուրահատկությունների դրսևորումը կախված է մի քանի հանգամանքներից:

Գործունեության տարբեր ոլորտներում հաղորդակցվելիս նույն մարդիկ գործածում են լեզվական տարբեր միջոցներ. առօրյա հաղորդակցման ժամանակ հաճախ են դիմում կենցաղային բառերի ու արտահայտությունների, նախընտրում են խոսակցական կամ բարբառային բառեր, շարահյուսական պարզ կառույցներ և այլն: **Գեղարվեստական** գրվածքներում, հիմնականում պահպանելով գրական լեզվի կանոնները, հաճախ են դիմում պատկերավորման ու արտահայտչական միջոցների, ստեղծում են հուզական խոսք: **Վարչական-պաշտոնական** գործունեության ընթացքում թե՛ գրավոր, թե՛ բանավոր հաղորդակցման ժամանակ գործածում

ևն զուսպ ու կանոնարկված խոսք, դիմում են միօրինակ լեզվական կառույցների: **Գիտական** հաղորդակցումն իրականացվում է գրական լեզվի կանոնների շրջանակներում, լինում է տրամաբանված, առանց նկատելի հուզարտահայտչական տարրերի, աչքի է ընկնում մասնագիտական բառերի առատ գործածությամբ և այլն: Այս տարբեր իրավիճակներից ամեն մեկի դեպքում գործածվող լեզուն ունի իր առանձնահատկությունները, տարբերվում է մյուսներից թե՛ բառապաշարով, թե՛ արտահայտվելու ձևերով, թե՛ խոսքի բարդությամբ ու կանոնավորությամբ:

Գործունեության որևէ ոլորտին բնորոշ լեզվական առանձնահատկությունների ամբողջությունը կոչվում է գործառական ոճ:

Տարբերում են գործառական հինգ ոճ՝ **առօրյա-խոսակցական**, **վարչական** կամ **պաշտոնական**, **գեղարվեստական**, **գիտական** և **հրապարակախոսական**:

Նույն մարդու խոսքը կարող է տարբեր լինել՝ կախված ոչ միայն գործունեության ոլորտից, այլև **խոսքային իրադրությունից**՝ հաղորդակցվողների կազմից և փոխհարաբերությունից, հաղորդակցման նյութից և նպատակից: Ըստ այդմ՝ տարբերում են **իրադրական ոճեր**՝ հանդիսավոր, մտերմական-փառաքչական, կատակաբան, հեգնական, գռեհիկ և այլն:

Խոսքի կառուցման մեջ էական դեր են կատարում նաև այսպես կոչված **անհատական գործոնները**՝ հեղինակի անհատական հատկանիշները՝ կրթությունը, դաստիարակությունը, ծաշակը, հակումները, բնավորությունը, խառնվածքը, աշխարհայացքը, մտածելակերպը, իրականության ընկալման կերպը և այլն: Ըստ այդմ՝ տարբերում են **անհատական ոճեր**՝ խրթին, բարձր կամ վսեմ, միջին կամ խառն, պարզ կամ հասարակ, պարզունակ:

Գեղարվեստական գրականության մեջ դրսևորվում է **գրողի ոճը**, որը տվյալ-հեղինակի ոճական առանձնահատկությունների ամբողջությունն է:

Ոձի ուսումնասիրությամբ զբաղվում է լեզվաբանության այն բաժինը, որ կոչվում է ոճաբանություն:

Խոսքի ոճական տարբերությունները դրսևորվում են լեզվական տարբեր միջոցներով՝ հնչյունական, բառապաշարային, բառակազմական, ձևաբանական, շարահյուսական:

ՈՃ ԵՎ ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նույն լեզվով խոսող մարդիկ իրար հետ հաղորդակցվելիս գործածում են տարբեր բառեր, արտահայտություններ, նախադասությունների տարբեր ձևեր, արտահայտչական տարբեր միջոցներ: Մեզանից մեկը նախընտրում է խոսակցական բառեր, մյուսը՝ գրքային: Մեկը հաճախ է դիմում փոխաբերությունների ու համեմատությունների օգնությանը, մյուսը, ընդհակառակը, բավարարվում է պարզ նկարագրական կամ դատողական խոսքով, մեկը նախընտրում է հուզական, գեղեցիկ բառերով զարդարուն խոսքը, իսկ մյուսն ունի զուսպ ու չափավոր խոսք և այլն: Այդպիսով, գործածելով նույն լեզուն՝ ամեն մեկս մեր խոսքը կառուցում ենք լեզվական յուրահատուկ միջոցներով:

Լեզվական միջոցների գործածության յուրահատկությունների ամբողջությունը կոչվում է ոճ:

Լեզվական յուրահատկությունների դրսևորումը կախված է մի քանի հանգամանքներից:

Գործունեության տարբեր ոլորտներում հաղորդակցվելիս նույն մարդիկ գործածում են լեզվական տարբեր միջոցներ. առօրյա հաղորդակցման ժամանակ հաճախ են դիմում կենցաղային բառերի ու արտահայտությունների, նախընտրում են խոսակցական կամ բարբառային բառեր, շարահյուսական պարզ կառույցներ և այլն: **Գեղարվեստական** գրվածքներում, հիմնականում պահպանելով գրական լեզվի կանոնները, հաճախ են դիմում պատկերավորման ու արտահայտչական միջոցների, ստեղծում են հուզական խոսք: **Վարչական-պաշտոնական** գործունեության ընթացքում թե՛ գրավոր, թե՛ բանավոր հաղորդակցման ժամանակ գործածում

են զուսպ ու կանոնարկված խոսք, դիմում են միօրինակ լեզվական կառույցների: **Գիտական** հաղորդակցումն իրականացվում է գրական լեզվի կանոնների շրջանակներում, լինում է տրամաբանված, առանց նկատելի հուզարտահայտչական տարրերի, աչքի է ընկնում մասնագիտական բառերի առատ գործածությամբ և այլն: Այս տարբեր իրավիճակներից ամեն մեկի դեպքում գործածվող լեզուն ունի իր առանձնահատկությունները, տարբերվում է մյուսներից թե՛ բառապաշարով, թե՛ արտահայտվելու ձևերով, թե՛ խոսքի բարդությամբ ու կանոնավորությամբ:

Գործունեության որևէ ոլորտին բնորոշ լեզվական առանձնահատկությունների ամբողջությունը կոչվում է **գործառական ոճ**:

Տարբերում են գործառական հինգ ոճ՝ **առօրյա-խոսակցական, վարչական կամ պաշտոնական, գեղարվեստական, գիտական և հրապարակախոսական**:

Նույն մարդու խոսքը կարող է տարբեր լինել՝ կախված ոչ միայն գործունեության ոլորտից, այլև **խոսքային իրադրությունից**՝ հաղորդակցվողների կազմից և փոխհարաբերությունից, հաղորդակցման նյութից և նպատակից: Ըստ այդմ՝ տարբերում են **իրադրական ոճեր**՝ հանդիսավոր, մտերմական-փաղաքշական, կատակաբան, հեզնական, գռեհիկ և այլն:

Խոսքի կառուցման մեջ էական դեր են կատարում նաև այսպես կոչված **անհատական գործոնները**՝ հեղինակի անհատական հատկանիշները՝ կրթությունը, դաստիարակությունը, ճաշակը, հակումները, բնավորությունը, խառնվածքը, աշխարհայացքը, մտածելակերպը, իրականության ընկալման կերպը և այլն: Ըստ այդմ՝ տարբերում են **անհատական ոճեր**՝ խրթին, բարձր կամ վսեմ, միջին կամ խառն, պարզ կամ հասարակ, պարզունակ:

Գեղարվեստական գրականության մեջ դրսևորվում է **գրողի ոճը**, որը տվյալ հեղինակի ոճական առանձնահատկությունների ամբողջությունն է:

Ոճի ուսումնասիրությամբ զբաղվում է լեզվաբանության այն բաժինը, որ կոչվում է **ոճաբանություն**:

Խոսքի ոճական տարբերությունները դրսևորվում են լեզվական տարբեր միջոցներով՝ հնչյունական, բառապաշարային, բառակազմական, ձևաբանական, շարահյուսական:

ՀԱՅՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Խոսքում հնչյունների՝ այս կամ այն կերպ գործածությունը նաև վերաբերմունքի արտահայտման միջոց է, կատարում է ոճական-արտահայտչական կարևոր դեր:

Հեզվի հնչյունական կառուցվածքի առանձնահատկություններից են տվյալ խոսքաշարում ծայնավոր և բաղաձայն հնչյունների կիրառման հաճախականությունը, ծայնավորների բազմազանության աստիճանը, տվյալ լեզվում վանկարար հնչյունների քանակը, վանկում բաղաձայն և ծայնավոր հնչյունների հարաբերակցությունը, հնչյունների կազմությունը, դրանց արտաբերության եղանակը, լեզվի շեշտի բնույթը, առոգանությունը և այլն:

Տվյալ լեզվի բարեհնչությունը մեծ չափով պայմանավորված է ծայնավոր և բաղաձայն հնչյունների զուգորդության ներդաշնակությամբ և ծայնավորների հարստությամբ: Այդ հատկանիշով (հայերենում առկա է ծայնավորների և բաղաձայնների 30/6 հարաբերակցություն) հայերենը աշխարհի լեզուների շարքում ռուսերենի, պարսկերենի, վրացերենի և այլ լեզուների հետ գրավում է միջին դիրք՝ մի կողմից իտալերենի և ծապոներենի, մյուս կողմից՝ անգլերենի և գերմաներենի միջև:

Հնչերանգի հատկանիշներով (առոգանություն, արագություն, ելևեջումներ և այլն) նույնպես հայոց լեզուն չափավոր՝ միջին բնութագրեր ունի: Դա նշանակում է, որ հայերենը իր հնչյունական համակարգի բնույթով բարեհունչ լեզու է:

Լեզվի հնչյունական կառուցվածքի նշված առանձնահատկությունները կարող են տարբեր կերպ կիրառվել խոսքի անհատականացման՝ ոճավորման նպատակով՝ կախված հեղինակի անհատական հատկանիշներից, հեղինակային նպատակադրումներից, խոսքի գործառման ոլորտներից, իրադրությունից, խոսքի նյութից և այլն:

Խոսքի ոճավորման հնչյունական միջոցներից են **բաղաձայնույթը** (ալիտերացիա), **առձայնույթը** (ասոնանս) և **հանդը**:

Բաղաձայնային և առձայնային

Սրանք նույն հնչյունի կամ նման հնչյունների կրկնությունն են խոսքի որոշակի հատվածում: Բաղաձայնների կրկնությունը կոչվում է **բաղաձայնային**, իսկ ձայնավորներինը՝ **առձայնային**: Նման հնչյուն ստեղծվում են կատի է առնվում հնչյունական հատկանիշներով իրար մոտ հնչյունների, օրինակ՝ խուլ կամ ձայնեղ, շրթնային կամ ռնգային, նույն շարքի կամ հարևան շարքերի բաղաձայնների կրկնությունը և այլն:

Հնչյունական այս հնարքները՝ բաղաձայնային և առձայնային, առավել բնորոշ են գեղարվեստական խոսքին, մասնավորապես նրա դրսևորման չափածո տեսակին: Ավելի տարածված է **բաղաձայնային**:

Հայտնի է, որ հնչյունները առաջ են բերում որոշակի զգայական տպավորություններ, որոնք հաճախ ծնվում են ենթագիտակցորեն: Բայց կապվելով բառընտրության և խոսքի բովանդակության ինչ-ինչ կողմերին՝ հնչյունները նպաստում են ձայնապատկերի կառուցմանը, ընթերցողի ուշադրությունը հոգեբանորեն կենտրոնացնում են այս կամ այն մտածության վրա: Այսպիսի դեպքերում ասվում է, որ արտաքին հնչյունական երանգը համապատասխանեցվում է բովանդակությանը: Անշուշտ, կարելի է ենթադրել, օրինակ, որ գեղարվեստական այդպիսի միտումով է ստեղծված Դանիել Վարուժանի հետևյալ պատկերը.

Ափ մը ցորյան գըլուխդ ի վար.

Թող որ թափեմ Թոռնիկ սիրված:

Խուլ ու «փափուկ» հնչյունների կարգին դասվող **փ, թ, ց, խ** հնչյունների կուտակումը թերևս ստեղծում է ցորենի հատիկների փափուկ հոսքի զգայական տպավորություն. ավելի տեսանելի է դառնում գեղարվեստական պատկերը:

Մեկ ուրիշ դեպքում («Ցորյանի ծովեր») **հ**-երի կրկնությամբ շնչող-կենդանի հովերի գեղագիտական տպավորությունն է շեշտվում:

Հովեր կ'անցնին.

Ու ցորյաններս հուշիկ-հուշիկ կ'արթնան.

Իրենց խորքեն կը հոսի դող մ'անսահման:

Կամ՝ ծայնավորների առատությունը «Հացին երգում» բաց ու պայծառ տրամադրության երանգներ ունի: Իսկ, օրինակ, Ներսես Շնորհալու «Առավոտ լուսո» շարականում ծայնավորների կուտակումը անսովոր նվագայնություն և հանդարտ երաժշտականություն է հաղորդում խոսքին.

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա:

Միսաք Մեծարենցի «Սիրերգ» բանաստեղծության մեջ **ս** և **շ** խուլ շփականների, այլև դրանցով բաղադրված **ց** և **չ** բարդ կիսաշփականների համաչափ կուտակումը տողի կամ կից տողերի մեջ ոչ միայն ստեղծում է շրշունով ու սոսափով լեցուն ամառային գիշերվա զգայական պատկերը, այլև ընդգծում է կյանքի ու բնության վայելքի քաղցրությունը, նրբությունն ու քնքշությունը՝ խորացնելով դրանց հակադրությունը քնարական հերոսի դրամատիկ հոգեվիճակի ու մռայլ տրամադրության հետ.

Գիշերն անույշ է, գիշերն հեշտագին,
Հաշիշով օծուն ու բալասանով...
...Յնծագին գիշերն է լույս ու լուսին՝
Բայց լույսն իմ հոգվույս քիչ քիչ կը մաշի...

Նույն իրիկնամուտի՝ այս անգամ պայծառ տրամադրությամբ նկարագրությունը («Կիրակմուտք») հուշում է ծայնեղ պայթականների՝ **ծ** (<**ծ**), և ծայնավորների կուտակում՝

Կապույտ ծոպեր, ծիածան, ծըփան ծայներ, միստիք վարդ...

Միտքը բանաստեղծորեն արտահայտելը հեղինակը զուգակցում է հոգեկան վիճակների ու տրամադրությունների հետ: Ընդգծվում է խոսքի քնարական երանգը:

Բաղաձայնայթի հաջող կիրառման օրինակ է Հովհաննես Ծիրազի «Սոսին» բանաստեղծությունը, որից ներկայացնում ենք չորս տող՝

Սոտավում է ու սիրով տարն է ելնում իմ տափն,
Սոսին՝ իմ սեգ հարսի պես՝ լուսնի ոսկե կուժն ուսին,

Ու ես շորորն եմ հիշում իմ շուշանի ապրեշում,
Որ հուշ դարձել մշուշում ու ինձ դրժել, չի հիշում:

Հանգ

Հանգը բանաստեղծական տողերի նույն կամ նման հնչյունախմբերով վերջավորվելն է:

Հանգավորվել կարող են.

1. իրար հաջորդող՝ հարևան տողերը (**կից** հանգավորում), ինչպես՝

Ու լույսն անոնց, անխոս հուրի՛ դյուրական,
Հըմայագեղ ու վարսքերով **արծաթե**,
Շատըրվանին կ'իջնե գուռին մեջ **կաթե**:
(Մ. Մեծարենց)

2. մեկընդմեջ տողերը՝ առաջինը երրորդի հետ, երկրորդը՝ չորրորդի հետ (**խաչաձև** հանգավորում), ինչպես՝

Չյուն է իջնում, **կուտակվում**
Մորս վրա **վերևից**,
Ասես փետուր է **թափվում**
Հրեշտակի **թևերից**:
(Հ. Շիրազ)

3. առաջին տողը՝ չորրորդի հետ, երկրորդը՝ երրորդի հետ (**օղակաձև** հանգավորում), ինչպես՝

Իջնում է գիշերն անգութ ու մթին,
Եվ այգը քացվում դառն ու մահահոտ,
Բայց ձրկեզ հոգիս մորմոքում այս տոթ
Հավատում է դեռ քո առավոտին:
(Վ. Տերյան)

Լինում են նաև հանգավորման այլ բանաձևեր:

Հանգը սերտ միասնություն է ստեղծում տողերի միջև, ձևավորում է ռիթմական միավորներ (բանատող, բանատուն), շեշտված երաժշտականություն ու բարեհնչություն է հաղորդում խոսքին:

Վարժություններ

88. Գործառական ո՞ր ոճին են բնորոշ.

ա. բաղաձայնայնությամբ և առձայնայնությամբ.

1. վարչական
2. հրապարակախոսական
3. գեղարվեստական
4. գիտական

բ. հանգը.

1. առօրյա-խոսակցական
2. գեղարվեստական
3. գիտական
4. հրապարակախոսական

89. Ո՞ր պնդումը ճիշտ չէ բաղաձայնայնության վերաբերյալ.

1. Բնորոշ չէ չափածո խոսքին:
2. Ստեղծում է բարեհնչություն և նվագայնություն:
3. Նպաստում է ծայնապատկերի կառուցմանը:
4. Ստեղծվում է ոչ միայն նույն բաղաձայնի, այլև տարբեր բաղաձայն հնչյունների կրկնությամբ:

90. Ո՞ր օրինակում բաղաձայնայնությամբ կա.

1. Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...
2. Համբույրիդ, գիշեր, պատուհանս է բաց...
3. Ծաղիկ, կանաչ, թարմ հյուսեր,
բախտի կարկաչ ու հույսեր...
4. Դուն հունձք հարուստ, և դուն հնձան հրաշեկ:

91. Ո՞ր օրինակում բաղաձայնայնությամբ չկա.

ա.

1. Առուները մամուռներու մետաքսին մեջեն մանկահասակ
մերկություններու նման կը հոսին...
2. Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրիկ,

Վե՛րջ քու սերին, քու յարին...

3. Բախտի խորհուրդով թողինք–հեռացանք,
Եվ հեռանալով այնքան մոտեցանք,
Որ բաժանվելու հնար չմնաց:
4. Դուն բեղուն բարիք, սրտի աղբյուր,
Գուներու գանձ, գթությանց գահ:

Բ.

1. Շուշանն շողեր հովտին, շողշողեր դեմ արեգականն,
...Շուշանն շաղով լցեալ, շող շաղով և շաղ մարգարտով:
2. Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ ծաւալանայր յառաւօտուն...
3. Ծնծղաներու պես ցնծուն
Ծափ կը զարնեն իմ հուշեր:
4. Երբ հանկարծ այգուց դու ելար իմ դեմ
Ոտքերով բորիկ ու ցողաշաղախ:

Գ.

1. Սիրեցի յարըս տարան,
Յարա տըվին ու տարան...
2. Դուն տարակույսին և տարտամին տիրապետ
Դուն տարօրինակ և տարագիծ գմբեթ...
3. Դուն բարբառի արարիչ, Բանի իշխան,
Դուն անբավ բավիղ տևողության...
4. Ձմռան մի գիշեր կար մի հարսանիք,
Հրձվում էր անզուսպ ամբոխը գյուղի...

92. Օրինակներից քանիսում առձայնույթ կա.

1. Սա իրիկունն ըլլայի ես,
Համայնակալն, չքնաղ, քաղցրիկ, լուսագես...
2. Տեր իմ, տեր,
...Անտանելի, անմեծենալի, անըմբռնելի,
Անզննելի, անշոշափելի, անորոնելի...
3. Խոր սուզվեցին ակն աղբյուրի,
Մտան կաղնին հաստաբուն,
Ու լեռնային աղբյուրների
Ալիքները պաղպաջուն:

4. Արցունքով, արցունքով լսեցի, որ ավերակ առ ավերակ
Քու լայնանիստ պատերդ իրարու կործանեցին...

1. մեկում
2. երկուսում
3. երեքում
4. բոլորում

93. Արտահայտչական ինչ միջոց է գործածված.

Ինչը կհաղթի կյանքում հերոսին,

Թե չլինին

Կինն ու գինին:

1. հանգ
2. բաղաձայնույթ
3. նմանաձայնություն
4. աստիճանավորում

94. Ո՞րը գեղարվեստական չափածոյի բնորոշ հատկանիշը չէ.

1. հանգ
2. բաղաձայնույթ
3. պատկերավորություն
4. միօրինակություն

95. Հանգավորման ո՞ր տեսակն է օգտագործված.

Կամ կը քշեմ վաղվան հույսով՝

Արևն առած ծակտիս վրա:

Հորիզոնը՝ անհուն լույսով,

Իմ աչքերուս մեջ կը լողա:

1. կից
2. խաչաձև
3. օղակաձև
4. մոտավոր

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Քանի՞ ձայնավոր հնչյուն կա հայերենում.

1. չորս
2. վեց
3. յոթ
4. ութ

2. Ո՞ր բառի մեջ են տառերը և հնչյունները քանակով իրար համապատասխանում.

- ա. 1. անգղ, 2. որոշել, 3. հարևան, 4. նայել
բ. 1. եղնիկ, 2. որակ, 3. համեստ, 4. նվագ
գ. 1. արև, 2. գնացք, 3. կրկես, 4. վագրենի
դ. 1. բարձրանալ, 2. նրբաոճ, 3. մթնկա, 4. հեք

3. Ո՞ր բառի մեջ հինգ հնչյուն կա.

- ա. 1. Նաիրի, 2. դուստր, 3. ոստրե, 4. վտանգ
բ. 1. վարակ, 2. բույր, 3. նիրհ, 4. մտրակ
գ. 1. երաշտ, 2. որակ, 3. հարս, 4. արև
դ. 1. մկրատ, 2. երագ, 3. թանձր, 4. կարգ

4. Ո՞րը ձայնավոր հնչյուն նշանակող տառ չէ.

- ա. 1. օ, 2. ո, 3. հ, 4. ը
բ. 1. օ, 2. է, 3. ը, 4. յ
գ. 1. ու, 2. ե, 3. յ, 4. ո

5. Ո՞ր բառը ձայնավոր հնչյունով չի սկսվում.

ա. 1. երազ, 2. օրինակ, 3. ընկեր, 4. էակ

բ. 1. ողորկ, 2. ովքեր, 3. օղակ, 4. ուղևոր

գ. 1. ունակ, 2. ես, 3. ով, 4. եմ

6. Քանի՞ բաղաձայն հնչյուն կա տրված բառում.

ա. ամենաներևելի.

1. հինգ, 2. վեց, 3. յոթ, 4. ութ

բ. արևմուտք.

1. երեք, 2. չորս, 3. հինգ, 4. վեց

գ. ամենաոորոշակի.

1. չորս, 2. հինգ, 3. վեց, 4. յոթ

7. Նշե՛ք այն բառը, որի մեջ թավ գրված տառի գրությունն ու արտասանությունը համապատասխանում են.

ա. համբույր, հոգնել, նրբերանգ, թակարդ

բ. մակարդակ, որդեսեր, վարդաստան, քրդոտ

գ. դեղձենի, ողբերգակ, վարկաբեկել, միտքդ

դ. աղբյուր, նվագարան, համբերել, հագուստ

ե. խորանարդ, ողբաձայն, մզանալ, արդյունք

զ. ջարդ, Թորգոմ, լյարդ, ժողովուրդ

է. անհարկի, բարդ, զերդ, ապաշնորհ

ը. կարգադրել, լողորդ, երեքշաբթի, արձանագրել

թ. արդարամիտ, Սերոբ, համանվագ, Նվարդ

ժ. դեղձաչիր, վերջ, զուգակցել, դարձ

ժա. երգիչ, պարգևատրել, մարագ, թագադրել

ժբ. որդենել, զուգահեռանիստ, մարգարե, վարդապետ

ժգ. օրակարգ, զուգահեռ, ողբերգություն, նրբիրան

ժդ. հարդ, խնդիր, անդադար, դրդապատճառ

ժե. իբրև, խլուրդ, վարձակ, անօգնական

ժզ. ընդամենը, փորձարկում, թարգմանիչ, գմբեթարդ

8. Նշեք այն բառը կամ բառաձևը, որի մեջ թավ գրված է-ն արտասանվում է յէ.

- ա. գերեվարել, եվրոպա, աներկյուղ, այժմեական
- բ. համաերևանյան, անենթակա, լուսնեղջյուր, անելանելի
- գ. կիսաեփ, զուգերգ, վերելք, տասներեք
- դ. համերգային, պարզերես, երկերեսանի, համերկրացի
- ե. ամենաերևելի, մակերես, պարերգ, մայթեզր
- զ. պարերգ, կիսաեզրափակիչ, աներևութանալ, անենթակա
- է. ծովեզր, խուռներամ, հազարերանգ, ամենաերկար
- ը. լայներախ, երթևեկ, վերաեռակցել, ծերմակերես
- թ. ամենաերանելի, հովեկ, թերեփ, վերելակ
- ժ. գրում եմ, զարկերակ, մեներգ, վրաերթ

9. Նշեք այն բառաշարքը, որի բոլոր բառերում կամ բառաձևերում թավ գրված է-ն արտասանվում է է.

- ա. մեներգ, ամենաերկյուղալի, խաչերկաթ, արտերկիր
- բ. տասներեք, նրբերշիկ, ենթաերանգ, գերերկար
- գ. նստել ես, երկեղջյուր, համերկրային, ծայներիզ
- դ. աներևակայելի, հիսուներկու, կիսաերջանիկ, ուղերթ
- ե. աներես, անեղծ, ապերջանիկ, համաեվրոպական

10. Նշեք այն բառը կամ բառաձևը, որի մեջ թավ գրված ո-ն արտասանվում է վօ.

- ա. անորոշ, նրբաոճ, բազմոտանի, արջորս
- բ. բարձրորակ, արջաորս, բնորոշ, հայորդի
- գ. մթնոլորտ, գանգոսկր, ամենաողորկ, դիմորոշ
- դ. կարծրորակ, ովքեր, ամենաորակյալ, եղբորորդի
- ե. չափորոշիչ, ենթաոճ, անողորմ, բնորոգուհի

11. Նշեք այն բառաշարքը, որում գաղտնավանկ ունեցող բառ կա.

1.

- ա. կասեցնել, խոսեցնել, դեղնավուն, հատընտիր
- բ. մոտեցնել, հանձնարարություն, անձրևաբեր, խամբել

գ. մասրենի, դուստր, ակնահաճո, մատնաչափիկ
դ. հանրային, կարծրանալ, վայրընթաց, վարձկան

2.

ա. անձնական, հատընտիր, նորընծա, տարրական
բ. անդորր, մատնացույց, ուղղահայաց, մակընթացություն
գ. գործնական, սխալ, սակրավոր, անձնական
դ. ակնոց, չխոսկան, սանրել, եզրագիծ

12. Նշե՛ք այն բառը, որի մեջ **բ**-ն արտասանվում է *փ*.

ա. Արգար, բարբաջանք, նրբանկատ, ողբանվագ
բ. բերրի, վարկաբեկել, բամբ, սրբիչ
գ. որբևայրի, ամբարտակ, թմբուկ, արամբի
դ. աբբա, աբեթ, իբրև, աշխարհաբար
ե. պատահաբար, երեքշաբթի, Աբել, Չենոբ
զ. Հաբեթ, Ռուբեն, աբխազ, լրաբեր
է. ամբողջ, բարեբեր, ուրբաթ, Աբրահամ
ը. բամբիչ, բորբ, խաբել, ըմբիշ
թ. արբանյակ, որբուկ, ամբրոս, բամբիռ

13. Նշե՛ք այն բառը, որի մեջ **բ**-ն արտասանվում է *բ*.

ա. համբերել, սրբել, ամբողջ, հարբել
բ. աղբահավաք, ըմբոստանալ, դարբին, սրբազան
գ. նրբանկատ, որբանոց, աղբյուր, բորբոսնել
դ. համբույր, սրբագրիչ, լրբություն, գինեարբ

14. Նշե՛ք այն բառը, որի մեջ **գ**-ն արտասանվում է *ք*.

ա. արգելք, անարգ, հագենալ, Սարգիս
բ. հագնվել, արագ, էներգիա, երկրպագու
գ. արգահատանք, անարգանք, արգանդ, ուրագ
դ. արգասիք, օրակարգ, զարգանալ, մարգ
ե. ողբերգակ, ֆուրգոն, երգել, նարգես
զ. մարգարին, ողբերգու, բուրգ, ավագ
է. քնարերգակ, ներգոյական, անթարգմանելի, գորգ
ը. բարգավաճել, Թորգոմ, մարգագետին, կարգադրել

թ. հարգել, ալգորիթմ, համերգ, երգացանկ
 Ժ. պարզև, գորգ, գիրգ, շագանակ
 Ժա. ճառագայթ, հագուրդ, ճրագու, սիգապանծ
 Ժք. նվագարան, կարագ, զուգահեռ, արեգակ
 Ժգ. զիգզագ, մեգ, թագադրում, միանգամյա

15. Նշե՛ք այն բառը, որի մեջ գ–ն արտասանվում է գ.

ա. ագահ, նորոգել, շոգ, օգուտ
 բ. սգակից, որոգայթ, ձգձգել, զագս
 գ. ուրագ, զիգզագ, ոգի, հոգեհան
 դ. ձգնավոր, զուգել, հոգատար, օգոստոս
 ե. տեգր, հոգևորական, անարգել, սուգ

16. Նշե՛ք այն բառը կամ բառաձևը, որի մեջ դ–ն արտասանվում է դ.

ա. Թադևոս, հաղորդություն, արդարամիտ, մնացորդ
 բ. արդար, արդյունք, բարդ, խարդախ
 գ. բարդոց, խորդենի, բերդապահ, բրդել
 դ. բրդում, բուրդ, ջրհորդան, օդանցք
 ե. երդիկ, երդում, խառնուրդ, հորդառատ
 զ. լյարդ, հրդեհ, զերդ, երդմնագանց
 է. սրդողել, խորդութորդ, կարդալ, արդյունաբերություն
 ը. հաղորդել, նյարդ, ավանգարդ, լողորդ
 թ. որդ, որդի, ջարդել, արդիական
 Ժ. Միհրդատ, վարդ, վարդապետ, բրդատու
 Ժա. վրդովել, օրիորդ, խարդավանք, առաջնորդ
 Ժք. հայացքդ, Ժողովուրդ, հաջորդ, հունդ
 Ժգ. խորհուրդ, գնորդ, մարդ, քուրդ
 Ժդ. Վարդգես, Վարդուհի, Տրդատ, Ջարդարյան
 Ժե. Նավասարդյան, անհաղորդ, որդի, զարդատուի
 Ժզ. հասակդ, երիտասարդական, բերդակալ, բարդություն
 Ժէ. վրդովել, լերդանալ, թակարդ, կարդալ
 Ժը. Վարդան, հարդարել, Նվարդ, ծախորդ
 Ժթ. տմարդ, մածնաթրդոշ, անվրդով, մակարդակ

17. Նշե՛ք այն բառը կամ բառաձևը, որի մեջ դ-ն արտասանվում է ք.

- ա. սարդ, խեղդել, խլուրդ, քառորդ
- բ. վարորդ, սերունդ, Վեդի, գիրքդ
- գ. ապարդյուն, մակարդակ, դրդել, խելքդ
- դ. խոսքդ, անդադար, խորդենի, սպրդել
- ե. նախորդ, կախարդ, արդ (այժմ), հարդ
- զ. բաղդատել, ավանդ, Բաղդադ, երկրորդ
- է. լորդ, բնորդ, հորդ, ակորդեոն
- ը. Նավասարդ, մակարդվել, հորդորել, Վարդևան
- թ. սարավանդ, հանդամաս, խարդավանք, Սարդ

18. Նշե՛ք այն բառը կամ բառաձևը, որի մեջ ջ-ն արտասանվում է չ.

- ա. ստեղծ, ողջամիտ, հաղարջենի, մունջ
- բ. դողդոջ, մարմաջ, առջև, աջակցել
- գ. աջակողմյան, ընդմիջում, դաջել, հաջող
- դ. անուրջ, լուրջ, կամուրջ, թրջոց
- ե. մնջախաղ, մրմունջ, խառնիժաղանջ, ոջիլ

19. Նշե՛ք այն բառը կամ բառաձևը, որի մեջ ջ-ն արտասանվում է ջ.

- ա. ամբողջ, հաջողություն, արջուկ, վայրէջք
- բ. ողջ, առաջնորդ, մեջք, միջանցք
- գ. միջոց, աջլիկ, քաջք, առաջնորդ
- դ. մեջ, առաջիկա, խոխոջյուն, առաջարկ
- ե. թրջել, վերջ, արջածառ, գաղջ

20. Նշե՛ք այն բառը, որի մեջ ձ-ն արտասանվում է ձ.

- ա. արձան, վարձ, խուրձ, դեղձ
- բ. արձակ, բարձ, դարձնել, արձագանք
- գ. դարձվածք, արվարձան, բարձունք, վերադարձ
- դ. իրադարձություն, դերձակ, խրձել, հորձանք
- ե. հանդերձանք, արձանագործ, որձաքար, օրավարձ

գ. վարձակ, փորձ, արձանագրություն, համբարձվել
 է. որձ, բարձրաշխարհիկ, օձիք, հարձակվել
 ը. ուղերձ, դեղձանիկ, հանդերձ, օձանման

21. Նշեք այն բառը, որի մեջ ձ-ն արտասանվում է ց.

ա. ատաղձ, փորձանք, հորձանուտ, մաղձ
 բ. լորձ, հերձել, դեղձենի, ըղձական
 գ. մերձենալ, իրադարձություն, ծորձ, գուղձ
 դ. անձուկ, անձավ, ատաղձագործ, դերձան

22. Նշեք այն բառը, որի մեջ դ-ն արտասանվում է դ.

ա. կաղկանձ, բողբոջ, կեղտոտ, կողք
 բ. հաղթանակ, ճեղքել, մաղթանք, մախաղ
 գ. մեղք, շաղկապ, շղթա, կուղբ
 դ. ողկույզ, շեղբ, կողպեք, զեղչ
 ե. քաղց, մեղմ, անհաղթ, թուղթ

23. Նշեք այն բառը, որի մեջ դ-ն արտասանվում է խ.

ա. գաղթել, աղյուսակ, մախաղ, մառախուղ
 բ. սաղավարտ, աղախին, գրող, շաղգամ
 գ. բաղձանք, աղջնակ, հեղձուցիչ, մղձավանջ
 դ. մաղձ, բղջախոհ, իղձ, փեղկ
 ե. աղբաման, աղցան, եղջյուր, աղեկտուր

24. Նշեք այն բառը, որի թավ գրված հ-ն չի արտասանվում.

ա. ապաշնորհ, աշխարհայացք, խորհել, միրհավ
 բ. ապահարզան, դրամաշնորհ, քաղիան, միհատորյակ
 գ. անհետևանք, Միհրան, մեծախորհուրդ, լեհական
 դ. հեղիեղուկ, հայիոյել, ժպիրի, խոնարհաբար
 ե. արհավիրք, համաշխարհային, ներհակ, արիեստ
 գ. խոնարհ, նիրհել, ընդհակառակը, Ջարեհ
 է. ընդհանուր, նժդեհ, արհամարհել, հուրհրատել
 ը. վստահ, ընդհարում, նախագահ, Հովհաննես
 թ. աշխարհահռչակ, արիեստ, խոհ, ագահ
 ժ. բարեշնորհ, զրահ, թոհուրոհ, բահ

25. Նշե՛ք այն բառը, որի մեջ Վ-ն արտասանվում է ֆ.

- ա. հարավային, զավթել, թավշյա, հոսորով
- բ. նավթ, աղվան, հազիվ, նզովել
- գ. ավտոմեքենա, փլավ, որովհետև, հովտաշուշան
- դ. սերկևիլ, ավտոշարասյուն, ավշահանգույց

26. Ո՛ր շարքի բոլոր բառերում է Վ-ն արտասանվում վ.

- ա. Աղվանք, առվակ, ավտովարորդ, եթովպիա
- բ. թափվել, հարավցի, խռովք, հարկավ
- գ. տավղահար, սակավ, օվկիանոս, ավտոմոբիլ
- դ. զավթել, հավք, հազիվ, թանգիվ

27. Ո՛ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում է.

1.

- ա. մանր..., միջօր..., ան...անալ, այժմ...ական
- բ. Սևանհ...կ, ծով...զր, հր...շ, գոմ...շ
- գ. նախօր..., մանր...աբան, հն...ագետ, ան...
- դ. ջր...ջք, ամենա...ական, դող...րոցք, երբև...

2.

- ա. ան...րկբա, առ...ջ. բազկ...րակ, թե չ...
- բ. կարծես թ..., էլեկտրա...ներգիա, երբևից..., լայն...կրան
- գ. չ...ն, ...տել, ինչև..., Քանաքեռի...կ
- դ. չ...ինք. վայր...ջք, զոր...ջք, մանր...ակիր

28. Ո՛ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է բաց թողած տեղում գրվում է.

1.

- ա. ինչևից..., եղեր...րգ, նախօր..., աշտ...
- բ. ովև..., ցանցկ...ն, առօր...ական, ան...ական
- գ. հ...նք, գ...րբնական, մանր... վայրկ...նական
- դ. ընտան...կան, լուսն...ջք, ոստր..., ջ...կ

2.

- ա. հազիվ թ..., չ...իր, հով...կ, գետ...զր
- բ. պաշտոն...ական, ցայգ...րգ, կ...տեն, լայն...զր

գ. նոր...կ, րոպ...ական, ումնից..., ոչ թ...
դ. թեր...փ, ա...կ, ան...րկյուղ, երկր...երկիր

29. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում ը.

1.

ա. ակ...նդետ, մթ...նկա, հատ...նտիր, վեր...նթաց
բ. համ...նկնել, ան...նտել, գործ...նկեր, առ...նչվել
գ. չ...նկճել, հատ...նտիր, ճեպ...նթաց, քար...նկեց
դ. գիրկ...նդխառն, մակ...նթացություն, անակ...նկալ, վեր...նթաց

2.

ա. ան...նթեռնելի, համր...նթաց, չ...մբռնել, հոտ...նկայս
բ. նետ...նկեց, խաղ...նկեր, առ...նթեր, կ...նթերցի
գ. որոտ...նդոստ, լուս...նկա, կ...նտելանա, չ...նտրել
դ. երկ...նչել, նոր...նտիր, դյուր...նթեռնելի, ան...նդունակ

30. Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է բաց թողած տեղում գրվում ո.

1.

ա. տար...րինակ, մտ...րել, տափ...ղակ, գն...ղունակ
բ. հմտ...րեն, տն...րեն, հանր...գուտ, երիզ...րդ
գ. արագ...րեն, մեղմօր...ր, բն...րդուհի, ...թել
դ. բար...րություն, ...վքեր, գ...դել, վառ...դ

2.

ա. Աման...ր, այդ...րինակ, անդ...րություն, տար...ղունակ
բ. ան...ղոք, ան...րակ, ան...գուտ, արագ...տն
գ. հ...գուղ, հ...դս ցնդել, վաղ...րդայն, զգուշ...րեն
դ. օր...րել, ավ...րակ, ան...թ, սառն...րակ

31. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում օ.

1.

ա. թիկն...թոց, ոսկեզ...ծ, ան...րսալի, ամեն...րյա
բ. աման...րյա, հնգ...րյակ, հանապազ...րդ, եռ...րյա
գ. սալոր...դի, ականջ...դ, նախ...րե, հանապազ...րյա
դ. չար...րակ, տրտմ...րոր, ամենա...գևորիչ, ջր...րինեք

2.

ա. արծաթագ...ծ, բն...րրան, գիշերուզ...ր, ընդ...րինակել
 բ. միջ...րեական, յուր...րինակ, նոր...րյա, արջա...րս
 գ. հակա...դային, ան...թևան, առ...րյա, ...վքեր
 դ. փոխ...գնություն, օրեց...ր, ապ...րինի, պարզ...րոշ

32. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում յա.

1.

ա. հեք...աթ, մատ...ան, պատ...ն, գործուն...
 բ. առօր..., շաբաթօր...կ, հարսն...կ, Արաքս...
 գ. միլ...րդ, Բեն...մին, երմոն..., Լ...նա
 դ. Մար...ամ, այծ...մ, Լ...րդ, լռել...յն

2.

ա. ակադեմ..., Ամալ..., այծ...մ, Աս...(տեղանուն)
 բ. բար...ցակամ, դաստ...րակ, եղ...մ, Երեմ...
 գ. ման...կ, միմ...նց, Վոլոդ..., Աս... (անձնանուն)
 դ. էլ..., Լյուս..., պատան...կ, Սոֆ... (տեղանուն)

33. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում յա.

1.

ա. Սիր..., կղզ...կ, եղ..., Լիլ...
 բ. Արաքս..., Սուք...ս, հր..., մատ...ն
 գ. խավ...ր, Անդր...ս, Ռումին..., Իռլանդ...
 դ. հեք...թ, Կիլիկ..., Անան..., փաս...ն

2.

ա. Վիկտոր...(տեղանուն), էքսկուրս..., Հրաչ..., Մար...նա
 բ. կր..., մում..., Շվեյցար..., օվկ...նոս
 գ. միլ...րդավոր, միմ...յն, Ադր...տիկ ծով, մարմար...
 դ. Արուս...կ, Օֆել..., իշ...ս, Բյուզանդ...

34. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում յո.

ա. ռադ..., արդ...ք, Նապոլ...ն, Հորաց...
 բ. բրաթ...ն, Սրապ...ն, ամբ...ն, միլ...ն
 գ. քամել...ն, օր...րդ, չեմպ...ն, քսան...թ
 դ. ստադ...ն, մար...նետ, ընտան...ք, տրիլ...ն

35. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում եռա.

- ա. առօր...կան, հր...կան, այժմ...կան, միջօր...կան
բ. ընտան...կան, պատան...կան, հն...քան, քվ...տուփ
գ. Անդր...ս, մանր...բան, Կոր..., իդ...լ
դ. միամս...կ, մ...սին, դաստ...րակ, քր...կան

36. Տրված բառերից քանիսն ունենում են բաց թողած տեղում երկհնչյուն կա.

ա. Գա...սոն, դաշ...նահարել, աներև...թանալ, անզգ...շաքար, ն...իրյան, ուխտադր...ծ, ան...շ, քնք...շ, զգ...շ, հոգեբ...ծ.

- 1) երկուսում
- 2) երեքում
- 3) հինգում
- 4) բոլորում

բ. Գ...ժկան, աշխ...ծ, բ...ժակ, պատան...կ, լռել...յն, առերև...թ, աղյուս...կ, հա...լի, մեղվաբ...ծ, հա...ցակարգ.

- 1) հինգում
- 2) վեցում
- 3) յոթում
- 4) բոլորում

37. Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է բաց թողած տեղում գրվում յ.

- ա. ժողովածու...ում, հարսնացու...ի, երեկո...ի, Նա...իրի
բ. երեխա...ի, գնե...ի, պահածո...ի, կատարածու...ի
գ. Հռիփսիմե...ի, Սամբրե...ան, հա...ելի, վա...ելել
դ. նա...իր, թե...ել, Անդրե...ի, Թեքե...ան

38. Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում բաց թողած տեղում չի գրվում յ.

1.

- ա. վիլա...եթ, պայուս...ակ, վա...ելուչ, սկեսրա...ր
բ. վա...րկյան, խոխոջ...ուն (ած.), աղյուս...ակ, ղուպե...ական
գ. զգու...շավոր, քնքու...շ, մարգարե...անալ, մի...ակ
դ. լեզե...ոն, նա...իրյան, մի...այնակ, Միքա...ել

2.

ա. խաբերա...ություն, շառաչ...ուն (գոյ.), արքա...որդի, վաշխառու...ից
 բ. ձի...եր, զրու...ցել, խոխոջ...ունով, հոգեր...ծ
 գ. Կարինե...ի, համբու...րել, միջօրե...ական, Քրիստինե...ով
 դ. ջղա...ին, Իսրա...ել, հա...եցակարգ, հեռակա...ել

3.

ա. Անի...ի, աշխու...ծ, ձի...ավոր, շրջագա...ել
 բ. աշխու...ծանալ, զգու...շավոր, հմա...ել, գա...խոն
 գ. անբարեհամբու...ր, խարտ...աշ, Ռաֆա...ելի, հարյուր...ակ
 դ. շահու...թաբեր, բու...ի, դաշու...նանման, տի...եզերք

39. Ո՛ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում բ.

1.

ա. համ...երել, անխա..., համ...ակ, ջրար...ի
 բ. որ...ուկ, թմ...իր, ձեր...ակալել, բամ...ել
 գ. սմ...ուկ, լիր..., խա...երա, խարխա...ել
 դ. ա...խազ, եր...ներանգ, նր...անցք, թմ...լիկ

2.

ա. նր...ակազմ, շամ...ուտ, վիրա..., շեղ...
 բ. անխա... Գա...րիել, գրա...ար, դար...ին
 գ. անխա...ան, ող...աճայն, հուսախա... բոր...
 դ. Համ...արծումյան, դա...նեպսակ, ող...երգակ, հար...ուխ

40. Ո՛ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում ա.

1.

ա. կա...կ...ել, թ...րտալ, ոս... դար...աս
 բ. ա...սե, կեր...ար, լամ..., ...ա...ակ
 գ. խո...ան, կա...ույր, հ...անցիկ, ծ...տուն
 դ. Ծո...ք, հղ...անալ, ոսկեծո..., ա...շել

2.

ա. քարակո..., հենացու..., սե...-սև, վիրա...
 բ. սե...աձև, սե...ուհ, ս...րդել, հա...շտապ
 գ. ա...ուխտ, ս...րթնել, հա...ճեպ, ծո...ավոր
 դ. ծ...տուն, աղ...յուր, խո... ա...արոշ

41. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում *փ*.

- ա. ամրակո... ..ա...ագել, խարխա...ել, կիսախու...
- բ. երկնահու..., թ...րտալ, թ...ուտ, եր...նազարդ
- գ. ծամ...րուկ, դե...-դեղին, հա...ծեպ, հա...շտակել
- դ. ընդիու..., դար...ին, դա...նեվարդ, թար...

42. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում *գ*.

1.

- ա. ար...ասիք, ար...ահատանք, գր...ամոլ, վարուն...
- բ. բա...ոսուհի, դա...անակ, շա...անակ, ն...ույր
- գ. զի...զա..., ծա...ծ...ել, հա...ա..., անհար...ի
- դ. թա...ուհի, ար...ելք, սայթա...ել, ծիր...

2.

- ա. սե..., վար...ուն, ուրա... մարա...
- բ. օծի... դրասան..., երկարուծի...
- գ. փոքրո...ի, ս...ավոր, ծե..., բարվո...ել
- դ. երկրպա...ու, զու...ադիպել, գո...նոց, արտասու...

43. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում *կ*.

- ա. քաշքշու..., կոճ...ամ, մածու... սրտմաշու... (ած.)
- բ. մեղ... գործել, քողտի..., վարա...իչ, խո...ալ
- գ. հղ...ել, վար...անիշ, մակույ..., թան...ագին
- դ. շն...շն...ան, նախ...ին, ծե...ծե...ուն, անսայթա...

44. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում *ք*.

1.

- ա. սահան..., մո...ական, մղ...տալ, սայթա...ել
- բ. կուռ..., հեն..., հան..., մտմտու...
- գ. լեր..., պնա...ալեզ, մա...աղել, մեղ... (թուլամորթ)
- դ. մանրու..., ճ...վել, համա... ճա...ել

2.

- ա. ծեծկռտու..., քաշքշու..., ա...ցան, է...ուց
- բ. մտմտու..., անհար...ի, օծի..., կմախ...

գ. վարտի... վար...աբեկել, երախայրի..., լից...ավորել
դ. աղորի... տրտմաշու... դիցու... դողերոց

45. Ո՛ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում դ.

1.

ա. Վար...իթեր, երրոր... օ...նան, հար...արել
բ. խորանար..., զվար..., խոր...ուբոր..., հոր...ահոս
գ. լյար... լաջվար... գմբեթար..., դ...ում
դ. գր...նակ, դր...ել, վաղոր...այն, նյար...

2.

ա. Սե...րակ, որ...նել, նախոր... զար...արել
բ. թակար... կախար... հոր...որել, գիշերօ...իկ
գ. պակասուր... կոկոր..., ծղրի..., խա...արել
դ. վառո..., շքեր... գ...ակ, ըն...ամենը

46. Ո՛ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում տ.

ա. գաղ...օջախ, գաղ...ագողի, առվույ... աղո...ք
բ. սաղավար..., առհավա...չյա, ծնունդ... (քո ծնունդը), հավա...ք
գ. խր...նել, խր...վիլակ, հոխոր...ալ, այ...պես
դ. պարար... մանրակրկի..., ականակի..., քր...նաջան

47. Ո՛ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում թ.

ա. հար...ակ, խոր...ություն, զար...ուղի, զվար...
բ. բր...բր...ել, կար..., խայ...ել, վր...ովել
գ. լուր... սաղար...ախիտ, քր...մնջուն, հակին...
դ. պար...և, որ...նած, որ...ատունկ, խր...ին

48. Ո՛ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում ծ.

1.

ա. կաղկան...ել, որ...կալ, հեղ...ուցիչ, մաղ...ոտ
բ. գուղ..., բաղ...անք, գլուխկոն...ի, հն...ան
գ. պախուր..., որ...աքար, ատաղ..., փղ...կալ
դ. վար...ակ, դեր...ակ, բար...իթողի, հեր...ել

2.

ա. օ...անման, հան...նել, դար..., տր...ակ
բ. դեղ...անիկ, ապաթար... հանդեր...ապահ, սան...արծակ
գ. ատաղ...ագործ, ամբար...իչ, ար...ակուրդ, քուր...
դ. հոր...անուտ, երկնաբեր... վր...ին, մր...ամարտ

49. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում ծ.

ա. եղ...ել, կ...կտուր, կայ...կլտալ, մտա...ածին
բ. կուր...ք, ստացվա...ք, լ...կան, ար...նապակի
գ. կեղ...ամ, կո...կել, հե...ե...ալ, ցն...ել
դ. հասարակա...ային, ծրագալույ... անե...ք, ծվա...եղ

50. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում ց.

ա. հիա...ք, կ...կվել, ասացվա...ք, հուն...ել
բ. թյուրիմա...ություն, երկյուղա...ություն, աղ...ան, խե...եգործ
գ. ան...կալի, կաթնահիուն... կ...ակառույց, լացուկո...
դ. այ...եվծար, հանդիպակա..., լվա...ք, նիստուկա...

51. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում ջ.

ա. գաղ... մար...ան, ո...իլ, քուր...
բ. ստեր... մր...յուն, հաղար..., գա...ա...
գ. լա...վարդ, շեղ..., քար...իկ, հոր...որ...ել
դ. գո...ի, ա...համբույր, զի...ել, թր...ել

52. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում ձ.

ա. կապար..., պ...րանք, ա...պարար, ակնակապի...
բ. պ...նանք, կո...կել, զեղ...ել, բաղար...
գ. խո...կոր, պարկու..., ծխամոր..., վա...կատուն
դ. ծան... ետրի...աբար, շի...ուկ, կա...առ

53. Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում չ.

ա. չղ...իկ, մա...կալ, որ..., զղ...ալ
բ. հար..., փար..., դար...ին, ստեր...
գ. ուռ...անալ, ի հե...ուկս, կառ...ել, ծո...ք
դ. զեղ...ել, անա...առ, պ...րատյաց, փախ...ել

54. Ո՛ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում դ.

1.

ա. ա...քատ, փե...կ, սանդու...ք, հ...փանալ

բ. լ...պոր, դժո...ք, հ...կել, սե...մել

գ. հա...ճապակի, գա...ջ, գա...թօջախ, երկնամու...

դ. բա...ճալի, բո...կ, փո...ք, տա...տակ

2.

ա. ո...կույզ, հա...թել, հ...կաթուղթ, մա...աղ

բ. գա...տնի, թ...կի, փայծա..., կո...պեք

գ. փո...ք, մ...կտալ, ջրմու..., քա...հան

դ. կթ...ա, նա...քան, ա...ճատել, քա...ցկեղ

55. Ո՛ր շարքի բոլոր բառերում է բաց թողած տեղում գրվում /ս/.

ա. լա...տ, ու...տատեղի, Ջավա...ք, կ...տար

բ. կմա...ք, ա...տորոշել, ա...տեղություն, ա...տածին

գ. ցողաթաթա..., կո...ք, թա...տ, թու...թ

